20047

372
О-89

1932

2010

2002

Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏԻ ՈՒՍ.. ՄԵԹՈԴԱԿԱՆ ՍԵԿՏՈՐ

372
Ծ-89

ՆԱԽԱԳԻԾ

Ծ Ր Ա Գ Ր Ն Ե Ր

ՓԱԲԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ 7-ԱՄՅԱԿԻ ՍՏՈՐԻՆ ԽՄԲԵՐԻ
ՅԵՎ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

(1—4 ԽՈՒՄԲ)

372
Ծ-89

1932
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
«ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ»

Այս հրատարակության մեջ սոսկ ծրագրերն են: Մեթոդական բացատրություններ տեղավորված չեն հետևյալ պատճառով.

1) Անհրաժեշտ է, վորքան կարելի յե շուտ ծրագրերը ուսուցիչների սեփականություն, դարձնել վորպեսզի 1931—32 ուսումն. տարվա չորրորդ քառորդում դպրոցները այս ծրագրերով կառուցեն ուսումնական աշխատանքը։

2) Ծրագրերի հետ միաժամանակ մեթոդական բացատրություններ տալը զգալիորեն կուռացներ այս հրատարակությունը:

3) Հյուսիսային Կովկասի Յերկ. լուսբաժնի ուսումնամեթոդական սեկտորը (У.М.С.) անհրաժեշտ է համարում, Հ-Կովկասի հայկ. դպրոցների մի շարք առանձնահատկությունները հաշվի առնելով, տալ մեթոդական բացատրություններ ու ծրագրային հարմարեցումներ (ռուսերենը հայկ. դպրոցում, հայերենի ծրագիր, ուսումնական պլան յեվ այլն), վորոնք

4) Մոտ ապագայում հրատարակվելու յեն առանձին գրքույկով:

Հս. յերկ. Լուսբաժնի ուսումնամեթոդական սեկտոր

БИБЛИОТЕКА ... УРСР
48493 км
12
7504-53

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀԿԿ(բ) Կենտկոմի 1931 թվի սեպտեմբերի 5-ի վորոշումը տարրական և միջնակարգ դպրոցի մասին հանդիսանում է պոլիտեխնիկական դպրոցի պայքարի ծրագիր սոցիալիզմի շինարարության ասպարիզում։

Կուսակցության Կենտկոմը, գնահատելով խորհրդային դպրոցի նվաճումներն անցած տարիներում, նկատում է, վոր «պրոլետարական պետությունը ձեռք է բերել ահագին հաջողություններ դպրոցական ցանցի լայնացման և դպրոցի վերակառուցման գործում» և վոր «սկզբունքորեն այլ է դարձել դպրոցական ամբողջ աշխատանքի բովանդակությունը»։

Խորհրդային դպրոցը խնդիր դնելով «պատրաստել կոմունիստական հասարակության բազմակողմանի զարգացած անդամներ», ապահովում է յերեխաներին ձեռքբերելու լայն հասարակական քաղաքական շրջահայեցողություն, ընդհանուր զարգացություն և անհամեմատ ավելի մեծ չափերով ընդհանուր կրթական մակարդակ, քան տալիս եր մինչպատերազմյան բուրժուական դպրոցը: Խորհրդային դպրոցը վերջին տարիներում ձեռք է բերել զգալի հաջողություններ նաև ուսուցման և արտադրական ու հասարակական աշխատանքների միացման ուղիներում: Այդ հաջողությունները դպրոցի պոլիտեխնիկական վերակառուցման ամուր հիմք են ստեղծել: Ուսումնական սենյակների և արհեստանոցների ծավալումը միանալով դպրոցների մասսայական ամրացմանը ձեռնարկություններին, խորհտնտեսություններին, կոլտնտեսություններին և ՄՏ կայաններին, ընդարձակում և արագացնում է դպրոցի պոլիտեխնիկացման ընթացքը: Խորհրդային դպրոցը ձեռք է բերել հատկապես զգալի հաջողություններ իր աշխատանքում 16-րդ կուսհամագումարի ընդհանուր պարտադիր տարրական ուսուցում մտցնելու պատմական վորոշումից հետո։

Բայց դպրոցի այդ բոլոր նվաճումների հետ միասին կուսակցության Կենտկոմը գտնում է, վոր «խորհրդային դպրոցը դեռևս չի համապատասխանում այն մեծ պահանջներին, վորոնք դրվում են նրա առաջ սոցիալիստական շինարարության ներկա ժամանակամիջոցին»։

Կուսակցության Կենտկոմը մատնանշեց դպրոցի արմատական թերությունը, վոր ավյալ մոմենտում դպրոցի ուսուցումը չի տալիս հանրակրթական գիտելիքներ բավարար ծավալով և անբավարար է լուծում տեխնիկումների և բարձրագույն դպրոցի համար լիովին գրագետ մարդիկ պատրաստելու խնդիրը, վորոնք լավ տիրապետեն գիտությունների հիմունքները (ֆիզիկա, քիմիա, մաթեմատիկա, մայրենի լեզու, աշխարհագրություն և այլն)»։ Հետևաբար հանրակրթական և պոլիտեխնիկական դպրոցը չի տալիս միջին և բարձր պոլիտեխնիկական դպրոցի համար այնպիսի մարդիկ, վորոնք իրենց ստացած ընդհանուր կրթության հիման վրա կարողանային հաջողությամբ ստանալ մասնագիտական պատրաստություն։ Բայց հենց այդ արմատական թերությունը բացասաբար է ազդում նաև պոլիտեխնիկական դպրոցի վրա, վորովհետև նրա շնորհիվ «դպրոցի պոլիտեխնիկացումը մի շարք դեպքերում ձևական բնույթ է ստանում և չի պատրաստում յերեխաներին վորպես սոցիալիզմի բազմակողմանի զարգացած շինարարներ, վորոնք տեսությունը կապեն գործնականին և տիրապետեն տեխնիկային»։ Այդ բոլորը պարտավորեցնում է անհապաղ ձեռնարկել դպրոցական աշխատանքների թերությունների վերացմանը, առաջին հերթին վերակազմել տարրական ու միջին դպրոցի ծրագրերը, ապահովելով կարգավորված գիտելիքների ճիշտ գծված սահմանը (մայրենի լեզու, մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, աշխարհագրություն, պատմություն)։

Կուսակցության Կենտկոմն առաջարկեց միութենական հանրապետությունների լուսժողկոմատներին կազմակերպել տարրական և միջնակարգ դպրոցի ուսումնական ծրագրների գիտական—մարքսիստական վերամշակումը։ Կուսակցության Կենտկոմի այդ հրահանգը ՌՍՖՍՀ Լուսժողկոմատը իրագործել է—տարրական և միջնակարգ դպրոցի նոր ծրագրների նախագծերը վերամշակել է Կենտկոմի ցուցմունքների համաձայն։ Բայց ՌՍՖՍՀ Լուսժողկոմատի կատարած աշխատանքը պետք է նայել միայն վորպես վորոշ չափի մոտեցում՝ լուծել դպրոցի ամբողջ ուսումնական նյութի կառուցման բարդ խնդիրները մարքս-լենինյան մեթոդոլոգիայի հիման վրա։ Ավելի մեծ աշխատանք է պահանջվում ստուգելու ծրագրների տվյալ նախագիծը դպրոցների աշխատանքների փորձով և հետագայում նրանք կատարելագործելու նպատակով։

Վորն է արդյոք նոր ծրագրերի նախագծի տարբերությունը 1931 թվի ծրագրներից։

1. Նոր ծրագրները կազմված են տարրական և միջնակարգ դպրոցի բոլոր ուսումնական տարիների համար ըստ առարկաների և ապահովում են յուրաքանչյուր ուսումնական դիսցիպլինայի կարգավորված գիտելիքների ճիշտ գծագրված սահմանը։

2. Նոր ծրագրները կապ են հաստատում տեսության և գործնականի միջև, ուսուցման և արտադրական ու հասարակական օգտակար աշխատանքի միջև, Կենտկոմի ցուցմունքների հիման վրա այն մասին, «վոր սովորողների ամբողջ հասարակական—արտադրական աշխատանքը յենթարկվի դպրոցի ուսումնական և դաստիարակչական նպատակներին»։ Այդ է սովորողների արտադրական ու հասարակական աշխատանքի վերաբերյալ հարցադրման հիմնական տարբերությունը 1931 թ. ծրագրների նպատակադրումից, վորոնք օրգանապես միացնում էին կրթական աշխատանքը իրական գործերի հետ, տեսությունը գործնականին յենթարկելու հիման վրա։ Այդպիսով նոր ծրագրները պետք է ապահովեն տեսության և գործնականի, ուսուցման և արտադրական աշխատանքի կապն այնպիսի հիմունքով, վոր սովորողն ուսումնասիրելով տեսությունը (թեորիան), սովորի ըմբռնել հասարակական, բնական և արտադրական գործողություններն ու յերևույթները, մշակի մարքս-լենինյան աշխարհայացք, դառնա սոցիալիստական շինարարության գիտակից և ակտիվ մասնակցող։

3. Նոր ծրագրները խիստ սահմանագծված գիտելիքներին զուգընթաց ապահովում են ավանդվող առարկաների բնական կապը նրանց փոխադարձ ներանցման հիման վրա։

Օրինակ՝ մաթեմատիկան, ռուսաց լեզուն յուրացնելու վարժությունների, գիտելիքների ամրացման նյութը պետք է առնվի ըստ հնարավորության բնագիտության, հասարակագիտության, տեխնիկական նյութերից։ Դա իր հերթին ամրացնում և խորացնում է բնության, հասարակական կյանքի, տեխնիկական և այլ գիտելիքները։ Միաժամանակ մշակվող դիսցիպլինների այդ կապերը պահանջում են առանձին առարկաների ուսումնական նյութի մշակման այնպիսի հետևողականություն յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում, վոր մանկավարժը բնականորեն կարողանա կապել մշակվող առարկաների թե առանձին բաժինները և թե այս կամ այն ժամանակամիջոցում ձեռք բերված գիտելիքների ամբողջությունը պոլիտեխնիկական ուսուցման ծրագրի բաժինների և սովորողների հասարակական—օգտակար աշխատանքի հետ։ Այդ պայմանն անհրաժեշտ է դարձնում չխախտելով բոցատրական կարգավորությունը, այնպես դասավորել յուրաքանչյուր առանձին ուսումնական նյութն ըստ տարվա յեռամսյակների, վոր թե առարկաների միջև յեղած և թե հասարակական—արտադրական աշխատանքի համապատասխան հատվածների միջև յեղած այդ բնական կապերը վորոշվեն միաժամանակ մշակվող ուսումնական առարկաների բովանդակությամբ։ Այդպիսով կոմպլեքսայման սկզբունքը հաղթահարվում է վորպես (յուրաքանչյուր առարկայի տեսական ուսուցման և բնության շրջապատող յերևույթների ու հասարակական կյանքի կապի մեթոդ, յերեխաների մասնակցության ակտիվ հասարակական օգտակար և արտադրական աշխատանքում, վորպես մեթոդ, վորը նպաստում է տեսության և գործնականի կապին և զինում սովորողներին հասարակական օգտակար աշխատանքի ունակություններով։ Կոմպլեքսայնության այդպիսի հաղթահարությունը և կիրառումը կյանքում վոչ մի ընդհանուր կապ չունենալով կոմպլեքսայնության և նախագծերի վերաբերյալ «ձախլիկ» տեսությունների հետ, պետք է օգնի հաջող պայքարելու այն թեքման դեմ, վորը փորձում է վերականգնել բանավոր, սխոլաստիկ դպրոցը, ներմուծելով իրարից առանձնացված առարկաներ և ձգտելով սահմանափակել տեսական գիտելիքների յուրացումը միայն գրքի միջոցով, կտրված կյանքից, կտրված գործնականից։

4. Նոր ծրագրները կազմված են այն յենթադրությամբ, վոր դպրոցը լայն օգտագործում է կաբինետների, լաբորատորիաների, ուսումնական արհեստանոցների և մյուսների ուսումնական սարքավորումը։ Հետևաբար բոլոր դիսցիպլինների նյութը պետք է մշակվի դասավանդման ակտիվ մեթոդների լայն կիրառումով (լաբորատոր, հետախուզական և այլն)։ Այդ նպատակով անհրաժեշտ է գործիքներ, նկարներ և ուրիշ ուսումնական ձեռնարկներ ձեռք բերելու հետ միասին կազմակերպել և ամեն կերպ ակտիվացնել սովորողների նախաձեռնությունն ու ստեղծագործությունը—հասարակ, ինքնագործ գործիքներ թե դպրոցական ուսումնա դաստիարակչական հիմնարկների (կաբինետների, լաբորատորիաների՝ ուսումնական արհեստանոցների և մյուսների համար ուրիշ սարքավորումներ պատրաստելու համար։

5. Նոր ծրագրները, վոր կազմված են ճիշտ և պարզորոշ ուսումնական պլանի պարապմունքների դասացուցակի հիման վրա, նախատեսնում են յուրաքանչյուր առարկայի և ուսումնական յուրաքանչյուր ժամանակամասի գիտելիքների և ունակությունների միանգամայն վորոշված ծավալ։ Շնորհիվ դրան, լրիվ հնարավորություն կա մեծ ճշտությամբ պլանավորել ուսուցման ընթացքը և մտցնել ամենամանրակրկիտ հսկողություն ամբողջ դպրոցական աշխատանքի և յուրաքանչյուր ուսուցչի աշխատանքի վրա առանձին։ Այդ նույն հանգամանքը կօգնի ուսուցչին իր ամենօրյա աշխատանքում կատարել ծրագրի պահանջները գիտելիքների և ունակությունների այն ծավալի վերաբերյալ, վոր պետք է ստանան սովորողներն ուսումնական նյութի մշակման հետևանքով վորոշ ժամանակամիջոցում։

Նոր ծրագրների նախագծերի տարբերության այդ ընդհանուր բնույթագիրը 1931 թվի ծրագրներից դեռ բոլորովին չի սպառում ուսումնական նյութի վերակազմության ամբողջ ընթացքը. դեռ ավելին, այդ ընթացքը վերաբերում է վոչ միայն ուսումնական նյութի բովանդակության վերակազմությանը, այլ և մեթոդներին, վորոնց օգնությամբ այդ նյութը պիտի մշակվի։ Դասավանդման ակտիվ մեթոդների հարցը հանդիսանում է խորհրդային դպրոցն ավարտողների վորակն ապահովող հիմնական պայմաններից մեկը։ Կենտկոմի 1931 թվի սեպտեմբերի 5-ի վորոշումն ուղղված է գլխավորապես դպրոցի աշխատանքի այդ կողմի վրա։

Կուսակցության Կենտկոմը նկատեց դպրոցի մեթոդական ղեկավարության անբավարար վիճակը ժողովրդական կրթության մարմինների կողմից։ Մեթոդական ղեկավարության անբավարարությունը հատկապես պարզ արտահայտվեց «նախագծային մեթոդը» դպրոց ներմուծելու օրինակով, վորպիսի մեթոդը խանգարում էր դպրոցական պարապմունքների կանոնավոր ընթացքը և չէր ապահովում սովորողների պարապմունքների կարգը։ Կենտրոնական Կոմիտեն մատնանշում է «նախագծային մեթոդը» նրա համար, վոր նա հանդիսանում է մեթոդական պրոժեկտորության ամենաբնորոշ ցուցանիշը և արտահայտում «դպրոցի մահացման տեսությունը»։ Բայց դա չի նշանակում, վոր դպրոցում չպետք է աշխատել նոր ակտիվ մեթոդներով (եկսկուրսիոն, լաբորատոր, հետախուզական և այլն)։ Ընդհակառակը, Կենտկոմի վորոշումն ասում է ուսուցման զանազան նոր մեթոդներ կիրառելու մասին խորհրդային դպրոցում, վորոնք կարող են նպաստել սոցիալիստական շինարարության նախաձեռնող և գործոն մասնակիցների դաստիարակությանը։ Հանրակրթական գիտելիքների բավարար ծավալն ապահովելու և սովորողներին սոցիալիզմի բազմակողմանի զարգացած շինարարներ պատրաստելու համար հարկավոր է հիմնովին լավացնել դպրոցական աշխատանքի մեթոդները։ Դպրոցում կիրառվող ակտիվ մեթոդները պետք է բավարարեն հետևյալ հիմնական պահանջներին—օգնեն սովորողներին արագ և խորը տիրապետելու գիտելիքների և ունակությունների մի ամբողջություն, լայն հնարավորություն տան միացնելու տեսությունը գործնականին, ուսուցումը հասարակական արտադրական աշխատանքին, յենթարկելով վերջինը դպրոցի ուսումնա—դաստիարակչական նպատակներին, զինեն սովորողներին տարրական հետախուզական ունակություններով (կարողանան դիտել, փորձեր կազմակերպել, յեզրակացություններ անել) և պայմաններ ստեղծեն զարգացնելու ինքնագործունեությունն ու մանկական ստեղծագործությունը։ Բացի այդ, ակտիվ մեթոդները պետք է ապահովեն յերեխաների աշխատանքում ամենամեծ կոնկրետություն, վորոնք բավական շատ բարձրացնում են աշխատանքի արդյունքները։ Յերեխաների գիտելիքների ձեռք բերումն և ակտիվացնող հզոր աղբյուր կարող է ծառայել նույնպես և մանկական անմիջական աշխատանքը—յերեխայի աշխատանքային փորձը։ Հասարակական—արտադրական աշխատանքում գործնականորեն կիրառվում են սովորողների ձեռք բերած տեսական գիտելիքները և

իր հերթին աշխատանքի գործունեությունն ընդհանրացնում է մանկան սոցիալական և աշխատանքային փորձը և նրան խթան է տալիս նոր գիտելիքներ ձեռք բերելու.

Դպրոցի ուսումնա—դաստիարակչական աշխատանքի հիմնական միջոցների թվին են պատկանում անհրաժեշտ կենդանի խոսքն ու գիրքը: Նոր մեթոդիկան պետք է մեծ աշխատանք առաջացնի, ամենակատարելագործված ձևով օգտագործելու դպրոցում գրքերը, թերթերը, ժուռնալները, ուսումնական տպագիր ձեռնարկները: Պետք է սովորողներին սովորեցնել օգտագործել գիրքը վորպես գիտության աղբյուր, կարողանալ գրքում գտնել նրանց մոտ առաջացած հարցերի պատասխանը, կարողանալ լեզվի ձեռք բերած գիտելիքները կիրառել հասարակական կյանքում: Իր հերթին յերեխաների խոսակցական պրակտիկան պետք է օգտագործվի վորպես հիմք, վորի վրա նրանք սովորում են լեզու, զարգացնում են բանավոր լեզուն, ըմբռնում են լեզվական յերևույթները: Աշխատանքի վորակի բարձրացմանը պետք է նպաստի վոչ միայն լավ մեթոդիկան, այլև մանկավարժական աշխատանքի ամբողջ կազմակերպումը: Մանկավարժական աշխատանքը պետք է այնպես կազմակերպվի, վոր սովորողները կարողանան ամենաքիչ ուժ ծախսելով կարճ ժամանակամիջոցում տիրապետել ավելի շատ գիտելիքներ և ունակություններ: Դրա համար ամենից առաջ պետք է աշխատանքում հաստատել և պահպանել խիստ կարգ: Յուրաքանչյուր խումբ պետք է ունենա իր աշխատանքի վորոշ ցուցակը:

Ուսուցիչը պահանջում է, վոր նա ունենա պարզորոշ աշխատանքի պլան, վոր կազմված լինի ծրագրի և դպրոցական ընդհանուր արտադրական պլանի հիման վրա: Ուսուցիչը պետք է խնամքով պատրաստվի դասերին, հատկացնելով այդ գործին ամեն որ վորոշ քանակի ժամեր: Նա պետք է դպրոց գնա ճիշտ յեվ պարզ գաղափար ունենալով այն մասին, ինչ է անելու օրվա ընթացքում: Յուրաքանչյուր դասի համար պետք է խնամքով պատրաստ լինեն—նյութը, առարկայական ձեռնարկները, վորպեսզի դասերի ժամերը չկորչեն նախապատրաստական կազմակերպչական աշխատանքի համար: Այդ գործում ուսուցչի գործունյա օգնականներ կլինեն իրենք, սովորողները (որապահները, մանկական ակտիվի ներկայացուցիչները): Բոլոր առաջադրությունները, վոր տալիս է ուսուցիչը յերեխային ինքնուրույն աշխատանքի համար, պետք է լինեն պարզ՝ սովորողներին հասկանալի և վոր յերեխաները կարողանան միանգամայն ինքնուրույն կերպով առանց կողմնակի օգնության կատարել: Սովորողներից պետք է պահանջել առաջադրությունները խնամքով և ճիշտ կատարել, վորպես կանոն, յուրաքանչյուր կատարած առաջադրություն ուսուցիչը պետք է ստուգի: Կոլեկտիվ աշխատանք կազմակերպելիս, աշխատանքի բաժանման հիման վրա, այնպես անել, վոր յուրաքանչյուր յերեխա պարզ պատկերացնի իր բաժին աշխատանքը, վորի կատարման համար նա պատասխանատու է: Սովորողների վարժեցումը ճշտության, խնամքի և կազմակերպվածության պետք է հանդիսանա վորպես հետևանք լավ կարգավորված և խորը մտածված դաստիարակության սիստեմի: Դաստիարակության կոմունիստական սիստեմը պահանջում է, վոր կարգն ու դիսցիպլինան հաստատվեն յերեխաների հետ միասին—յերեխաների, նրանց կազմակերպությունների, պիոներական կազմակերպությունների անմիջական և ամենաակտիվ մասնակցությամբ: Դիսցիպլինան խորհրդային դպրոցում պետք է լինի գիտակցական աշխատանքային դիսցիպլինա, վորին հիմք պիտի ծառայի սովորողների պատասխանատվության դաստիարակումը մանկական կոլեկտիվի և խորհրդային հասարակության առաջ: Այդ պայմաններում գիտելիքներ ձեռք բերելու պայքարը կդառնա կոմունիստական դաստիարակության պայքարի անհրաժեշտ մասը:

Մանկավարժական աշխատանքի կազմակերպմանը սերտ կապված է սովորողների կազմակերպումն ուսումնական նյութի մշակման համար: Հիմնական մանկական կոլեկտիվը դպրոցում հանդիսանում է խումբը, վորն ուսումնական նյութը կոլեկտիվ մշակելու և հասարակական ու արտադրական աշխատանքի առաջադրությունները կատարելու համար բարձր խմբերում բաժանվում է բրիգադների կամ օղակների: Բրիգադների և օղակների աշխատանքը պետք է տարվի ուսուցչի անմիջական ղեկավարությամբ և պատասխանատվությամբ: Խմբի սովորողները սոցմրցման հիման վրա կազմակերպում են ուսումնական փոխադարձ օգնություն, հետամնաց ընկերներին օգնություն: Հասարակական բուքսիրի կարգով ուժեղները պետք է օգնեն թույլերին: Բրիգադա-օղակային ձևով աշխատելիս անհրաժեշտ է վճռապես պայքարել յուրաքանչյուր սովորողի անհատական աշխատանքի թերագնահատման դեմ: Դպրոցը աշակերտներին պետք է սովորեցնի օգտվել թե անհատական և թե կոլեկտիվ աշխատանքի

ձևերով: Բրիգադային աշխատանքի հետ կազմակերպումն յենթադրում է ուսումնական նյութի անհատական մշակումը յուրաքանչյուր սովորողի կողմից:

Սովորողներն ուսումնական նյութը մշակում են վոչ միայն դպրոցում, այլև տանը, ուսումնական պլանով վորոշված ժամանակի սահմաններում: Հետևաբար ուսուցիչը պետք է իր աշխատանքային պլանում նախատեսնի և այն ուսումնական նյութը, վորը սովորողները պետք է մշակեն դպրոցից դուրս ինքնուրույն դպրոցական պարապմունքի հիման վրա (խնդիրների լուծում անցյալի կրկնում և այլն): Դպրոցական աշխատանքի լավ կազմակերպումն անհնար է մտածել առանց աշխատանքի հաշվառման խնամքով դրվածքի: Յուրաքանչյուր դպրոց պարտական է կարգավորել և սիստեմատիկ հաշվառել թե ամբողջ խմբի կոլեկտիվ աշխատանքը թե յուրաքանչյուր սովորողի անհատական աշխատանքը: Աշխատանքի ամենօրյա նշանակման համար պետք է ծառայեն խմբի օրագրերը, նույնպես և շրջիկ տետրերը, վորտեղ սովորողները հերթով գրում են յուրաքանչյուր օրվա աշխատանքը: Պարբերաբար (յեռամսյակի վերջին) այդ հաշվառքի տվյալները հանրագումարվում են դպրոցական խորհրդում: Բրիգադի կամ օղակի աշխատանքը նույնպես պետք է նշանակվի համապատասխան ուսումնական տետրերում կամ օրագրերում, վորոնք վարում են բրիգադիրները—օղակավարները—ուսուցչի անմիջական ղեկավարությամբ: Սովորողների գիտելիքների մակարդակի բարձրացմանը և հառաջադիմության հաշվառմանը պետք է հատուկ ուշադրություն դարձնել: Հառաջադիմության հաշվառումն այնպես պետք է դրված լինի, վոր յուրաքանչյուր տվյալ մոմենտին թե ուսուցչի և թե սովորողի համար պարզ լինի զանազան առարկաների պատկերը: Անհատական հաշվառումը պետք է ուղղված լինի այն բանին, վոր պարզվի, թե ինչ դժվարություններ է զգում յերեխան աշխատանքում, ինչպես օգնել նրան և փաստորեն կազմակերպել այդ օգնությունը, անհատական հաշվառման միջոցներն են—յերեխայի ամենօրյա աշխատանքի դիտողության հարցումներ, զրույցներ, հսկիչ գրավոր աշխատանքներ, ինքնուրույն աշխատանքների դիտումը, վոր կատարում են սովորողները վորպես ինքնուրույն աշխատանքի առաջադրություն.

Աշխատանքի հաշվառումը հանդիսանում է մանկավարժական աշխատանքի անբաժան մասը և հիմնականում պետք է կատարվի աշխատանքի ընթացքում: Սովորողի հառաջադիմության ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ է հաշվառել վոչ միայն նրա գիտությունն ու ունակությունները, այլ և նրա հասարակական ակտիվության աստիճանը, առողջության դրությունը, ընտանեկան պայմանները, վորտեղ ապրում է աշխատում է մանուկը: Միայն այդ տվյալների ամբողջությունը թույլ է տալիս ճիշտ գաղափար կազմել յերեխայի, նրա գիտելիքների և ընդունակությունների մասին:

Հառաջադիմությունը գնահատելիս աննպատակահարմար և անթույլատրելի յե վարկե թվանշան կիրառելը: Գնահատումը կարող է տրվել վորպես վորոշ չափի մանրամասն յեզրակացություն, վորտեղ նշանակվում է վոչ միայն հառաջադիմությունը կամ անհառաջադիմությունը, այլև կոնկրետ ցույց է տրվում, վորոնք են սովորողի թույլ կամ ուժեղ կողմերը, ինչ պետք է անել, վոր վերացնել թերությունները: Ճիշտ կազմակերպված հաշվառումը պետք է զարգացնի յերեխայի ինքնահաշվառման ունակությունները, վարժեցնի նրանց «ինքնահսկողության» աշխատանքի ընթացքում: Կոլեկտիվ գնահատումը և ինքնահաշվառումը կնպաստեն քննադատության և ինքնաքննադատության ծավալմանն ուսումնական աշխատանքում, և դրանով իսկ կհեռացնեն հնության տարրերը՝ վոր դեռևս գոյություն ունի մեր դպրոցում: Ամբողջ աշխատանքի հաշվառման համար պետք է ներդրավել և հասարակայնությունը, վորը կապահովի հասարակական հսկողությունը դպրոցական աշխատանքի վրա և խթան կդառնա սովորողների հետագա աշխատանքի համար:

Կուսակցության Կենտկոմն իր 1931 թվի սեպտեմբերի 5-ի վորոշման մեջ պահանջում է. «մանկական ինքնավարության մարմինների աշխատանքը դպրոցում այնպես դնել, վոր նա ուղղված լինի գլխավորապես ուսման վորակի բարձրացմանը, գիտակցական կարգապահության ամրացմանը դպրոցում»: Այդ վորոշումը պարտավորեցնում է դպրոցին, վերին աստիճանի ուշադիր մոտենալ դպրոցական ինքնավարության մարմինների աշխատանքի բովանդակության հարցերին, մանկական կազմակերպվածությանը, դաստիարակչական հարցերին, վոր ծավալում են դպրոցական ինքնավարության մարմինները: Իսկ դրա համար ուսուցիչը պետք է մոտենա ինքնավարությանը վորպես իր գործին, վորտեղ նա պարտական է ամենաակտիվ կերպով մասնակցել:

Պիոներական կազմակերպությունը հանդիսանում է գլխավորը դպրոցական ինքնավար մարմինների բոլոր աշխատանքներում: Զինվորվելով իր աշխատանքը ինք-

ղեկավարությամբ, պիոներական կազմակերպությունն ուժերի հիման դաստիարակությամբ պետք ե ապահովի ինքնավարության աշխատանքի ճիշտ ուղղությունը։ Պիոներական կազմակերպությունը պետք ե պայքարի ուսուցման որակի բարձրացման, դպրոցական գիտակից դիսցիպլինայի համար, դպրոցի աշխատանքի նոր սոցիալիստական ձևերի համար, դպրոցի պոլիտեխնիզացման համար, հասարակական աշխատանքի ծավալման համար։ «Պիոներ կազմակերպությունը մեր դպրոցում հզոր լծակ ե։ Պետք ե կարողանալ այդ լծակով օգտվել յերեխաների կոմունիստական դաստիարակության շահերի համար և պետք ե կարողանալ այդ լծակն ամրացնել ու կատարելագործել» (Բուբնով)։

Կուսակցության Կենտրոնական Կոմիտեն իր սեպտեմբերյան վորոշման մեջ իր ամբողջ սրությամբ դրեց ամենաանհաշտ պայքարի անհրաժեշտությունը ամեն տեսակ փորձերի դեմ—տալու խորհրդային դպրոցի յերեխաներին հակապրոլետարական գաղափարախոսության տարրեր և ցույց տվեց կոմունիստական դաստիարակության բացառիկ կարեվոր նշանակությունը խորհրդային դպրոցում սոցիալիզմի ժամանակաշրջանում, «յերբ պրոլետարիատն իրագործում ե դասակարգերի վերջնական վոչնչացումը սրված դասակարգային պայքարի պայմաններում»։ Այդ առթիվ կուսակցության Կենտկոմն առաջարկեց կուսակցական կազմակերպություններին՝ ամրացնել դպրոցի ղեկավարությունը և անմիջական ղեկավարության տակ առնել հասարակական-քաղաքական առարկաների դասավանդումը տարրական և միջնակարգ դպրոցում։ Դրա հետ միասին անհրաժեշտ ե բավական լավացնել սովորողների հակակրոնական և ինտերնացիոնալ դաստիարակության դրումը։ Հակակրոնական և ինտերնացիոնալ դաստիարակությունը պետք ե դառնա աճող սերնդի կոմունիստական դաստիարակության ընդհանուր խնդրի եյական, բաղադրիչ մասերից մեկը։

Դպրոցի վերակազմությունը պոլիտեխնիկական հիմքով, յերեխաների արտադրական աշխատանքի ներմուծումը դպրոց, աճող սերնդի պատրաստականության դաստիարակության խնդիրն յերկրի պաշտպանության համար—այդ բոլորը պահանջում են Ֆիզկուլտուրայի տեսակարար կշռի բարձրացումը դպրոցում։ Ջրի, արևի, օդի ճիշտ օգտագործման կազմակերպումն յերեխաների համար, ֆիզկուլտուրական սիստեմատիկ վարժությունների և խաղերի կազմակերպումը, յերեխաների աշխատանքի որվա ճիշտ ռեժիմի հաստատումը—հանդիսանում ե նվազագույն պահանջ յուրաքանչյուր դպրոցի համար։

«Կուսակցության Կենտկոմի վորոշումը ուժեղագույն զենք ե, վերջնականապես խորտակելու աջ օպորտունիզմը պոլիտեխնիկական դպրոցի շինարարության գործում։ Աջերի դեմ այդ հաղթանակը տանելու համար ներկայումս առանձնապես կարեվոր ե ուժեղացնել պայքարը «ձախլիկ» խոտորումների դեմ։ Պետք ե հասկանալ, վոր դպրոցի հիմնական թերությունը ներկա ժամանակում մեծ չափեր ե ընդունել հենց նրա համար, վոր մանկավարժական աշխատանքի տեսության մեջ և գործնականում տեղի յեն ունեցել սխալներ և խեղաթյուրումներ» (Բուբնով)։ «Ձախլիկ» տիպի սխալներն ու խեղաթյուրումները նրանք են, վոր «ձախլիկները» տեսականում և գործնականում դպրոցի ուսումնական և դաստիարակչական նպատակներն յենթարկում են հասարակական-արտադրական և հասարակական—օգտակար աշխատանքներին։ Այդ թեքումները միանալով «նախագծային մեթոդի» մասսայական կիրառմանը, քանդում եյին դպրոցը։ Դպրոցական աշխատանքի հակալենինյան նման պրակտիկան հենվում եր «դպրոցի մահացման» վնասակարագույն հակալենինյան տեսության վրա։ Ահա թե ինչու Կենտկոմի վորոշման մեջ ուշադրությունը սրված ե վճռական պայքար ծավալելու անհրաժեշտության վրա «դպրոցի մահացման» հակալենինյան տեսության դեմ, մեթոդական թեթև ձևափոխության դեմ, վոր բխում ե այդ տեսությունից։

Ուսուցիչը պետք ե կիրառի կյանքում նոր ծրագրները, հասցնի դպրոցն այնպիսի բարձրության, վորը վորոշված ե Կենտկոմի 1931 թվի սեպտեմբերի 5-ի վորոշումի մեջ։ Ուսուցիչը հանդիսանում ե կենտրոնական դեմք մեր պոլիտեխնիկական դպրոցի շինարարության մեջ։

Կուսակցության Կենտկոմը իր վորոշման մեջ տարրական և միջնակարգ դպրոցի մասին հետևյալ հրահանգը տվեց. «ուսուցիչների միջև տարված աշխատանքում պետք ե ղեկավարվել այն ցուցմունքով, վոր տվել ե Լենինը դեռ 1922 թվին—«Ժողովրդական ուսուցիչը մեզանում պետք ե այնպիսի բարձրության վրա կանգնած լինի, ինչպիսի բարձրության վրա նա յերբեք չի կանգնել, չի կանգնած և յերբեք չի կարող կանգնել բուրժուական հասարակության մեջ» (18-րդ հատոր, 2 մաս, 115 եջ)։ Վ. Ի. Լենինի ցուցումների կատարումն ուսուցչի վերաբերյալ ամենաանհրաժեշտ պայմանն

ե կիրառելու կյանքում նոր ծրագրները և ամրացնելու դպրոցը, վորպես պրոլետարիատի գաղափարական և կազմակերպչական դաստիարակչական ազդեցության զենք կիսապրոլետարական և աշխատավոր մասսաների վոչ պրոլետարական շերտերի վրա, նպատակ ունենալով դաստիարակել այնպիսի սերունդ, վոր ընդունակ ե վերջնականապես հաստատելու կոմունիզմը» (Համկոմկուսի (բ) ծրագիրը)։

Լժկոմի տեղակալ Կ. ՄԱԼՑԵՎ

ՖԱԲԴՈՐՄ. ՅՈԹՆԱՄՅԱԿԻ ՍՏՈՐԻՆ ԽՄԲԵՐԻ (I-4 ԽՄԲԵՐ) ՅԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ

Հաստատված Ռուսաստանի Լուսժողկոմատի կոլեգիայի կողմից 1931 թվի նոյեմբերի 29-ին

Կուսակցության Կենտկոմի վորոշումը տարրական և միջնակարգ դպրոցի մասին պարտավորեցնում ե ամենակարճ ժամանակում լավացնել դպրոցական աշխատանքի վորակը—

ա) Վերացնել դպրոցի հիմնական թերությունը, վոր նա չի տալիս բավարար ծավալով հանրակրթական գիտելիքներ, վորի հետևանքով շատ դեպքերում պոլիտեխնիկացումն ընդունում ե ձևական բնույթ։

բ) Սերտորեն կապել տեսական ուսուցումն արտադրական և հասարակական աշխատանքներին, այնպես վոր յերեխաների հասարակական արտադրական աշխատանքն յենթարկվի դպրոցի դաստիարակչական նպատակներին։

գ) Դպրոցական աշխատանքը տանել ճիշտ վորոշված ծրագրներով, ուսումնական պլաններով և դասացուցակներով։

Ցելնելով այդ ցուցումներից, Լուսժողկոմատը սահմանում ե հետևյալ ուսումնական պլանը ՖԳ յոթնամյակի (ФЗС) ստորին խմբերի և գյուղական տարրական դպրոցի համար—

1. Ուսումնական տարին հաստատվում ե 225 բանվորական որ։ Այդ որերի քանակը զուտ աշխատանքի ժամանակն ե, վորտեղ չեն մտնում վոչ հանգստյան որերը, վոչ էլ ընդմիջումները։

2. Վորպես կանոն, ուսումնական տարին սկսվում ե սեպտեմբերի 1-ին և վերջանում ե հունիսի 30-ին։

Այդ ժամանակամիջոցում դպրոցն ունի 215 բանվորական (աշխատանքի) որ, 56 հանգստյան որ և 20 որ յերեք ընդմիջումների համար։ Ընդհատումների ժամկետը հաստատում են յերկրային և մարզային լուսբաժինները, համաձայն տնտեսական և կլիմայական պայմանների։

Վոչ աշխատանքային որերը հանդիսանում են նոյեմբերի 7 և 8, մայիսի 1 և 2 և հունվարի 21-ը։

Ամառային յերկուամսյա ընդմիջումն հաստատվում ե հուլիսի 1 մինչև օգոստոսի 31-ը։

3. Վերևում հիշված ընդմիջումներով ուսումնական տարին բաժանվում ե չորս շրջանի. առաջինը՝ 54 աշխատանքային որ, յերկրորդ՝ 55 աշխ. որ, յերրորդը՝ 61 աշխ. որ և չորրորդը 55 աշխ. որ։

Յուրաքանչյուր յեռամսյակի վերջին կատարվում ե այդ ժամանակամիջոցում արած աշխատանքի հաշվառքը։

4. Ուսումնական աշխատանքային որը հաստատվում ե 4 ժամ որական առաջին և յերկրորդ խմբերի համար, 3 որ չորսական ժամ, 1 որ հինգական ժամ հնգօրյակում—յերրորդ խմբի համար և 5 ժամ հնգօրյակում—չորրորդ խմբի համար։

Բացի 4-րդ կետում հիշած աշխատանքի ժամանակից, ուսուցչի անմիջական ղեկավարությամբ սովորողներն ստանում են ամենօրյա առաջադրություններ ինքնուրույն աշխատանքի համար, վորտեղ մտնում ե ուսումնական աշխատանքին կապված առաջադրության ինքնուրույն կատարումը տանը կամ դպրոցում։ Դրա համար

առաջին յեվ յերկրորդ խմբերը պիտի աշխատեն որական 1—1 ու կես ժամ, իսկ վոչ ավելի, քան յերկու ժամ յերրորդ և չորրորդ խմբերը:

5. Դրա հիման վրա առաջին և յերկրորդ խմբերի բանվորական ժամանակի բյուջեն վորոշվում ե 900 ժամ, յերրորդ խմբինը 995 ժամ, չորրորդ խմբինը 1115 ժամ: Նկատի ունենալով, վոր պառաջին աստիճանի ուսուցչի համար հաստատված բեռնավորումը 900 բանվորական ժամ ե (225 ×4), յերրորդ և չորրորդ խմբերում յեղած ավելորդ ժամերը պետք ե լրացուցիչ վարձատրվեն:

6. Ուսումնական ժամանակի ամբողջ բյուջեն առարկաների միջև բաժանվում ե հետևյալ կերպ (ըստ ժամերի)—

Աշխատանքների հիմնական տեսակները	1 խումբ	2 խումբ	3 խումբ	4 խումբ
1. Բնագիտություն աշխարհագրության տարրերով	100	100	—	—
2. Հասարակագիտություն, պատմության տարրերով	100	100	100	170
3. Բնագիտություն	—	—	100	170
3. Աշխարհագրություն	—	—	40	50
5. Մայրենի լեզու	275	275	225	225
6. Մաթեմատիկա	200	200	210	225
7. Աշխատանք	105	105	105	105
8. Ոտար լեզու	—	—	—	—
9. Ֆիզիկական դաստիարակություն	60	60	60	60
10 Գեղարվեստական դաստիարակություն				
ա) Յերգեցողություն, յերաժշտություն				
բ) Կերպարվեստ (ИЗО)	60	60	60	60
Ընդամենը ուսումնական տարում	900	900	900	1.115

Ծանոթություն: Աշխատանքի՝ այստեղ բերված չափը նկատի չի առնում սովորողին. ինչ վերաբերվում ե խմբակային կամ աշխատանքի կազմակերպողին, նրանց համար ժամերի ավելյալ քանակը պետք ե կրկնապատկվի, վորովհետև աշխատանքի պարապմունքները տարվում են ամեն մի ավելյալ ժամում սովորողների կես կազմի հետ:

7. Աշխատանքի ամենորյա ցուցակը պետք ե կազմվի հետևյալ կերպ—

ա) Լեզվի և մաթեմատիկայի աշխատանքները պետք ե կատարվեն ամեն որ:

բ) Ֆիզիկական դաստիարակության և գեղարվեստական դաստիարակության բաժինների աշխատանքը պետք ե կատարվի մեկ անգամից վոչ պակաս հնգորյակում, բացի այդ, ֆիզկուլտուրան պետք ե արվի ամեն որ ֆիզկուլտրոպեների կամ ֆիզկուլտխմթանի ձևով—մյուս պարապմունքների ընթացքում.

գ) Յերեխաների միջավայրի կազմակերպման հետ կապված աշխատանքը (սովորողների և ինքնավարության մարմինների ժողովների աշխատանքը, կազմակերպչական հարցերի մշակումը, վորոնք կապված են հասարակական աշխատանքին և այլն) հանդիսանում ե խմբի ուսումնա-դաստիարակչական աշխատանքի անբաժան մասը, վորը կատարվում ե ուսուցչի ղեկավարությամբ. այդ աշխատանքը պետք ե կատարվի գլխավորապես նրան հատկացրած լրացուցիչ ժամանակի հաշվին:

8. Յուրաքանչյուր դպրոց պետք ե ունենա իր աշխատանքի խիստ վորոշված ցուցակը, վոր նա կազմում ե վեցերորդ կետում հիշած ուսումնական պլանի հիման վրա: Վորպես կանոն, ցուցակը պետք ե կազմված լինի յեռամսյակի համար: Բացի այդ, յուրաքանչյուր մանկավարժ դպրոցական այդ ցուցակի հիման վրա պետք ե ունենա սեպ կազմած որացուցային պլան տասնորյակի համար, վոր ճիշտ բաժանված պիտի լինի ըստ ժամերի:

Տասնորյակային որացուցային պլանում ցույց տրված աշխատանքի տեսակը (6-րդ կետ) և նրա համառոտ բովանդակությունը, ինչ և վոր ժամանակին յերեխաները պետք ե կարդան, գրեն, ինչպիսի խնդիրներ պիտի լուծեն, ինչ փորձեր և դիտողություններ ցուցադրել, ուր պետք ե եքսկուրսիա գնան, ինչ պիտի անեն աշխատանքի սենյակում և այլն:

Տասնորյակային աշխատանքային պլանները պետք ե պահվեն խմբի գործերում: Նրանց հիման վրա կատարվում ե յերրորդ կետում ցույց տված յեռամսյակային ուսումնական պլանի իրագործման հաշվառքը: Յուրաքանչյուր մանկավարժ իր տասնորյակային աշխատանքային պլանի համաձայն պետք ե նախորոք խնամքով մշակի ուսումնական նյութը, վորն անցնում ե յուրաքանչյուր դասին:

9. Ուսումնական որվա սահմանում պարապմունքների առանձին տեսակները պետք ե այնպես դասավորվեն, վոր աշխատանքի անհրաժեշտ փոփոխությունն ապահովվի և ջանասեր աշխատանք պահանջող դժվար պարապմունքները և շարժուն պարապմունքները հաջորդեն իրար, մտավոր և ֆիզիկական աշխատանքը հաջորդեն իրար: Վորպես կանոն, աշխատանքի ավելի դժվար տեսակները պետք ե կատարվեն ուսումնական որվա սկզբին կամ միջին, իսկ ավելի թեթև աշխատանքներն ուսումնական որվա վերջին. որինակ, մաթեմատիկայի պարապմունքները նպատակահարմար ե կատարել յերկրորդ կամ յերրորդ դասերին, իսկ, յերգը, նկարը, խաղերն ավելի ճիշտ կլինի կատարել որվա վերջին և այլն:

10. Դասի տևողությունն հաստատվում ե 45 րոպե: Դասերի ընդմիջումները—15 րոպե: Մեծ դադամիջոցն յերրորդ ժամից հետո—30 րոպե (տաք նախաճաշ):

Զերոյական խմբի համար այնտեղ, վորտեղ պայմանները թույլ են տալիս, կարելի յե իջեցնել դասի նորման մինչև 30 րոպե, չկրճատելով սակայն ուսումնական որվա ընդհանուր տևողությունը:

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ԱՌԱՋԻՆ ԽՈՒՄԲ

I. ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Դպրոցում սովորում են կրտսեր և ավագ մանուկներ: Դպրոցում սովորում են աղջիկներ ու տղաներ, զանազան ազգությունների յերեխաներ: Նրանք ընկերներ են ուսումնական աշխատանքների և խաղերի մեջ:

Դասարանում ու ամբողջ դպրոցում վորոշ կարգեր կան, պետք ե խնամքով վերաբերվել ու պահպանել դպրոցը, դասարանը, դպրոցական վողջ ունեցվածքը: Պետք ե սովորել շենքը, ձեռնարկներն ու պիտույքները, կահավորանքը ոգտագործել. պետք ե կարգ պահպանել խաղի և ուսման մեջ, ուրիշների աշխատանքը չխանգարել, համերաշխ աշխատել: Դպրոց հաճախել կանոնավոր, պարապմունքները բաց չթողնել: Կրոնական տոներին բոլորն էլ դպրոց պետք ե գան: Պետք ե ստուգել, բոլոր ութ տարեկանները, վորոնց ճանաչում են դպրոցականները, սովորում են, ով չի հաճախում դպրոց: Ի՞նչ անել վոր բոլորն էլ հաճախեն, ով և ինչն ե խանգարում նրանց, ինչով նրանց ոգնել, վոր նրանք բոլորն էլ դպրոց հաճախեն: Չքավորների յերեխաներին ոգնում են, վոր նրանք կարողանան կանոնավոր կերպով դպրոց հաճախել ու ձրի նախաճաշ ստանալ:

Խումբը (կոլեկտիվը) ինչպես պիտի պահպանի և ամրապնդի բոլոր մանուկների առողջությունը. սրա համար ինչու անհրաժեշտ ե սանիտարական-առողջապահական կանոնները պահպանել, մաքրությունն պահպանելուն ոժանդակել և հետևել, վոր բոլորն էլ այդ կանոնները կատարեն:

2. ՀՈԿՏԵՄԲԵՐԻԿՆԵՐ

Մեր խմբում և դպրոցի մյուս խմբերում հոկտեմբերիկներ կան: Հոկտեմբերիկները՝ հոկտեմբերիկների մանկական կազմակերպության անդամ են:

Ինչով են պարապում հոկտեմբերիկներն իրենց խմբերում:

Հոկտեմբերիկներն աշխարհի բոլոր ժողովուրդների աշխատավորների յերեխաների ընկերներն են:

Հոկտեմբերիկները ուսման և աշխատանքի մեջ իրենց ընկերների համար որինակելի պիտի լինեն:

Հոկտեմբերիկները կազմակերպված են ըստ աստղիկների: Աստղիկները միավորվում են հոկտեմբերիկական խմբերում: Խմբի ղեկավար տալիս ե կոմյերիտմիությունը: Աստղիկների ղեկավար տալիս են պիոներ վաշտերը: Դպրոցի խմբերում և հոկտեմբերիկական խմբերում մանուկներն աճում են ու աշխատում են կոլեկտիվ կերպով (միասին, համերաշխ, ընկերաբար, իրար ոգնելով):

Հոկտեմբերիկներին ինչու յեն հոկտեմբերիկներ կոչում:

3. ՄԵՐ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Թեմա՝ ծրագրի գյուղական վարիանտի համար

1. Ի՞նչ է մշակում (արտադրում) մեր կոլտնտեսությունը, ինչ աշխատանքներ են կատարում կոլտնտեսականներն ու կոլտնտեսությունները։

2. ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐՆ ՈՒ ԱՆՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ. կոլտնտեսության մեջ հողը, մեքենաները, գործիքները, աշխատող անասունները, շենքերը (շտեմարաններ, գոմ ու ախոռներ և այլն) ընդհանուր են։ Բոլոր աշխատանքները կազմակերպված (ըստ պլանի) և կոլեկտիվ կերպով են տարվում։ Աշխատանքները լավ և արագ կատարելու համար լավագույն կոլտնտեսականները կազմակերպում են հարվածային բրիգադներ։ Կոլտնտեսության մեջ բոլորն աշխատում են ընդհանուր գործի, ընդհանուր տնտեսության համար. այստեղ մեկը ամենի, ամենը մեկի համար են աշխատում։ Անհատականները իրար մասին չեն հոգում. ամեն մեկը իր մասին է մտածում. գյուղացիները (անհատականները) միատեսակ տնտեսություն չունեն, կուլակները շատ հող, շատ անասուն ու մեքենաներ ունեյին, նրանք վարձում եյին բատրակներին ու չքավոր գյուղացիներին ու նրանց պարտադրում եյին իրենց համար աշխատել։ Օգտվելով չքավորների կարիքավոր լինելուց, կուլակը նրանց ստիպում էր աշխատել իր համար՝ պարտք տված հացի, մեքենաները օգտագործելու դիմաց։ Մեր կոլտնտեսությունը կազմակերպվել է առանձին (անհատական) տնտեսություններից. նրա անդամները չքավորներն են, միջակներն ու բատրակները։ Կոլտնտեսականները միջակ ու չքավոր անհատականներին համոզում են կոլտնտեսություն մտնել. նրանք իրենց սեփական օրինակով ցույց են տալիս, թե միայն կոլտնտեսության միջոցով հնարավոր է լավ կյանք ստեղծել գյուղացիների համար և կուլակների լծից ազատվել։

3. ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ. Կոլտնտեսությունների կազմակերպման առաջին օրից կուլակները նրա դեմ դուրս յեկան։ Ինչպես այն ժամանակ, նույնպես հիմա կուլակները կոլտնտեսություններին վնասել են ու վնասում են. նրանք խանգարում են կոլտնտեսությունների աշխատանքը, վորովհետև գիտեն, վոր կոլտնտեսությունների ժամանակ ուրիշի հաշվին ապրել չի կարելի։ Այժմ կուլակների հողերը, մեքենաներ, մեծ տները գրավված են ու տրված են կոլտնտեսություններին ընդհանուր օգտագործման համար։ Կուլակները կոլտնտեսությունների թշնամիներն են. նրանց կոլտնտեսության մեջ չեն ընդունում։ Տերտերները կուլակների գործակիցն են, նրանց նույնպես կոլտնտեսության մեջ չեն ընդունում։

4. ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. Կոլեկտիվ աշխատանքը կոլտնտեսականներին ավելի յեկամուտ է տալիս, քան անհատականների աշխատանքը (օրինակներ բերել). անհատականների տնտեսությունը մանր է, կտոր-կտոր գործիքները — հին արոր ու տափան։ Կոլտնտեսությունները ավելի ու ավելի շատ մեքենաներ են աշխատեցնում։ Մեքենաները հեշտացնում են մարդու աշխատանքը։ Կոլտնտեսությունների բերքը անհատականների բերքից ավելի լավ է ու բարձր։ Կոլտնտեսականները ամբողջ ժամանակ հոգում են կոլտնտեսային տնտեսության բարելավելու մասին։ Բերքը բարձրացնելու համար նրանք բարելավում են տեխնիկան, աշխատում են օգտագործել գիտությունը. կոլտնտեսականները անհատականներից ավելի շուտ են ազատվում աստծու վրա հույս դնելուց և տերտերական հեքյաթներին հավատալուց։

Կոլտնտեսություններում յեկամուտը հետևյալ կերպ է բաշխվում. ով շատ և լավ է աշխատում, շատ էլ ստանում է. ով չի աշխատում, վոչինչ չի ստանում։ Կոլտնտեսությունները յերեխաների և ծերերի մասին հոգում են։

Կոլտնտեսությունները հոգում են իրենց անդամների լուսավորության մասին, ստեղծում են հասարակական ճաշարաններ, մանկամսուրներ, մանկապարտեզներ և այլն։

5. ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԸ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՅԵՎ ՖԱԲՐԻԿԱՆԵՐԻ ՀԵՏ. Կոլտնտեսություններ ստեղծելու և կոլտնտեսություններ կազմելու պայքարում մեծ դեր խաղացին գործարանների ու ֆաբրիկաների առաջավոր բանվորները։ Գործարանների ու ֆաբրիկաների բանվորների ղեկավարությամբ կոլտնտեսականները ամրապնդում են կոլտնտեսությունները և պայքարում են կուլակների դեմ։

Ֆաբրիկաներն ու գործարաններն արտադրում են մեքենաներ (տրակտոր, կոմբայն, ցանիչ, հնձող և այլն), շոգեկառք, վագոններ, կոշիկ, կտորեղեն, գամ և այլն։

Գործարաններում և ֆաբրիկաներում աշխատանքը կոլեկտիվ կերպով է կատարվում և ընդհանուր պլանով տարվում. գործարանում (ֆաբրիկայում) շատ բանվորների ընդհանուր աշխատանքը բանվորներին մոտեցնում է իրար, համախմբում։

Ֆաբրիկաներում և գործարաններում աշխատանքը կատարվում է բարդ մեքենաների օգնությամբ։ Մեքենաները մարդկանց աշխատանքը հեշտացնում են և հնարավորություն են ստեղծում կարճ ժամանակվա մեջ շատ և եժան ապրանք պատրաստել։

Գործարանների ու ֆաբրիկաների բանվորները փորձված ու մեքենաների վրա աշխատելու համար հմուտ աշխատողներ են գյուղ ուղարկում, վոր նրանք կոլտնտեսային տնտեսություն կազմակերպեն։

Առանց գործարանների ու ֆաբրիկաների՝ կոլտնտեսությունները չեն կարող զարգանալ։ Կոլտնտեսություններն էլ, իրենց հերթին, գործարանների ու ֆաբրիկաների համար մթերք (հումք) են արտադրում և քաղաքները պարենավորելով մատակարարում։

Քաղաքի և գյուղի միջև սերտ կապ կա։

6. ԱՆՑՅԱԼՈՒՄ ՏԵՐ ԷԻՆ ՅԵՂԵԼ ԿԱԼՎԱԾԱՏԵՐԵՐԸ ՈՒ ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԸ. Անցյալում մեծ հողամասերի տեր են յեղել կալվածատերերը. նրանք գյուղատնտեսական մեքենաներ և մեծ քանակությամբ անասուններ ունեյին։ Բատրակները անձնապես վոչինչ չունեյին։ Չքավոր ու միջակ գյուղացիները շատ քիչ հող ունեյին. զուրկ եյին մեքենաներից և անասուն համարյա չունեյին։ Նրանք ստիպված եյին կալվածատերերի մոտ աշխատանքի վարձվել և նրանց համար աշխատել. աշխատանքը ծանր էր, իսկ դրա վարձատրությունը՝ ցածր։

Գործարաններն ու ֆաբրիկները, դրանց մեքենաները, յերկաթուղիները պատկանում եյին կապիտալիստներին (բուրժուաներին)։ Բանվորները անձնապես վոչինչ չունեյին, նրանք կապիտալիստների կողմից վարձվում եյին և գործարաններում ու ֆաբրիկներում աշխատում եյին կապիտալիստների համար. կապիտալիստները բանվորներին պարտադրում եյին շատ աշխատել, բայց այդ աշխատանքի վճարը շատ ցածր էր։ Կապիտալիստները չեյին աշխատում, բայց ֆաբրիկաներում ու գործարաններում աշխատող բանվորների հաշվին մեծ յեկամուտներ եյին ստանում. Բանվորները ծանր պայմաններում եյին աշխատում ու ապրում, իսկ կապիտալիստները անձամբ չաշխատելով, շքեղ կյանք եյին վարում։

Կալվածատերերի ու գյուղացիների շահերը տարբեր եյին. գյուղացիները կռվում եյին կալվածատերերի դեմ, ապստամբություններ եյին անում, բայց, համախմբված չլինելու պատճառով, նրանց հաղթում եյին։

Բանվորների ու կապիտալիստների շահերը տարբեր եյին, բանվորները պայքարում եյին կապիտալիստների դեմ, գործադուլներ եյին անում և այդ գործադուլներից շատ անգամ հաղթող եյին դուրս գալիս։

7. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՄԲ. բանվորներն ու գյուղացիները կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ (և Լենինի գլխավորությամբ) հաղթեցին կապիտալիստներին ու կալվածատերերին, վերցրին նրանց հողերը, գործարաններն ու ֆաբրիկաները և իրենք սկսեցին կառավարել յերկիրը. նրանք նոր կյանք են ստեղծում, ուր շահագործում ու ճնշում չի լինի։

8. ԱՅԼ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ այժմ էլ հողերի, մեքենաների, ֆաբրիկաների, գործարանների տերերը կալվածատերերն ու կապիտալիստներն են, վորոնք ճնշում են բանվորներին ու գյուղացիներին, ստիպում են նրանց ցածր աշխատավարձով աշխատել և նրանց աշխատանքի հաշվին հարստանում են։ Բանվորները ճնշումից ազատվելու համար պայքարում են կապիտալիստների ու կալվածատերերի դեմ։ Մեր յերկրի բանվորները նրանց օգնում են ազատություն ձեռք բերելու համար մղվող պայքարում։

3. ՄԵՐ ԳՈՐԾԱՐԱՆԸ (ԿԱՄ ՄԵՐ ՖԱԲՐԻԿԱՆ)

Թեմա՝ քաղաքային վարիանտի համար

1. ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԿՈԼԵԿՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՖԱԲՐԻԿԱՅՈՒՄ։ Ի՞նչ է մշակում մեր ֆաբրիկան (մեր գործարանը). ինչ նյութերից (հումք)։ Գործարաններում և ֆաբրիկաներում աշխատանքը կոլեկտիվ և մի ընդհանուր պլանով է կատարվում. մեկի աշխատանքը մյուսի աշխատանքից կախում ունի։ Ամբողջ աշխատանքը լավ և արագ կատարելու համար լավ բանվորները հարվածային բրիգադներ են կազմակերպում։ Ֆաբրիկայում (գործարանում) շատ բանվորներ կան. ընդհանուր աշխատանքը նրանց մոտեցնում, միակուռ է դարձնում։

Գործարաններում ու ֆաբրիկաներում աշխատանքը բարդ մեքենաների օգնությամբ է կատարվում: Մեքենաները թեթևացնում են մարդու աշխատանքը և հնարավորություն են տալիս կարճ ժամանակում շատ և էժան ապրանք պատրաստել:

2. ՖԱԲՐԻԿԱՆԵՐԻ ՈՒ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԿԱՊԸ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ: Գյուղերում գյուղացիները կազմակերպված են կոլտնտեսությունների մեջ, կոլտնտեսության մեջ հողը, մեքենաները, գործիքները, աշխատող անասունները և տնտեսական նշանակություն ունեցող շենքերը (մարագ, շտեմարան, գոմ, ախոռ և այլն) ընդհանուր են. ամբողջ աշխատանքը կազմակերպված (պլանով) և կոլեկտիվ կերպով է տարվում: Վողջ աշխատանքը լավ և արագ կատարելու համար լավ կոլտնտեսականները հարվածային բրիգադներ են կազմակերպում: Կոլտնտեսությունների մեջ բոլորը ընդհանուր գործի և ընդհանուր տնտեսության մասին են հոգում: Այնտեղ մեկը բոլորի, բոլորը մեկի մասին են հոգում: Անհատական տնտեսության դեպքում իրար մասին չեն մտածում, ամեն մեկը իր մասին է հոգս քաշում: Գյուղացիները (անհատականները) միատեսակ տնտեսություն չունեյին, կուլակները շատ հող, շատ անասուն ունեյին և մեքենաների տեր էյին, նրանք բատրակներին, չքավոր գյուղացիներին վարձում էյին և ստիպում էյին կուլակի համար աշխատել: Ոգտվելով չքավորների կարիքավոր լինելուց, կուլակը նրանց հաց պարտք տվածի, դրամ փոխ տվածի, մեքենաները ոգտագործելու դիմաց ճնշում էր ու կեղեքում:

3. ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ: Կոլտնտեսությունների կազմակերպման առաջին օրերից կուլակները նրանց դեմ դուրս յեկան: Ինչպես այն ժամանակ, նույնպես և հիմա կուլակները կոլտնտեսություններին փչացրել են ու փչացնում են, նրանք խանգարում են կոլտնտեսությունների աշխատանքը, վորովհետև գիտեն, վոր կոլտնտեսությունների ժամանակ ուրիշի հաշվին ապրել չի կարելի: Այժմ կուլակների հողերը, մեքենաները, մեծ տները գրավված են ու տրված են կոլտնտեսություններին ընդհանուր ոգտագործման համար: Կուլակները կոլտնտեսությունների թշնամիներն են, նրանց կոլտնտեսության մեջ չեն ընդունում: Տերտերները կուլակների գործակիցն են, նրանց նույնպես չեն ընդունում կոլտնտեսության մեջ:

Գործարանների ու ֆաբրիկաների բանվորները մեծ դեր են խաղացել կոլտնտեսությունների համար մղվող պայքարում: Բանվորների ղեկավարությամբ կոլտնտեսականները ամրապնդում են կոլտնտեսություններն ու պայքարում կուլակների դեմ: Գործարանները կոլտնտեսությունների համար մեքենաներ, զանազան ապրանքներ են պատրաստում և կոլտնտեսությունների մեջ աշխատելու համար աշխատողներ են ուղարկում: Առանց ֆաբրիկաների ու գործարանների կոլտնտեսությունները չեն կարող զարգանալ: Կոլտնտեսությունները, իրենց հերթին գործարանների ու ֆաբրիկաների համար հումք են պատրաստում և քաղաքներին (բանվորներին ու ծառայողներին) պարենեղեն մատակարարում:

Կոլտնտեսությունների առավելությունները. Կոլեկտիվ աշխատանքը կոլտնտեսականներին ավելի յե տալիս, քան անհատականների աշխատանքը (օրինակներ բերել) անհատականների տնտեսությունը մանր է, կտոր-կտոր և ունեցած գործիքներն էլ հին դութանն ու տափանն են: Կոլտնտեսություններում ավելի ու ավելի շատ մեքենաներ են աշխատում, մեքենաները այնտեղ էլ թեթևացնում են մարդու աշխատանքը. կոլտնտեսություններում էլ մեքենաներով աշխատելը ձեռքի աշխատանքից ձեռնտու յե (օրինակներ բերել). կոլտնտեսությունների բերքը անհատականների բերքից ավելի բարձր է: Կոլտնտեսականները ամբողջ ժամանակ հոգում են տնտեսությունը բարելավելու մասին, վորպեսզի բերքը բարձր լինի, նրանք տեխնիկան բարելավում և գիտությունն են ոգտագործում: Կոլտնտեսականները անհատականներից ավելի շատ են ազատվում աստծու վրա հույս դնելուց և տերտերական հեքյաթներին հավատալուց:

Կոլտնտեսականները հոգում են իրենց անդամների լուսավորության մասին. նրանք կազմակերպում են հասարակական ճաշարաններ, մանկամսուրներ, մանկապարտեզներ և այլն:

Բանվորները գյուղացիներին ոգնում են աշխատանքը ու ողջ կյանքը նոր ձևով վերակառուցելու:

4. ԱՆՑՅԱԼՈՒՄ ՏԵՐ ԵՆ ՅԵՂԵԼ ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԸ ՈՒ ԿԱԼՎԱԾԱՏԵՐԵՐԸ: Գործարանները, ֆաբրիկաներն անցյալում պատկանել են կապիտալիստներին (բուրժուաներին): Բանվորները անձնապես վոչինչ չեն ունեցել. նրանք վարձվում և գործարաններում ու ֆաբրիկաներում աշխատում էյին կապիտալիստների համար: Կապիտալիստները բանվորներին շատ էյին աշխատեցնում և քիչ վճարում: Կապիտալիստները անձամբ չէյին

աշխատում, բայց գործարաններում ու ֆաբրիկաներում աշխատող բանվորների աշխատանքից մեծ յեկամուտներ էյին ստանում: Բանվորներն աշխատում ու ապրում էյին վատ պայմաններում, իսկ կապիտալիստները անձամբ չաշխատելով, շատ շքեղ կյանք էյին վարում:

Անցյալում կապիտալիստները մեծ հողամասերի տեր էյին, նրանք գյուղատնտեսական մեքենաներ և մեծ քանակությամբ անասուն ունեյին: Բատրակները անձնապես վոչինչ չունեյին: Չքավոր ու միջակ գյուղացիները շատ քիչ հող ունեյին, մեքենաներ չունեյին և անասուններ համարյա չունեյին, նրանք ստիպված էյին կալվածատերերի մոտ վարձու աշխատանքի մտնել և նրանց համար աշխատել. աշխատանքը ծանր էր, իսկ վարձատրությունը չնչին:

Բանվորներն ու կապիտալիստները տարբեր շահեր ունեյին, բանվորները կռվում էյին կապիտալիստների դեմ, գործադուլներ էյին անում և այդ գործադուլներից շատ անգամ հաղթող էյին դուրս գալիս:

Գյուղացիներն ու կալվածատերերը տարբեր շահեր ունեյին, գյուղացիները կռվում էյին կալվածատերերի դեմ, ապստամբություններ էյին անում, բայց կազմակերպված ու միահամուռ չը լինելու պատճառով հաղթվում էյին:

5. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՄԲ բանվորներն ու գյուղացիները կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ (և Լենինի գլխավորությամբ) հաղթեցին կապիտալիստներին ու կալվածատերերին, վերցրին նրանց հողերը, գործարաններն ու ֆաբրիկաները և իրենք սկսեցին կառավարել յերկիրը. նրանք ստեղծում են նոր կյանք, ուր շահագործում ու ճնշում չի լինի:

Այժմ բոլոր գործարաններն ու ֆաբրիկաները աշխատավորությանն են պատկանում: Բանվորները շատ նոր գործարաններ ու ֆաբրիկաներ են շինում, բարելավում են հները, աշխատավորների համար կառուցում են նոր բնակարաններ, ակումբներ, դպրոցներ, հասարակական ճաշարաններ (ֆաբրիկա-խոհանոցներ) ստադիոններ, կուլտուրայի և հանգստյան պարկեր:

6. ԱՅԼ ՅԵՐԿՐՆԵՐԻ այժմ էլ հողերի, մեքենաների, ֆաբրիկաների, գործարանների տերերը կալվածատերերն ու կապիտալիստներն են, վորոնք ճնշում են բանվորներին ու գյուղացիներին, ստիպում են նրանց ցածր աշխատավարձով աշխատել և նրանց աշխատանքի հաշվին հարստանում են: Բանվորները ճնշումից ազատվելու համար պայքարում են կապիտալիստների ու կալվածատերերի դեմ: Մեր յերկրի բանվորները նրանց ոգնում են ազատություն ձեռք բերելու համար մղվող պայքարում:

ՅԵՐԿՐՈՐԴ ԽՈՒՄԲ

I. ԻՆՉՊԵՍ ԵՅԻՆ ԱՊՐՈՒՄ ԲԱՆՎՈՐՆԵՐՆ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐՆ ԱՌԱՋ

Առաջ, մինչ Հոկտեմբերյան հեղափոխությունը, ամբողջ յերկիրը կառավարում էյին թագավորն ու նրա պաշտոնյաները և պաշտպանում էյին կապիտալիստների և ու կալվածատերերի շահերը:

Գյուղացիներն ստիպված էյին կալվածատերերի յեվ կուլակների համար աշխատել: Կալվածատերերն ու կուլակներն ստրկացրել էյին նրանց, թագավորական չինովնիկները գյուղացիներից շատ տեսակի հարկեր էյին վերցնում:

Բանվորները գործարաններում և ֆաբրիկաներում աշխատում էյին կապիտալիստների համար: Նրանց աշխատանքի օրը շատ յերկար էր, աշխատավարձը չնչին: Առանձնապես ծանր էր կանանց և յերեխաների աշխատանքը: Բանվորները պայքարում էյին կապիտալիստների դեմ, կազմակերպում գործադուլներ, ներկայացնում իրենց պահանջները: Գյուղացիները պայքարում էյին կալվածատերերի դեմ (այրում կալվածատերերի գույքը, խլում հացը և այլն):

Կալվածատերերն ու կապիտալիստները միասին էյին: Բանվորների ու գյուղացիների՝ չքավորների, միջակների և բատրակների՝ շահերն ընդհանուր էյին:

Կապիտալիստներին ու կալվածատերերին ոգնում էյին աշխատավորներին ճնշողները՝ թագավորն ու նրա չինովնիկները. թագավորն ամենամեծ կալվածատերն էր և և ուներ գործարաններ ու ֆաբրիկաներ: Շահագործողների շահերը պաշտպանելու և աշխատավորներին ճնշելու համար նրանք ունեյին լավ զինված ժանդարմներ և վոստիկաններ. այդ նպատակով ոգտագործում էյին և զորքը, վորոնց հրամանատարներն

էին սպաներն ու գեներալները, իսկ սպաներն ու գեներալներն ազնվականներից էին, կալվածատերերից։ Կալվածատերերի ստորադրյալներն էին և վիճակային դատավորները (զեմսկի նաչալնիկները), որոնք լիակատար իրավունքներ ունեին գյուղի վրա։

Բանվորներն ու գյուղացիները ցարական իշխանության ժամանակ իրավազուրկ էին։ Առանձնապես ճնշված էին ոչ ռուս բանվորներն ու գյուղացիները (ուկրաինացիները, բաշկիրները, վրացիները, հրեաները և մյուսները)։

Զանազան կրոնների եկեղեցին ու տերտերները կապիտալիստների ու կալվածատերերի օգնականներն էին, ցարական իշխանության օգնականները՝ բանվորների և գյուղացիների ճնշման գործում։ Տերտերներն ասում էին, որ ցարական իշխանությունն աստծուց է, որ թագավորի, կալվածատերերի ու կապիտալիստների իշխանությանը միշտ պետք է հնազանդ լինել։ Նրանք աղոթում էին թագավորի համար, կոչ էին անում ժողովրդին համբերել, խոստանում աշխատավորներին լավ կյանք մահվանից հետո։ Այդ էին սովորեցնում դպրոցներում։ Դպրոցներում տերտերներն ու աղանդավորները բանվորների և գյուղացիների երեխաների գիտակցությունը մթնեցնում էին, դպրոցներ քիչ էին. կապիտալիստների ու կալվածատերերի համար ձեռնտու չէր, որ բանվորներն ու գյուղացիներն անգրագետ մնան (անգրագետին շահագործելը հեշտ է)։

Կոմունիստների-բոլշևիկների կուսակցությունը՝ որը կազմակերպել է Լենինը, ղեկավարում էր բանվորներին ու գյուղացիներին թագավորի, կապիտալիստների և կալվածատերերի դեմ տարած կռվում։ Կուսակցությունը կազմված է ամենալավ, գիտակից, տոկուն բանվորներից։

1905 թ. եղավ առաջին հեղափոխությունը։ Կապիտալիստները, կալվածատերերը, ցարական իշխանությունը խիստ կերպով պատժեցին բանվորներին ու գյուղացիներին, որոնք կռիվ էին սկսել։

Այդ կռվում ընկան շատ լավ հեղափոխականներ։

Նրանք շատ դժվար աշխատանք էին կատարում բանվորներին միացնելու և կազմակերպելու համար։ Ստիպված էին հավաքվել և աշխատել գաղտնի։ Ցարական ոստիկանությունը հեղափոխականներին բռնում էր, բանտ նստեցնում, հեռավոր վայրեր աքսորում. ցարական դահիճները շատ հեղափոխականների մահապատժի ենթարկեցին։

Առանձնապես ցարական իշխանությունը հետևում էր այնպիսի բոլշևիկ-ղեկավարներին, ինչպես էին Լենինը, Ստալինը, Ֆրունզեն, Ձերժինսկին, Կալինինը, Վորոշիլովը։ Նրանց բանտարկում էին, հեռավոր վայրեր աքսորում. նրանք ստիպված էին պահվել։ Բայց նրանք շարունակում էին պայքարը բանվորներին շահագործումից ազատելու համար։

Բանվոր դասակարգի կուսակցությունը՝ բոլշևիկների կուսակցությունը՝ կազմակերպված և համախմբված լինելով, 1917 թ. հաղթանակ տարավ կապիտալիստների, կալվածատերերի ու ցարի դեմ։

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

1914 թ. զանազան երկրների կապիտալիստները պատերազմ սկսեցին նոր երկրներ գրավելու, կողոպտելու և բաժանելու համար։ Բայց որովհետև իշխանությունը բուրժուազիայի ձեռքն էր, բուրժուազիան ուժով ստիպում էր բանվորներին ու գյուղացիներին գնալ կռվելու։ Պատերազմում շատ մարդ կոտորվեց, բոլոր երկրների (պատերազմում մասնակցող) բանվորները պատերազմից աղքատացան. քայքայվեցին և անհաշիվ դժբախտություն կրեցին։

Կապիտալիստները՝ գործարանների, ֆաբրիկաների տերերը շահվում էին պատերազմից։ Տերտերներն օգնում էին կապիտալիստներին քշելու զորքերը պատերազմի դաշտ, օրհնում էին զանազան երկրների զորքերին միմյանց դեմ կռիվ գնալու համար։

Երեք տարի պատերազմից հետո, 1917 թ. բանվորներն ու գյուղացիները ապստամբեցին և հեղափոխությանը միացող զինվորների ու նավաստիների օգնությամբ տապալեցին նախ թագավորին, ապա կապիտալիստներին, 1917 թ. հոկտեմբերին բանվորները բոլշևիկների կուսակցության ղեկավարությամբ, հաստատեցին իրենց իշխանությունը—խորհրդների իշխանությունը (հոկտեմբերյան օրերի կռվի մի շարք պատկերներ տալ, (օրին. ձմեռային պալատի գրավումը Լենինգրադում, Կրեմլի գրավումը Մոսկվայում)։ Խորհրդները վերջ տվին պատերազմին և հաշտություն առաջարկեցին բոլոր ազգերին։ Խորհուրդները գրավեցին կալվածատերերի հողերը, կապիտալիստների գործարանները, ֆաբրիկները, հանքերը, ճանապարհները։ Այդ բոլորի տերը եղան բանվորներն ու գյուղացիները, որոնք կառավարում են երկիրը խորհուրդների միջոցով։ Հոկտեմբերյան հեղափոխությունը ազատեց բանվորներին ու գյուղացիներին կապիտալիստների ու կալվածատերերի ճնշումից, նա ազատեց ճնշված ազգերի բոլոր աշխատավորներին—ուկրաինացիներին, թաթարներին, վրացիներին, հրեաներին, հայերին և այլն։ Մեր երկրում ապրող բոլոր ազգերը ստացան հավասար իրավունքներ։

Հոկտեմբերյան հեղափոխության և խորհուրդների ղեկավարը Վ. Ի. Լենինն էր, կոմունիստների-բոլշևիկների կուսակցության ղեկավարը։ Այսպես կազմվեց առաջին բանվորական պետությունը։ Կոմունիստական կուսակցություններ կան և ուրիշ երկրներում։ Այնտեղ նրանց հետևում է կապիտալիստների իշխանությունը, բայց նրանք համառ կռիվ են մղում բանվորների ու գյուղացիների ազատության և խորհրդային իշխանություն հաստատելու համար։

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՆ Է

Գրավելով իշխանությունը, բանվորներն ու գյուղացիներն սկսեցին վերաշինել կապիտալիստների պատերազմի հետևանքով քայքայված երկրի տնտեսությունը, բայց կապիտալիստներն ու կալվածատերերը ամեն միջոցներ ձեռք էին առնում, որ խորտակեն բանվորա-գյուղացիական իշխանությունը և նորից հաստատեն իրենց տիրապետությունը։ Նրանք հավաքում էին Ռուսաստանի զանազան մասերից զինվորներ կուլակներից, անգիտակից գյուղացիներից, վերջինները չէին հասկանում, թե ում հետևից պետք է գնալ։ Կապիտալիստները, կալվածատերերը և նրանց գեներալները բնակիչներին ստիպելով վերցնում էին իրենց բանակի մեջ։ Այդ բանակներն էին, որ նախկին սպաների ու գեներալների գլխավորությամբ, պատերազմի դուրս եկան խորհուրդների դեմ։ Դա սպիտակ բանակն էր։

Նրանց օգնության հասան օտար երկրների կապիտալիստներն ու կալվածատերերը։ Նրանք օգնում էին սպիտակների բանակին զենքով, զորքով, փողով։ Սպիտակ բանակին օգնում էին և տերտերները։

Խորհրդային իշխանությունը բանվորներից ու գյուղացիներից կազմակերպեց իր Կարմիր բանակը և Կարմիր նավատորմը, խորհուրդները պաշտպանելու համար։

Կարմիր բանակը ջարդեց բոլոր սպիտակ բանակները։ Նա քաջությամբ պայքարեց բանվորների և գյուղացիների համար (ցույց տալ Պերեկոպի օրինակը և ուրիշ. ցույց տալ կռիվների օրինակներ այնպիսի կարմիր հրամանատարների մասնակցությամբ, ինչպիսին են Չապայեվը, Ֆրունզեն, Վորոշիլովը, Բուդյոննին)։

Ուրիշ երկրների բանվորները օգնության հասան խորհուրդներին սպիտակ գվարդիականների դեմ տարած կռվին, մաքառելով իրենց երկրի կապիտալիստների դեմ։

Ամբողջ աշխարհի կապիտալիստները այժմ էլ զորեղ կերպով պատրաստվում են կռվելու խորհուրդների երկրի դեմ, կապիտալիստները չեն կարող հաշտվել, որ մեզնում տեր են ոչ թե կապիտալիստներն ու կալվածատերերն, այլ բանվորներն ու գյուղացիները։ Ուրիշ երկրներում կապիտալիստները հիմա էլ իշխանություն ունեն և ճնշում են բանվորներին։ Բոլոր երկրներում բանվորները պայքարում են կապիտալիստների դեմ։

Կարմիր բանակը կպաշտպանի մեր երկիրը և կջախջախի կապիտալիստներին։ Կարմիր բանակը—բանվորների և գյուղացիների բանակն է։ Նա պաշտպանում է բանվորների ու գյուղացիների շահերը, եթե կապիտալիստները հարձակվեն խորհրդային իշխանության վրա, Կարմիր բանակը թշնամիների առաջը կառնի և կջարդի նրանց մյուս երկրների պրոլետարիատի աջակցությամբ։

Կարմիր բանակում կարող են լինել բոլոր ազգությունների միայն աշխատավորները։ Աշխատավորների թշնամիները (կուլակները, տերտերները և ուրիշները) չեն ընդունվում։

Մեր երկրի աշխատավորները հոգս են տանում, որ Կարմիր բանակը լավ պատրաստված լինի պաշտպանելու ԽՍՀՄ։

Կարմի բանակայինները միայն զինվորական գործ չեն սովորում։ Նրանք սովորում են հատուկ դպրոցներում և ստանում գիտելիքներ զանազան մասնագիտություններից։

7504-53

Կարմիր բանակայինները մեծ հասարակական աշխատանք են տանում. Նրանք մասնակցում են խորհուրդների աշխատանքին, օգնում կոլտնտեսություններին, օգնում ֆաբրիկաներին, գործարաններին և տրանսպորտին։ Կարմիր բանակը պաշտպանում է Խորհրդային Միությունը կապիտալիստներից ու կալվածատերերից. նա ամրացնում է խորհուրդների իշխանությունը, պաշտպանում խորհուրդները, վորպեսզի սոցիալիզմ կառուցվի։

Լինել կարմիր բանակային—մեծ պատիվ է և խոշոր պարտականություն մեր յերկրի պրոլետարիատի և կապիտալիստական յերկրների աշխատավորների առաջ։

Աշակերտները և պիոներները կապ են պահպանում Կարմիր բանակի և Կարմիր նավատորմի հետ։ Նրանք էլ պատրաստվում են յերկրի պաշտպանության համար։

ԻՆՉ ՏՎԵՑ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ

1. **ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ։** Հոկտեմբերյան հեղափոխությունը բանվորներին ու գյուղացիներին իրենց յերկրի տերը դարձրեց։ Հողը, ֆաբրիկաներն ու գործարանները պատկանում են աշխատավորներին։ Ֆաբրիկաների, գործարանների, ու կոլտնտեսությունների աշխատանքները ղեկավարում են խորհուրդները։

Ամեն մի քաղաքում ու գյուղում կա բանվորների ու գյուղացիների խորհուրդ։ Խորհուրդները կազմվում են աշխատավորների ընտրած ամենալավ բանվորներից ու գյուղացիներից, վորոնք կարող են պաշտպանել և լավացնել բանվորների, կոլտնտեսականների, բատրակների գյուղացիների՝ չքավորների ու միջակների՝ կյանքը և աշխատանքը։ Խորհուրդները—դա աշխատավորների իշխանությունն է։ Խորհուրդներում տեղ չունեն կապիտալիստները, կալվածատերերը կուլակներն ու տերտերները։ Ղեկավարող դերը խորհուրդներում բանվորներին է պատկանում։ Խորհուրդները պայքար են մղում բանվորների ու գյուղացիների թշնամիների—կուլակների, վնասարարների դեմ (օրինակներ)։ Այդ կռվում աշխատավորների շահերի պաշտպան է հանդիսանում ԳՊՎ (ГПУ)։ Խորհուրդների պայքարը և աշխատանքը ղեկավարում են կոմունիստները՝ ամենաառաջավոր, գիտակից, տոկուն բանվորներն ու կոլտնտեսականները, վորոնք հասկանում են բոլոր բանվորների, բոլոր աշխատավորների շահերը։

Բոլոր ազգությունների բանվորներն ու գյուղացիները այժմ իրենք են կառուցում իրենց կյանքը նոր ձևով։ Խորհուրդները նորոգեցին ֆաբրիկներն ու գործարանները, լավացրին այն. Նրանք շինում են շատ նոր ֆաբրիկներ ու գործարաններ, յերկաթուղիներ, կազմակերպում կոլտնտեսություններ, խորհտնտեսություններ, (կառուցում են պլանով—հնգամյակով)։ Մեր յերկիրը դարձնում են արդյունաբերական։ Շատ բան, վոր առաջ արտասահմանից եյինք բերում, շինում են հիմա իրենք (օրինակներ) իրենց գործարաններում ու ֆաբրիկներում։

Բանվորներն աշխատում են 7 ժամ։ Բանվորների աշխատավարձն ավելանում է. կառուցվում են բանվորների համար նոր տներ և քաղաքամասեր։

Բանվորներն օգտվում են սանատորիաներից, հանգստյան տներից, կուրորտներից, ունեն արձակուրդ. գործարաններում ու ֆաբրիկներում հոգ են տանում նրանց աշխատանքի պաշտպանությանը. բանվորներն ու նրանց յերեխաները սովորում են զանազան դպրոցներում, կուրսերում, բանֆակներում, ԲՈՒՀ երում։ Բանվորների համար կազմակերպվում է հասարակական սնունդ, կուլտուրական հանգիստ և այլն։

Գյուղացիները կոլտնտեսություններում բարձրացնում են իրենց նյութական դրությունը, թեթևացնում են իրենց աշխատանքը, մեքենաների օգնությամբ բարձրացնում բերքը, մշակում տնտեսության նոր ճյուղերը։ Գյուղացի կոլտնտեսականներն ու անհատականները և նրանց յերեխաները սովորում են դպրոցներում, կուրսերում, բանֆակներում, ԲՈՒՀ երում. գյուղում ստեղծվում է նոր կենցաղ։ Առաջ մեր յերկրում բանվորների ու գյուղացիների յերեխաների համար չկային մանկապարտեզներ, մանկական հրապարակներ, մսուրներ։ Բանվորների ու գյուղացիների յերեխաների մեծամասնությունը անգրագետ եր մնում։ Միայն բավարար կրթություն եյին ստանում կապիտալիստների, կալվածատերերի և հարուստների յերեխաները։

Խորհրդային իշխանությունը ընդարձակում է կուլտուրական շինարարությունը գյուղում, լավացնում բնակչության առողջապահության պաշտպանության գործը, նա մատչելի դարձրեց բժշկական օգնությունը։

Կոլտնտեսականները սերտ կապված են քաղաքի հետ, բանվոր դասակարգի հետ։ Բանվորներն օգնում են կոլտնտեսականներին և գյուղացիներին՝ չքավորներին ու միջակներին՝ նոր ձևով կառուցելու իրենց կյանքը։

Խորհուրդների իշխանությունը հոգում է բանվորների ու գյուղացիների, բոլոր աշխատավորների մասին։ Խորհուրդները օգնում են լավացնելու բանվորների ու կոլտնտեսականների կյանքը։ Կյանքը չի կարելի լավացնել առանց գիտության և տեխնիկային տիրապետելու. խորհրդային իշխանությունն օգնում է աշխատավորներին տիրապետելու գիտության ու տեխնիկային։ Խորհրդային իշխանությունը գյուղացիներին ու բանվորներին և նրանց յերեխաներին մատչելի դարձրեց բարձրագույն կրթությունը։ Նա բաց արավ բանֆակներ և զանազան կուրսեր բանվորների ու գյուղացիների համար, նա մտցրեց դպրոցը բնակչությանը, և այժմ մեր բարձրագույն դպրոցներում սովորողների մեծամասնությունը բանվորներ ու գյուղացիներ են և նրանց յերեխաները։

Խորհրդային իշխանության բոլոր օրենքները բանվորների ու գյուղացիների շահերի պաշտպանության համար են։ Այդ օրենքներով և տղամարդիկ և կանայք, բոլոր ազգությունների աշխատավորներն ունեն հավասար իրավունք։

2. **ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵՑ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ, ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻ ՅԵՎ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ։** Կապիտալիստների և կալվածատերերի ժամանակ բանվորուհիների և գեղջկուհիների կյանքն ու աշխատանքը շատ ծանր եր։ Տղամարդու աշխատանքին հավասար կնոջ աշխատանքի համար ավելի պակաս եյին վճարում, ստիպում եյին կնոջ կատարել առողջությանը վնասակար և ուժից վեր աշխատանք։ Կնոջ վրա յեր ընկնում, բացի այդ, նաև տան տնտեսության ծանր աշխատանքը։

Կանանց պահում եյին խավարի մեջ, չեյին թողնում, վոր սովորեն, կրոնական վախի տակ եյին պահում, հնազանդ տղամարդու իշխանության։

Առանձնապես ծանր պայմաններում եյին ապրում ԽՍՀՄ-ի հարավում և արևելքում զանազան ազգությունների կանայք (Կովկաս, Թուրքմենստան, Թաթարստան և այլն)։ Խորհրդային իշխանությունը վերջ տվեց կանանց իրավազրկությանը։ Խորհրդային իշխանությունը հավասարեցրեց կանանց տղամարդկանց հետ իրենց իրավունքներով։

Կինը ազատագրվում է։ Նրա առաջ բացվում է հասարակական աշխատանքներին և արտադրության աշխատանքին մասնակցելու լայն հնարավորություն։ Խորհրդային իշխանությունը հոգս է տանում կնոջ լուսավորության մասին, օգնում է նրան ազատվելու կրոնական հաշիշից, կրոնը խանգարում է նոր կենցաղի համար տարված պայքարին, տերտերները և այլ կրոնավորները մաքառում են նոր կենցաղի դեմ, կնոջ ազատագրման դեմ (օրինակներ)։

Խորհրդային իշխանությունը լավացնում է յերեխաների կենցաղը։ Մինչ հեղափոխությունը մեր յերկրում չկային մանկամսուրներ, մանկապարտեզներ և հրապարակներ։ Յերեխաների մեծ մասն անգրագետ եր մնում։ Յերեխաները ծանր աշխատանք եյին կատարում գործարանում, արհեստանոցում, և գյուղատնտեսության ու տան տնտեսության մեջ։

Այժմ մեր յերկրում օրեցօր ավելանում են մանկական հաստատությունները։ Յերեխաների կենցաղը լավանում է։ Պայքար է մղվում յերեխաների անխնամության դեմ։ Անխնամությունը վերացվում է։ Յերկրում մտցրված է ընդհանուր ուսում։ Բոլոր յերեխաները հիմա սովորում են։ Չքավորների յերեխաները նպաստ են ստանում խորհուրդներից և հասարակական կազմակերպություններից։ Ընդհանուր ուսումը նրա համար է պետք, վոր բոլորը ավելի լավ պատրաստվեն մասնակցելու նոր կյանքի շինարարության և սոցիալիզմի կառուցմանը, մարտնելու ամեն տեսակի ճնշումների դեմ։ Հոկտեմբերիկները և պիոներները իրենք էլ պայքարում են յերեխաների կենցաղի լավացման համար և օգնում կանանց ազատագրման գործին (մասնակցում են նոր կենցաղի համար տարված ագիտացիային ցույցերով, գեղարվեստական յելույթներով, հոդվածներ և գրքեր կարդալով իրենց տնեցիներին)։

3. **ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՑՐԵՑ ԲՈԼՈՐ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ ՅԵՎ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՄԱՐ։** Խորհուրդների յերկրում զանազան ազգությունների բանվորներն ու գյուղացիներն ապրում են համերաշխ, մեկ ընտանիքի պես։ Նրանք ապրում են տարբեր բնական և տնտեսական պայմաններում, խոսում տարբեր լեզուներով։ Բայց

բոլորի հոգսը մեկ է՝ վորքան կարելի յե շատ ֆաբրիկներ և գործարաններ, կոլտնտեսություն և խորհտնտեսություն ունենալ, լավացնել նրանց աշխատանքը, վորպեսզի բոլոր բանվորների և գյուղացիների համար կյանքը լինի ուրախ և պայծառ։ Բոլորն էլ միևնույն թշնամիներն ունեն—կալվածատերեր, կուլակներ, կապիտալիստները և զանազան կրոնների տերտերները։ Բոլոր ազգությունների աշխատավորները իրենց ընդհանուր կռվում մի նպատակ ունեն—պահպանել Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումները և կառուցել սոցիալիզմ։ Բոլոր ազգությունների աշխատավորների միահամուռ պայքարով մենք կկառուցենք սոցիալիզմը և կհաղթահարենք բոլոր թշնամիներին։ Թագավորը, կապիտալիստներն ու կալվածատերերն իրար դեմ եյին գրգռում տարբեր ազգությունների (ժողովուրդների) աշխատավորներին։ Այլ ժողովուրդների աշխատավորներն ավելի եյին ճնշվում, քան ռուս բանվորներն ու գյուղացիները։ Խորհուրդների իշխանությունը բոլոր ժողովրդներին իրենց իրավունքով հավասարեցրեց։ Նա կազմակերպեց ավելի կուլտուրական ժողովուրդների օգնությունը ավելի պակաս կուլտուրական ժողովուրդների աշխատավորներին։ Այժմ, խորհրդային իշխանության ժամանակ Միության բոլոր ազգությունների աշխատավորները միասին կռվում են, միասին կառուցում սոցիալիզմ և այդ կառուցման ու պայքարի մեջ իրար օգնություն են ցույց տալիս։ Յեվ այժմ արդեն այն ժողովրդների մոտ, վորոնք բոլորովին արդյունաբերություն չունեյին, աճում են գործարաններն ու ֆաբրիկները, կառուցվում յերկաթուղագծեր (Թուրքսիբ), կազմակերպվում կոլտնտեսություններ ու խորհտնտեսություններ։ Այն ժողովուրդները, վոր վոչ մի գրագետ չունեյին, ընդհանուր գրագիտության են հասնում (Ադիգեյը)։ Կրոնը արգելք ե նոր կենցաղի համար տարված կռվում։ Տերտերները և մյուս կրոնավորները կռվում են նոր կենցաղի դեմ, բոլոր ազգությունների խավարից ու ճնշումից ազատվելու դեմ։

Տարբեր ազգությունների աշակերտներն ու պիոներներն իրար հետ կապ են պահպանում։ Աշակերտները կապ են պահպանում և ուրիշ յերկրների մանկական կազմակերպությունների հետ։

Ուրիշ յերկրներում ճնշված ժողովուրդները հիմա յել խստիվ շահագործվում են կապիտալիստների կողմից, (օրինակ նեգրերն Ամերիկայում)։

Բոլոր յերկրների կապիտալիստներն աշխատում են ավելի մեծ չափով կողոպտել, օրինակ, այնպիսի մեծ յերկրներ, ինչպես են Չինաստանը և Հնդկաստանը։ Չինաստանի և Հնդկաստանի աշխատավորներն արդեն յերկար տարիներ պայքար են մղում իրենց արտադրության համար։ Այդ պայքարում ընկան շատ չինացի և հնդիկ աշխատավորներ։ Չինաստանի մի մասում կա արդեն խորհրդային իշխանություն։

ԽՍՀՄ-ի բանվորներն ու գյուղացիները բոլոր ճնշված ժողովրդների բարեկամներն են։ Բոլոր յերկրների բանվորները պետք է օգնեն նրանց իրենց ազատության համար տարած կռվում։ Բոլոր յերկրների կապիտալիստները թշնամի յեն բանվորներին, գյուղացիներին և ճնշված ժողովրդներին։

Մայիսի 1-ը միջազգային պրոլետարիատի հեղափոխական ուժերի ստուգատեսի և պայքարի օր ե։ Այդ օրն ամբողջ աշխարհի բանվոր դասակարգը դուրս ե գալիս կապիտալիստների դեմ։ Բանվորների դրոշակների վրա գրված ե՝ «Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք» լոզունգը։ Միևնույն ժամանակ ԽՍՀՄ-ում Մայիսի 1-ը սոցիալիզմի կառուցման պայքարի օր ե։ ԽՍՀՄ-ը համաշխարհային պրոլետարիատի հարվածային բրիգադն ե։

ՅԵՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ (100 ժամ)

1. ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՄԻՆՉԵՎ 1905 Թ. (20 ժամ)

ԱՆՑՅԱԼԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ։ Բանվորներն ու գյուղացիները 1917 թ. Հոկտեմբերին յերկար և համառ պայքարից հետո հաղթություն տարան կալվածատերերի և կապիտալիստների դեմ։ Այդ հաղթանակն ապահովել եր բոլշևիկների կուսակցության ղեկավարությունը, վոր ստեղծեց Լենինը։ Մեր անցյալի պատմությունը, բանվորների և գյուղացիների դասակարգային կռվի պատմությունը պարզ ցույց ե տալիս, վոր բանվորների ու գյուղացիների հաղթությունը հնարավոր ե միայն բանվոր դասակարգի կուսակցության ղեկավարությամբ։

1. ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ՃՈՐՏԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ։ Կար ժամանակ, վոր մեր յերկրում չկային ֆաբրիկներ ու գործարաններ, չկային կապիտալիստներ ու բանվորներ։ Բոլոր մթերքները արտադրում եյին ձեռներով, հասարակ գործիքներով՝ գյուղացիներն ու արհեստավորները։ Բոլոր հողերը պատկանում եյին կալվածատերերին։ Գյուղացիներն ու արհեստավորները պատկանում եյին կալվածատերերին, պարտավոր եյին աշխատել նրանց համար (հասկացողություն տալ կոռի մասին)։ Իրավունք չունեյին նրա մոտից հեռանալու, կալվածատերը նրանց վորպես իր սեփականության լիակատար տերն եր։ Ինքն եր դատում նրանց և պատժում, վարվում այնպես, ինչպես ցանկանում եր, կարող եր ծախել ուրիշ կալվածատիրոջ։ Ծանր եր ճորտ գյուղացիների կյանքը յեկեղեցիների հողերի վրա և ազգային փոքրամասնությունների դրությունը, վորոնց կողոպտում եյին ցարական չինովնիկները։ (Պատկերներ բերել կալվածատերերի տնտեսության, ճորտ գյուղի, պատկերներ կալվածատերերի կամայականությունների, ազգային փոքրամասնությունների կողոպտման, նյութը վերցնել տեղական յերկրամասի պատմությունից։

Գյուղացիներին հնազանդ պահելու համար կալվածատերերին օգնության եր գալիս ցարական իշխանությունն իր զորքով, վոստիկաններով ու բանտերով։ Թագավորն ինքն առաջին կալվածատերն եր։ Թագավորին ու կալվածատերերին եյին ծառայում յեկեղեցին և տերտերները։ Գյուղացիները հաճախ փախչում եյին ճորտատիրական ճնշումից անտառներ, ծայրամասեր, հաճախ ապստամբում ճնշողների դեմ. (բացատրել գյուղացիական կռիվների ձևերը՝ հրդեհել, ապստամբել, կալվածատերերի սպանություններ). բայց վոչ մի անգամ գյուղացիությունը չկարողացավ հաղթել անկազմակերպ լինելու պատճառով։ Բացատրել գյուղական անկազմակերպվածության պատճառները, վորոնք ծագում են նրանց տնտեսական դրությունից։ Բերել պուգաչևյան շարժման օրինակը։

Միայն բանվոր դասակարգը կարող ե տալ գյուղացիներին հեղափոխական ղեկավարություն։

2. ՃՈՐՏԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ ՅԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ։ Արդյունաբերության զարգացման և ծավալվող գյուղացիական հուզմունքների ազդեցության տակ ցարական կառավարությունը ստիպված յեղավ 1861 թ. վերացնել ճորտատիրությունը. դրանից օգտվեցին միայն կալվածատերերն ու կապիտալիստները (գործարանների ու ֆաբրիկների տերերը)։ Ամբողջ լավ հողը դարձյալ մնաց կալվածատերերի ձեռքին, գյուղացիները քիչ հող ստացան, ամենավատը. պարտավոր եյին վճարել կալվածատերերին 50 տարվա ընթացքում գնման վճարներ և բացի դրանից, տուրքեր տալ ցարական իշխանությանը։ Գյուղացիների մեջ շերտավորում ե սկսվում. կալվածատերերին ավելի մոտիկ սպասավորները գյուղացիներից պարապելով առևտրով, դառնում են կուլակներ։ Գյուղացիության հիմնական մասը—միջակները—ավելի ու ավելի աղքատանում են, քայքայվելով կուլակներից ու կալվածատերերից։ Քայքայված գյուղացիները թողնում եյին գյուղատնտեսությունը և գնում գործարաններ, վորոնք ճորտատիրության վերացումից հետո արագ կերպով զարգանում են։ Հեռանալով կալվածատերերի ու կուլակների ճնշումից և դառնալով բանվորներ, նրանք ընկնում են կապիտալիստների ճնշման տակ։

3. ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ։ Ցույց տալ բանվորների դրությունը Մորոզովի մանուֆակտուրայի օրինակով. ծանր բնակարանային պայմաններ, քիչ աշխատավարձ, շահագործում գործարանային կրպակների միջոցով, տուգանքներ, աշխատանքային յերկար օր, կիսաքաղց կյանք, կանանց և յերեխաների աշխատանք։

Համարյա արդյունաբերության ծագման օրից բանվորները կռիվ են մղում կապիտալիստների դեմ, լավացնելու իրենց վիճակը։ Բանվորների կռվի ձևերը տարբերվում են գյուղացիներից—գործադուլներ և ցույցեր։ Բանվորներն սկսում են դուրս գալ ավելի կազմակերպված։

Բացատրել, վոր բանվորների քաղաքական և տնտեսական դրությունը միացնում ե նրանց և օգնում հասկանալու ընդհանուր պայքարի անհրաժեշտությունը շահագործողների դեմ։ Կազմակերպվածության նշանակությունը հեղափոխական կռվի համար։ Բերել 1885 թ. Մորոզովի գործադուլի օրինակը։

4. ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՅԵՎ ՆՐԱ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ։ Բանվորական կազմակերպությունների յերևան գալը։ Բերել Ստեփան Խալտուրինի, Մոխեենկոյի օրինակները։ Ռուսաստանի բանվորական կազմակերպությունները օգտագործում են արտասահմանյան՝ ֆրանսիական, անգլիական, գերմանա-

կան բանվորների հեղափոխական կռվի փորձը, վորտեղ արդյունաբերությունը ծագեց և զարգացավ ավելի վաղ և վորտեղ դրա համար ավելի վաղ ե սկսվում կազմակերպված հեղափոխական շարժումը: Համառոտ հասկացողություն տալ Պարիզյան կոմունայի մասին: Բանվորական շարժման ղեկավարներն արևմուտքում—Մարքս և Ենգելս: Անցյալ դարի վերջին Լենինը կազմակերպում ե մեր յերկրում բանվորական խմբակներից բանվոր դասակարգի հեղափոխական կուսակցություն: Մարքսը, Ենգելսը և Լենինը բանվոր դասակարգի և նրա կուսակցության նպատակ դրին՝ բանվորների և գյուղացիների իշխանություն հաստատելը, հողի և գործարանների մասնավոր սեփականությունը վերացնելն և սոցիալիզմ կառուցելը: Սոցիալիզմը մի հասարակակարգ ե, վորտեղ չկա մարդու շահագործում, մարդու վրա ճնշում՝ մարդու կողմից, չկա դասակարգերի բաժանում մարդկանց մեջ, վորտեղ բոլորն էլ աշխատում են ֆաբրիկաներում, գործարաններում և հողի վրա, վորոնք չեն պատկանում առանձին մարդկանց, այլ ամբողջ հասարակության սեփականություն են կազմում: Մարդիկ իրենց բոլոր ուժը գործ են դնում բնության դեմ կռվելու, կազմակերպելու և լավացնելու կուլտուրական կյանքը բոլորի համար:

5. ՑԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՑԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՄ: Կուսակցության աշխատանքի հետեվանքով բանվոր դասակարգի գիտակցությունն աճում ե և անցյալ դարի վերջից զարգանում ե մասսայական բանվորական շարժումը: Ցարական կառավարությունը, պաշտպանելով բուրժուազիային, իր բոլոր ուժը՝ զորքը, վոստիկանությունը, յեկեղեցին, դուրս ե բերում հեղափոխական բանվորների դեմ և առանձնապես նրանց ղեկավարների դեմ: Բանտերը լցվում են հեղափոխական բանվորներով: Լենինին, Ստալինին աքսորում են հեռու Սիբիր, նրանց հետ և շատ ուրիշ հեղափոխականների: Ցարական կառավարությունը լայն չափերով սկսում ե գործադրել հին ձևերի հետ միասին կռվի նոր ձևեր, օգտվելով մասսաների անգիտակցությունից, գրգռում ե մի ազգությունը մյուսի դեմ, կազմակերպում ե հրեաների, հայերի կոտորածներ: Յեկեղեցին, օգտագործելով հետամնաց անգիտակից մասսաների կրոնականությունը, օգնում ե վոստիկանությանը կոտորածներ կազմակերպելու: Բանվորական կազմակերպությունները քայքայելու համար վոստիկանությունը գաղտնի պրովոկատորներ ե ուղարկում նրանց մոտ: Բայց բանվոր դասակարգի գիտակցությունը աճում ե շնորհիվ կուսակցության աշխատանքի և հեղափոխական կռվի փորձի: Բանվորների գործադուլները և գյուղացիական ապստամբությունները փոխվում են կռվի՝ վոստիկանների դեմ: Օրինակ բերել 1901 թ. Օբուխովի դիմադրությունը: Դրա հետ միասին բացատրել Մայիսի 1-ի նշանակությունը վորպես բանվորների պայքարի միջազգային օր: Ցարը և նրա սպասավորները չկարողացան կանգնեցնել այդ շարժումը, և յերկրում պայթեց առաջին ռուսական հեղափոխությունը:

2. 1905 Թ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ (10 ժամ)

1. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ: 1904 թ. դեկտեմբերին Պետերբուրգում, Պուտիլովի գործարանում բռնկեց գործադուլ: Դրանից հետո գործադուլ արին Պետերբուրգի բանվորների մեծամասնությունը: Վոստիկանական պրովոկատոր Գապոն տերտերից խաբված, Պետերբուրգի բանվորները կիրակի, 1905 թ. հունվարի 9-ին գնում են թագավորի մոտ խնդրելու, վոր իրենց դրությունը լավացնի: Խաղաղ ցույցի օրինակը բերել խաչվառներով, սրբերի պատկերներով և այլն: Բանվորների կրոնասիրությունը օգնեց Գապոնին նրանց խաբելու: Բանվորների գնդակահարության պատկերը Ձմեռային պալատի մոտ և քաղաքի մյուս մասերում: Գնդակահարությունը զայրույթ ե առաջ բերում նույնիսկ նվազ գիտակից բանվորների մեջ թագավորի դեմ: Հեղափոխական կազմակերպությունների ղեկավարությամբ վոտքի յե կանգնում ամբողջ բանվորական Ռուսաստանը՝ մասսայական գործադուլներ և նրանց ազդեցությամբ գյուղացիական ապստամբություններ: (Սրա հետ բացատրել, ինչո՞ւ մենք հիմա՞ հիշատակում ենք «արյունոտ կիրակին»):

2. ԶՈՐՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ: Ցարական բանակը և նավատորմը կազմված եր բանվորներից ու գյուղացիներից, վորոնք կտրված եյին աշխատավոր մասսաներից և վարժվում սպաների կողմից պաշտպանելու ցարական կարգը և բուրժուազիայի ու կալվածատերերի շահերը: 1905 թ. հեղափոխության ժամանակ ավելի գիտակից զինվորները և նավաստիները ապստամբում են սպաների և ցարական կարգերի դեմ և անցնում հեղափոխական ժողովրդի կողմը: «Պոտյոմկին» զրահանավի ապստամբությունը: Զորքի մեծամասնությունը անգիտակից լինելով, դեռևս թագավորի կողմն եր:

3. ԹԱԳԱՎՈՐԻ ԿՌԻՎԸ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԴԵՄ: Ցարական կառավարությունը հեղափոխությունը ճնշելու համար գործի յե դնում իր բոլոր զորքը, կազմակերպում ե «սև հարյուրակ», վոր վոստիկանության ղեկավարությամբ կազմակերպում ե հրեական և այլ ազգությունների ջարդեր, սպանում հեղափոխականներին (բերել հրեական և հայկական կոտորածների օրինակներ): Յեկեղեցին օգնում ե ցարին և «սև հարյուրակին» մեկ ազգության անգիտակից մարդկանց մյուս ազգության դեմ հանելու: Բանվորական ցույցերի դեմ կռվելու համար յեկեղեցին կազմակերպում ե «յեկեղեցական թափորներ»: Հակառակ հեղափոխականների կարմիր դրոշակին, յեկեղեցին թափորներ ե կազմակերպում սպիտակ դրոշակներով: Աստծուն ունեցած հավատի հետևանքով տերտերներին հաջողվում ե իրենց հետևից քաշել անգիտակից բանվորների և գյուղացիների մի մասին: Արտասահմանի կապիտալիստները փողով օգնում եյին թագավորին հեղափոխությունը ճնշելու համար:

4. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ՑԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԶԻՆՎԱԾ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: Լենինը ղեկավարելով բոլշևիկների կուսակցությունը, առաջարկում ե բանվորներին պատրաստվել զինված ապստամբության: 1905 թ. հոկտեմբերին կազմակերպվում ե Պետերբուրգի բանվորական խորհուրդը, իսկ դեկտեմբերին բոլշևիկների ղեկավարությամբ, Լենինի գլխավորությամբ բանվորներն անցան Մոսկվայում և ուրիշ քաղաքներում զինված ապստամբության: Մոսկվայի Պրեսնայի ապստամբությունը: Ապստամբությունը ղեկավարում եր բոլշևիկների կուսակցությունը: (Մեքենավար Ուխտոմսկու օրինակը): Մասնակի ապստամբություններ մյուս քաղաքներում: Ապստամբություններ Անդրկովկասում:

5. ՑԱՐԱԿԱՆ ՎՐԻԺԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ: Հեղափոխության հաղթվելը: Յերկրի բոլոր մասերն են ուղարկվում պատժիչ զորախմբեր, վորոնք վոչնչացնում են ամբողջ գյուղեր, չխնայելով ծերունիներին, կանանց և յերեխաներին: Մասսայական ձերբակալություններ, զինվորական դատարանները հազարավոր մարդկանց կախաղան են հանում, բանտարկում, աքսորում, սև հարյուրակները շարունակում են կոտորածներ կազմակերպել: (Հեղափոխական կռվի ճնշման օրինակներ բերել ժամանակակից կապիտալիստական յերկրներում):

6. ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՑԵՎ 1905 Թ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԴԱՍԸ: 1905 թ. հեղափոխության ժամանակ գյուղացիների մեծ մասը, վոստիկանությունից հալածված և տերտերներից խաբված, դուրս չեկավ պաշտպանելու հեղափոխությունը: Գյուղացիությունը դեռ հետ եր մնում բանվորների հեղափոխական շարժումից, զորքի մեծամասնությունը դեռ թագավորի կողմն եր: 1905 թ. հեղափոխության փորձը հեշտացրեց 1917 թ. Հոկտեմբերի հաղթանակը: 1905 թ. հեղափոխությունը ցույց տվեց, վոր անհրաժեշտ ե բանվորների և գյուղացիների ամուր դաշինքը բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ և անհրաժեշտ ե հեղափոխության կողմը գրավել զորքը: Ցարական պատիժներից հետո բոլշևիկները հավաքելով իրենց ուժը, Լենինի առաջնորդությամբ շարունակում են ղեկավարել հեղափոխական կռիվը: Լենինյան «Պրավդա» թերթի դերը, վորպես հեղափոխական շարժման կազմակերպող: Լենայի գնդակահարման օրինակը բերել:

3. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՎԵԼԸ (15 ժամ)

1. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ: 1914 թ. ցարական կառավարությունը պատերազմ սկսեց: 1914 թ. պատերազմը համաշխարհային ե կոչվում, վորովհետև մասնակցում եյին համարյա բոլոր յերկրները (Ռուսաստան, Գերմանիա, Անգլիա, Ֆրանսիա, Ճապոնիա, Ամերիկա և ուրիշները): Պատերազմը սկսեցին կապիտալիստներն ու թագավորները նոր յերկրներ գրավելու նպատակով և նախկին գրավածները բաժանելու համար: Թագավորը և նրա սպասավորները, պրովոկատորներն ու տերտերները, մասսաների մեջ ագիտացիա յեին տանում պատերազմի համար, խաբելով բանվորներին ու գյուղացիներին ինչպես մեր յերկրում, այնպես և մյուս յերկրներում: Ամեն յերկրներում տերտերները աստծու անունով համոզում են բանվորներին ու գյուղացիներին սպանել

մյուս յերկրների նույնպիսի բանվորներին ու գյուղացիներին։ Բոլշևիկները հակառակ էին պատերազմին և դիմակազերծ էին անում թագավորի սպասավորներին, ապացուցելով, վոր պատերազմը կապիտալիստների հարստացման համար է։ Այդ բանի համար բոլշևիկներին հետևում են, աքսորում, գնդակահարում, բայց դադարեցնել նրանց հեղափոխական կռիվը ցարական կառավարության ուժերից վեր էր։ Պատերազմն առաջ բերեց բոլոր յերկրներում տնտեսության քայքայում, վորից տուժում էին միայն բանվորներն ու գյուղացիները։ Պատերազմում վիրավորվեցին ու սպանվեցին միլիոնավոր բանվորներ ու գյուղացիներ։ Շատ ընտանիքներ, այրիներ, որբեր մնացին առանց բնակարանի, առանց ուտելիքի, առանց աշխատողի։ Միայն կապիտալիստները, կալվածատերերը, կուլակներն ու նրանց սպասավորները շարունակում էին լավ ապրել, շահվելով պատերազմից։ Պատերազմի յերրորդ տարում, 1917 թ. փետրվարին (հին տոմարով) բռնկվեց նոր հեղափոխություն։

Փետրվարի հեղափոխության գլուխն էին կանգնած ինչպես և 1905 թ., Պետրոգրադի բանվորները։ Պետրոգրադից հետո ապստամբում են ուրիշ քաղաքներ։ Զորքերը անցնում են հեղափոխության կողմը։ Թագավորը ստիպվում է հրաժարվել իշխանությունից։ Իշխանությունը գրավում են կապիտալիստներն ու կալվածատերերը։ Նրանք խաբում են բանվորներին ու գյուղացիներին և շարունակում պատերազմը։ Բանվորներն ու գյուղացիները 1905 թ. օրինակով կազմակերպում են խորհուրդներ և բոլշևիկների ղեկավարությամբ շարունակում կռիվը կապիտալիստների դեմ։

2. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ. 1917 թ. ապրիլին արտասահմանից գալիս է Լենինը։ Լենինի լոզունգները՝ հաշտություն ժողովուրդներին, իշխանությունը՝ խորհուրդներին, հողը՝ գյուղացիներին, գործարանները՝ բանվորներին։ Բուրժուազիան խիստ ահաբեկում է սկսում հեղափոխական բանվորների դեմ և առաջին հերթին բոլշևիկների դեմ. Լենինը ստիպված էր պահվել Պետրոգրադից վոչ հեռու մի վրանում, վորտեղից շարունակում է ղեկավարել կուսակցությունը։ Բոլշևիկների և բոլշևիկյան լոզունգների ազդեցությունը շարունակում է աճել։ Զորքը և գյուղացիները խմբերով անցնում են բոլշևիկների կողմը։ Ապստամբում են ճնշված ազգությունները։ Հոկտեմբերի 25 ին Պետրոգրադում (Լենինգրադում), իսկ հետո մյուս քաղաքներում, բոլշևիկները Լենինի ղեկավարությամբ կազմակերպում են բանվորների զինված ապստամբություն և կործանում կապիտալիստների իշխանությունը։ Օրինակ բերել Ձմեռային պալատի գրոհը և «Ավրորա» մարտանավի մասնակցությունը հեղափոխության մեջ, կամ Կրեմլի գրավումը Մոսկվայում։ Հոկտեմբերյան օրերին Լենինի ղեկավարությամբ Սմոլնում հավաքվեց ամբողջ յերկրի խորհուրդների համագումարը։ Լենինի առաջարկությամբ համագումարն ընդունում է պատերազմը դադարեցնելու և հողերը գյուղացիներին տալու դեկրետը։ Այդ համագումարում ընտրվում է խորհրդային կառավարություն Լենինի գլխավորությամբ։ Խորհրդային իշխանության գլխավոր միջոցառումները՝ ֆաբրիկներն ու գործարանները և յերկաթուղիները հայտարարվում են բանվորների և գյուղացիների պետության սեփականություն, բոլոր քաղաքներում և գյուղերում կազմակերպվում են խորհուրդներ, հաստատվում է բոլոր ազգությունների աշխատավորների իրավունքի հավասարություն, հաստատվում է աշխատավոր կանանց և տղամարդկանց իրավունքների հավասարություն, զրկվում են խորհուրդներում մասնակցելու իրավունքից ճնշողները՝ կապիտալիստները, կալվածատերերն ու կուլակները և նրանց ծառաները՝ վոստիկանները, ժանդարմները և տերտերները։ Հոկտեմբերյան հեղափոխությունը—աշխարհում բանվոր դասակարգի առաջին լիակատար հաղթանակն է կապիտալիստների դեմ։

3. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ։ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո բանվորների ու գյուղացիների կռիվը չվերջացավ։ Կալվածատերերը, կապիտալիստները և կուլակներն աշխատում են վոչնչացնել խորհրդային իշխանությունը։ Նրանք արտասահմանի կապիտալիստների ոգնությամբ կազմակերպում են սպիտակ բանակներ և շրջապատում խորհրդային իշխանությունն ամեն կողմից,-գերմանական զորքերը Ուկրաինայում, գեներալ Միլլերը անգլիական զորքի ոգնությամբ Հյուսիսում, ադմիրալ Կոլչակը անգլիական, ամերիկական և յապոնական զորքի ոգնությամբ Սիբիրում, գեներալ Յուդենիչը անգլիական նավատորմի ոգնությամբ Պետերբուրգի տակ, հարավից անգլիական ու ֆրանսիական զորքերի ոգնությամբ գեներալ Դենիկինը և բարոն Վրանգելը. բացի այդ, կուլակային բանդիտ Մախնոն կողոպտում է իր բանդայով Ուկրաինայում, արևմուտքից լեհական պանները և ուրիշները։ Յերկրի ներսում էլ դրությունը շատ ծանր էր։ Սպիտակ բանդաները՝ պաներից և կուլակներից կազմված

կազմակերպում էին ապստամբություններ, սպանում բանվոր դասակարգի առաջնորդներին։ 1918 թ. նրանք սպանեցին Վոլոդարսկուն, Ուրիցկուն և վիրավորեցին Լենինին։ Սպիտակ զորքերի դեմ կռվելու համար բոլշևիկների կուսակցությունը ստեղծում է բանվորա-գյուղացիական Կարմիր բանակ։ Յերեքամյա հերոսական կռվի ընթացքում Կարմիր բանակը ջարդում է բոլոր սպիտակ գեներալների և նրանց հովանավորողների—արտասահմանյան կապիտալիստների բանակը։ Ցարիցինի, Ստալինգրադի, Ռոստովի, Պերեկոպի կռիվներից մի-յերկու օրինակներ բերել, կցելով, վորտեղ հնարավոր է, տեղական նյութ։ Կռիվները ղեկավարում են բոլշևիկները՝ Ստալինը, Վորոշիլովը, Ֆրունզեն, Բուդյոննին, Չապաևը, վորոնք դուրս են յեկել բանվորներից ու գյուղացիներից։ Սպիտակների բանակի և արտասահմանյան կապիտալիստների դեմ տարած կռվում խորհրդային բանվորներին ու գյուղացիներին ոգնում էին արտասահմանի բանվորները. նրանք կազմակերպում էին գործադուլներ, լոզունգներ բաց թողնում՝ «Հեռու ձեռներդ Խորհրդային Ռուսաստանից», նրանք թույլ չէին տալիս փոխադրելու կապիտալիստների սպիտակ բանակներին ուղարկած սպառազինությունն ու զենքերը, նրանք կազմակերպում էին ապստամբություններ սպիտակներին ոգնության ուղարկած զորքի մեջ։ (Սև ծովում ֆրանսիական նավատորմի վրա ապստամբություն Մարտիի ղեկավարությամբ)։ Կարմիր բանակի հաղթությունը ապահովված էր նրանով, վոր գյուղացիների և բանվորների պայքարը հաստատ և վստահ ձեռքով ղեկավարում էր բոլշևիկների կուսակցությունը և վոր բանվորներն ու գյուղացիները գիտեին, թե կռիվը իրենց շահերի համար է, կապիտալիստական և կալվածատիրական ճնշումից ազատվելու համար։ Մյուս յերկրներում՝ Գերմանիայում, Բուլղարիայում, Իտալիայում, Վենգրիայում՝ այդ տարիներում նույնպես հեղափոխությունները բռնկվեցին, բայց բուրժուազիային հաջողվեց տեռորի և խիստ պատիժների յենթարկելով հեղափոխական բանվորներին, ճնշել պրոլետարական հեղափոխությունը Արևմուտքում։ Նկարագրել Լիբկնեխտի, Լյուքսեմբուրգի սպանությունը։ Բանվորներն այնտեղ այժմ էլ պայքար են մղում խորհրդային իշխանություն հաստատելու համար, այդ կռիվն այնտեղ էլ ղեկավարում են կոմունիստները։

4. ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՆՑՆԵԼԸ։ Սպիտակ բանակներին հաղթելուց հետո խորհրդային իշխանությունն անցնում է տնտեսության վերականգնման և սոցիալիստական հասարակակարգի կառուցման։

Սոցիալիզմի հաղթանակը մեր յերկրում այժմ ապահովված է։ Սոցիալիստական շինարարությունը մեծ լարվածությամբ է առաջ գնում, վորովհետև յերկիրն առաջ շատ հետամնաց էր, վորովհետև միևնույն ժամանակ պետք է պայքարել դասակարգային թշնամիների մնացորդների դեմ՝ կուլակների և տերտերների, վորոնց ոգնում են արտասահմանյան կապիտալիստները, պատրաստելով մեր դեմ պատերազմ և վորոնք փորձում են խանգարել (վնասել) սոցշինարարությունը։ Բոլշևիկների կուսակցության ղեկավարությունը խորհրդային իշխանության հաջողության և հաղթանակի հիմնական պայմանն է։

4. ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ (5 ժամ)

1. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ։ Կոմունիստական կուսակցությունը—բանվոր դասակարգի կազմակերպությունն է ամենաառաջավոր և գիտակից բանվորներից, վորոնք նվիրված են աշխատավորների ազատության գործին։ Կոմունիստական կուսակցության մեջ ընդունվում են և առաջավոր, գիտակից գյուղացիները կոլտնտեսականներից, վորոնք իրենց բոլոր ուժը նվիրում են կապիտալիստների, կալվածատերերի և կուլակների դեմ տարած կռվին։ Կուսակցությունը աշխատավորների հեղափոխական կռվի կոլեկտիվ ղեկավարն է և սոցիալիստական շինարարության կազմակերպողը։ Կոմունիստական կուսակցություններ կան բոլոր յերկրներում և միացած են Կոմինտերնի մեջ։ ՀԿԿ(բ) Կոմինտերնի ամենաուժեղ և ղեկավար կուսակցությունն է։

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ։ ՀԿ(բ) կուսակցության և Կոմինտերնի կազմակերպողն ու ղեկավարը յեղել է Վ. Ի. Լենինը։

Լենինի հետ և նրա ղեկավարությամբ կազմվում է հին բոլշևիկների խմբակ, վորն իր ամբողջ ուժն ու կյանքը տվել է կուսակցության և բանվոր դասակարգին։ Ստալին, Ձերժինսկի, Ֆրունզե, Մոլոտով, Վորոշիլով, Կալինին, և ուրիշներ։ Հերոսական պայքարի օրինակներ նրանց կյանքից։ 1924 թ. հունվարի 21-ին Վ. Ի. Լենինը

մնավ։ Բանվորներն ու գյուղացիները կորցրին իրենց ամենալավ առաջնորդին։ Մեր յերկրի և ամբողջ աշխարհի աշխատավորները հիշատակում են Լենինի մահվան օրը։ Լենինի մահից հետո կուսակցության առաջնորդն է հանդիսանում ընկ. Ստալինը, վոր Լենինի հետ միասին Հոկտեմբերյան հեղափոխությունից դեռ շատ առաջ պայքարել է կուսակցության կազմակերպման և բանվորների ու գյուղացիների հաղթության համար։

3. ԻՆՉՊԵՍ Ե ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ։ Կուսակցությունն ամեն տեղ և ամեն ժամանակ մասսաների հետ ե։ Նա սերտ կապված ե նրանց հետ և ղեկավարում ե մասսաների կռիվը ու սոցիալիզմի կառուցումը բանվորների ու գյուղացիների կազմակերպությունների՝ խորհուրդների, արհմիությունների, կոոպերացիայի, կոմյերիտմիության միջոցով։ Ամեն մի գործարանում, ամեն մի կոլտնտեսության մեջ կա կուսակցության բջիջ, վոր ղեկավարում ե աշխատանքը տեղերում։

5- ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆՆ ՅԵՎ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ (10 ժամ)

1. ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ—կուսակցության օգնականն ե և փոխարինողը։ Ինչպես առաջ յեկավ կոմյերիտմիությունը։ Լենինի ավանդները յերիտասարդության։ Կուսակցությունը ղեկավարում ե կոմյերիտմիությանը։ Կոմյերիտմիության կազմը։ Կոմյերիտմիությունը մասնակցում ե ամբողջ յերկրի տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքին։ Կոմյերիտմիությունն ակտիվ պայքարում ե գիտության և ուսման համար։ Կոմյերիտմիությունն հարվածայնության և սոցմրցման նախաձեռնողն ե։

Կոմյերիտմիությունն ընդպարտուսի շեֆն ե, ծովային և օդային տորմղի շեֆն ե, ելեկտրոֆիկացիայի շեֆն ե։ Կոմյերիտմիությունն ակտիվ կերպով կռվում ե կրոնի դեմ։ Կոմյերիտմիությունն անդուլ պայքարում ե դասակարգային թշնամու դեմ. Նա իր անդամներին քաղաքացիական կռվի ճակատն եր ուղարկում. ուղարկում ե այժմ իր լավ անդամներին նավատորմից, սոցշինարարության դժվարին ճակատները և գյուղի կոլեկտիվացմանն օգնելու։

Մյուս յերկրներում կոմյերիտմիությունը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ կռվում ե կապիտալիստների դեմ։ Կոմյերիտմիության բոլոր կազմակերպությունները միանում են Յերիտասարդության Կոմունիստական Ինտերնացիոնալի մեջ։ ՄՅՈՒԻԴ (միջազգային պատանեկական օր) և նրա նշանակությունը։

2. ՊԻՈՆԵՐՆԵՐԸ կոմյերիտմիության փոխարինողներն են և օգնականը։ Պիոներներին ղեկավարում ե կոմյերիտմիությունը։ Պիոներների օրենքներն ու կանոնները։ Նրանց կազմակերպությունը։ Պիոներների մասնակցությունը սոցիալիստական շինարարության և յերկրի պաշտպանության գործին։ Պիոներներն ակտիվ պայքարում են դպրոցի լավացման համար, ուսման և գիտության համար։ Պիոներներն օգնում են կուսակցությանը լավացնելու յերեխաների կյանքը։ Պիոներների աշխատանքը գործարանում, կոլտնտեսության մեջ, դպրոցում, լիկկայանում, ՄՕՊՐ-ի մեջ և այլն։ Պիոներները ամբողջ բանվորա-գյուղացիական յերեխաների առաջնորդողներն են։ Պիոներների աշխատանքը կապիտալիստական յերկրներում (օրինակներ բերել)։

6- ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ (15 ժամ)։ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ (20 ժամ)

1. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ—ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԳԱՆ։ Գյուղի, քաղաքի, ռայոնի, յերկրամասի և ամբողջ յերկրի կառավարության համար բանվորներն ու գյուղացիները 18 տարեկանից իրենց ժողովներում և համագումարներում ընտրում են խորհուրդներ։ Խորհուրդներում ընտրում են բանվորներից, կոլտնտեսականներից, չքավորներից ու միջակ մենատնտեսականներից և կարմիր բանակայիններից ամենալավերին։ Խորհուրդներում չեն ընտրվում և իրավունք չունեն ընտրելու շահագործողները (առևտրականներ, կուլակներ), նախկին ոստիկանները և ամեն տեսակի կրոնի տերտերները։

2. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ։ Խորհուրդները կուսակցության ղեկավարությամբ կառավարում են յերկրի ամբողջ կյանքը, նրա սոցիալիստական շինարարությունը, պայքարը յերկրի ներսում դասակարգային թշնամու դեմ և յերկրի պաշտպանությունը կապիտալիստների հարձակումից։ Խորհուրդները հոգում են փաբրիկների ու գործարանների, կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների աշխատանքի

մասին, մեքենաների, տրակտորի և հողի պարարտացման մասին, փաբրիկների և գործարանների վառելիքի և հումույթի մասին, քաղաքի տնտեսության մասին, բանվորներին ու գյուղացիներին մթերքներ ու ապրանքներ մատակարարելու մասին, հաղորդակցության ճանապարհների մասին, դպրոցների, ակումբների, խրճիթ-ընթերցարանների մանկապարտեզների, ամբողջ բնակչության ուսուցման մասին, վորբերի և ինվալիդների օգնության մասին։ Խորհուրդների աշխատանքներին մասնակցում են աշխատավորների լայն մասսաները։ Դրա համար խորհուրդները զանազան ճյուղերի համար կազմակերպում են տնտեսական, քաղաքական և կուլտուրական սեկցիաներ։

3. ԻՆՉՊԵՍ Ե ԿԱՌՈՒՑՎԱԾ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՐԿՐՈՒՄ։ Քաղաքներն ու գյուղերը և նրանց խորհուրդները կապված են իրար հետ իրենց աշխատանքով։ Դրա համար նրանք միանում են և կազմում ռայոն։ Բոլոր խորհուրդների ներկայացուցիչները հավաքվում են ռայոնական համագումարի և այնտեղ վճռում բոլոր գլխավոր հարցերը, վոր վերաբերվում են ամբողջ ռայոնին, իսկ մշտական աշխատանքի համար ընտրում են ռայոնական գործադիր կոմիտե (ՌԳԿ)։ Ռայոնները միանում են և կազմում մարզեր կամ յերկրամասեր, վորտեղ մարզային կամ յերկրային համագումարներում ընտրում են յերկրային կամ մարզային գործադիր կոմիտեներ։ Մեր յերկրում ապրող ազգությունններն ունեն իրենց հանրապետություններն ու մարզերը։ Օրինակներ բերել։ Հանրապետության մեջ հավաքվում ե խորհուրդների հանրապետական համագումարը, վորը ընտրում ե կենտրոնական գործադիր կոմիտե։ Բոլոր հանրապետությունները միանում են և կազմում Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միությունը։ Խորհուրդների համամիութենական համագումարը ընտրում ե Միության Կենտգործկոմ (ЦИК)։

4. ԺՈՂԿՈՄԽՈՐՀ ՅԵՎ ԺՈՂԿՈՄԻՍԱՐԻԱՏՆԵՐ։ Սոցիալիստական շինարարության բոլոր ճյուղերն ընդգրկելու համար Կենտգործկոմը (ЦИК) ունի ժողովրդական կոմիսարիատներ՝ ԺՏԳԽ (Ժողտնտխորհ), Ճանապարհների ժողկոմ, Հողագործության ժողկոմ, Պարենավորման ժողկոմ, Կապի ժողկոմ, Կոմունտ ժողկոմ, Առողջապահության ժողկոմ, Լուսժողկոմ, Սոցապժողկոմ, Ծանր արդյունաբերության ժողկոմ, Թեթև արդյունաբերության ժողկոմ, Անտառային ժողկոմ, Զինվորական-ծովային ժողկոմ, Արտաքին առևտրի ժողկոմ, Արտաքին գործերի ժողկոմ։ Բացատրել յուրաքանչյուր կոմիսարիատի գլխավոր խնդիրները, օրինակներ բերելով։ Ամեն կոմիսարիատի գլուխը կանգնած ե Կենտգործկոմից ընտրված ժողովրդական կոմիսարը։ Բոլոր ժողովրդական կոմիսարների խորհուրդը կազմում ե Ժողկոմխորհը։ Ժողկոմխորհը Կենտգործկոմի ղեկավարությամբ և նրա հսկողությամբ տանում ե յերկրի ղեկավարության ամբողջ ընթացիկ աշխատանքը։ Խորհրդային պետությանն օգնող գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում գոյություն ունի կոլտնտեսային կոոպերացիան, վորի գլուխն ե կանգնած Կոլտնտկենտրոնը, իսկ խորհրդային առևտրի կազմակերպության գործում գոյություն ունի սպառողական կոոպերացիան ԽՍՀՄ-ի Ցենտրոսոյուզի գլխավորությամբ։

5. ԽՍՀՄ ԲՈԼՈՐ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՅԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆ Ե։ ԽՍՀՄ-ում բոլոր ազգությունների աշխատավորներն առաջին անգամ հնարավորություն ստացան իրենք կառուցելու իրենց կյանքն ու կուլտուրան։ Ազգային հանրապետություններում սոցիալիստական շինարարության և ազգային կուլտուրայի զարգացման կոնկրետ օրինակներ բերել։ Մայրենի լեզու, ազգային գեղարվեստ։

Մյուս յերկրներում հեղափոխական բանվորներն ու գյուղացիները կռիվ են մղում խորհրդային իշխանություն հաստատելու համար։ Հիմա, բացի ԽՍՀՄ-ից, խորհուրդներ կան Չինաստանում, վորոնք հերոսական կռիվ են մղում կապիտալիստների և կալվածատերերի դեմ չինական կոմունիստների ղեկավարությամբ։

7. ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ (10 ժամ)։ (ԳՅՈՒՂԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ (5 ժամ)

Ֆաբրիկաների ու գործարանների բանվորները միանում են և կազմում արհեստակցական միությունններ։ Ամեն մի փաբրիկում, ամեն մի գործարանում, խորհտնտեսության մեջ կա արհմիության փաբգործարանային կոմիտե։ Արհմիությունները մեր յերկրում մինչ Հոկտեմբերյան հեղափոխությունը հալածվում եյին ցարական կառավարության կողմից։ Արհ. միությունների գլխավոր խնդիրն այն ժամանակ կապիտալիստների դեմ պայքարելն եր, բանվորների դրությունը բարելավելու, կապիտալիստների իշխանությունը կործանելու համար։ Բոլոր յերկրների բանվորներն էլ արհմիություններ ունեն և կռվում են կապիտալիստների դեմ (բանվորների դրության բա-

նակներ բերել կապիտալիստական յերկրներում. գործազրկություն և այլն)։ Այժմ մեր յերկրում արհմիությունների գլխավոր խնդիրն է սոցիալիստական շինարարությունը և կռիվ թշնամիների դեմ, վորոնք խանգարում են բանվոր դասակարգին սոցիալիզմ կառուցելու։ Արհմիությունները կազմակերպում են բանվորների մեջ հարվածայնություն և սոցմրցում լավ կատարելու համար իրենց ֆաբրիկի և գործարանի պլանը, պայքարում են ճխասարարների դեմ, գործալիքների, դատարկապորտների, հարբեցողների դեմ, կազմակերպում են բանվորներին գյուտարարության համար, հոգս են տանում աշխատանքի պայմանները լավացնելու և աշխատանքի պաշտպանության մասին, կազմակերպում են ուսուցման գործը և կուլտուրական աշխատանքը իրենց անդամների և նրանց ընտանիքի անդամների համար, կազմակերպում են գյուղին ոգնելու գործը, կազմակերպում յերկրի պաշտպանության աշխատանքը։ Արհմիությունները հոգս են տանում կոոպերացիայի աշխատանքի լավացման համար։ Իրենց աշխատանքը տանելու համար ֆաբգործկոմները կազմակերպում են ակումբներ, դպրոցներ, շեֆ և ուրիշ կամավոր ընկերություններ՝ ՊԱՉԸ-ԱՎԻԱՔԻՄ, ՄՈՊՐ, ԿԱՆԸ (ОДН), ՄԲԸ, (ОДД) և այլն։ Գյուտարարների բյուրո, պատի թերթ։ Խորհրդային արհմիությունները միյանում են մյուս յերկրների արհմիությունների հետ և կազմում Պրոֆինտերն։ Արհմիությունները ղեկավարում է կուսակցությունը։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿՄՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ (10 ժամ)

Բոլշևիկների կուսակցության ղեկավարությամբ բանվոր դասակարգը և գյուղացիությունը հսկայական հաջողություններ ունեցան սոցիալիստական շինարարության մեջ։ Հեղափոխության անցյալ տարիների ընթացքում, մեր յերկիրն արմատապես փոխվեց։ Յերկրի ինդուստրացումը ԽՍՀՄ հետամնաց գյուղատնտեսական յերկրից վերածում է արդյունաբերական յերկրի։ Հարյուրավոր նոր ֆաբրիկաներն ու գործարանները, հազարավոր կիլոմետր նոր ճանապարհները ապահովեցին գյուղի անցումը խոշոր կոլեկտիվ տնտեսության, վորտեղ մեքենաները, կոմբայնները, տրակտորները և միյուսները ավելի ու ավելի հեշտացնում են ծանր աշխատանքը։ Հիմնականում համատարած կոլեկտիվացումը մեր յերկրում ավարտվում է 1932 թ. համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակությունը վորպես դասակարգ վերանում է։

Սոցիալիստական շինարարությունը տարվում է պլանով։ Առաջին հնգամյա պլանը իրագործվում է 4 տարում՝ 1932 թ։ Խավար, անգրագետ յերկրից մեր յերկիրը դառնում է բարձր, կուլտուրական։ Բանվորների ու գյուղացիների համառ կռվով վերանում է անգրագիտությունը, մտցված է ընդհանուր պարտադիր ուսում։ Կարմիր բանակն արթուն հսկում է մեր սահմանները, և պահպանում կապիտալիստների հարձակումից։ Ամբողջ աշխարհի բանվորները մեծ հույսով նայում են մեր յերկրի վրա վոր ճանապարհ է ցույց տալիս նրանց՝ հաղթելու իրենց կապիտալիստներին։ ԽՍՀՄ ամբողջ աշխարհի բանվորների ու գյուղացիների հարվածային բրիգադան է։

ՉՈՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ

1- ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ (ՀՆԳԱՄՅԱԿԸ)

1. ԽՍՀՄ-ՈՒՄ ԱՄԲՈՂՋ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՊԼԱՆՈՎ Ե ՏԱՐՎՈՒՄ

Այդ հնարավոր է, վորովհետև մեզնում հողը, ֆաբրիկաներն ու գործարանները պատկանում են վոչ առանձին անհատների, այլ խորհրդային պետության։

Կապիտալիստական յերկրներում անհնարին է պլանային տնտեսությունը, վորովհետև հողը, ֆաբրիկաներն ու գործարանները պատկանում են կալվածատերերին և կապիտալիստներին և նրանցից ամեն մեկը մտածում է միայն իր շահի մասին։ Մենք կազմում ենք ԽՍՀՄ-ի տնտեսության պլանը վոչ միայն մի դեկադով, ամսով, տարով, այլ և յերկար ժամանակով։ Մենք աշխատում ենք հնգամյա պլանը իրացնել։ Մենք լարում ենք բոլոր ուժերս, վոր հնգամյա պլանը կատարենք չորս տարում։

2. ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՄԵՐ ՅԵՐԿԻՐԸ ՀԵՏԱՄՆԱՑ ՅԵՐԿԻՐ ԷՐ, շատ քիչ ֆաբրիկներ և գործարաններ ուներ և ավելի քիչ այնպիսի գործարաններ, վորոնք արտադրում են մեքենաներ ֆաբրիկների ու գործարանների համար։ Բոլոր բարդ մեքենաները ներմուծվում եյին ուրիշ յերկրներից։ Դրանով մեր յերկիրը կախում ուներ նրանցից։

Համաշխարհային և քաղաքացիական պատերազմների ժամանակ ԽՍՀՄ ժող. տնտեսությունն ավելի ևս քայքայվեց։ Քաղաքացիական պատերազմից հետո մենք վերականգնեցինք քայքայված տնտեսությունը և անցանք վերակառուցելու սոցիալիստական հիմունքներով։

ՄԵՆՔ ԽՍՀՄ ԴԱՐՁՆՈՒՄ ԵՆՔ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՅԵՐԿԻՐ։ ԽՍՀՄ-ում կառուցվել են և կառուցվում են շատ խոշոր գործարաններ, վորտեղ պատրաստվում են ամենաբարդ մեքենաներ։ Մենք վերացնում ենք ազգային ռայոնների հետամնացությունը, կառուցում ենք այնտեղ ելեկտրոկայաններ, ֆաբրիկներ, գործարաններ (Դնեպրոստրոյ, Զագես, Կուզնեցկստրոյ, Մագնիտոգորսկի գործարանները), անց ենք կացնում յերկաթուղիներ (Թուրքսիբ և ուրիշներ)։ Բերել և ուրիշ որինակներ մեր նվաճումներից ազգային հանրապետությունների, մարզերի ու ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության սոցիալիստական ինդուստրալիզացիայի շրջանից։ Արագ զարգացնելով ԽՍՀՄ-ի արդյունաբերությունը, մենք ավելի յենք ազատվում կապիտալիստական յերկրներից կախում ունենալուց։

Սոցիալիստական ինդուստրալիզացիան պայմաններ է ստեղծում գյուղատնտեսությունը սոցիալիստական դարձնելու (խորհտնտեսությունների և կոլտնտեսությունների շինարարությունը)։

4. ՄԵՆՔ ՊԵՏՔ Ե ՀԱՍՆԵՆՔ ՅԵՎ ԱՆՑՆԵՆՔ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԻՑ ՎՈՉ ԱՎԵԼ, ՔԱՆ ՏԱՍԸ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ։ Պետք է իրականացնել, վոր մեր ֆաբրիկներն ու գործարանները արտադրեն այն բոլորը, ինչ վոր անհրաժեշտ է մեր տնտեսության համար՝ մեքենաներ արդյունաբերության և գյուղատնտեսության համար, սարքավորում և աշխատավորների կարիքները բավարարելու համար իրեր։ Մենք պետք է տիրապետենք առաջավոր տեխնիկային և կազմակերպենք աշխատանքը ձեռնարկություններում այնպես, վոր նրանք արտադրեն շատ և լավ, քան կապիտալիստների մոտ։ Վոր մեր խորհ-տնտեսությունների և կոլ-տնտեսությունների բերքն ավելի լինի, քան կալվածատերերի մոտ։

5. Արդյունաբերության արագ զարգացում մենք ձեռք բերինք այն պատճառով, վոր բանվոր դասակարգը կապիտալիստների համար չի աշխատում, այլ իր խորհրդային տնտեսության համար։ մեր ֆաբրիկները սոցիալիստական են. այնտեղ չկա շահագործում, ուստի բանվորները շահագրգռված են աշխատանքի արտադրողականության բարձրացմամբ։

6. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ։ Պլանիլավ և արագ կատարելու համար բանվորների աշխատանքն այնպես է կազմակերպվում, վոր ամեն մի ցեխը, ամեն մի բրիգադը և ամեն մի բանվոր պատասխանատու լինի աշխատանքի համար։ Բանվորների վարձատրությունը սահմանվում է, հաշվի առնելով աշխատանքի դժվարությունը և նրա վորակը։ Ով ավելի յե կատարում և լավ, նա ավելի յել ստանում է։

Բանվոր դասակարգը կոմունիստների ղեկավարությամբ կազմակերպում է հարվածայնություն և սոցմրցում, հնգամյակը չորս տարում կատարելու համար։ Նրանք գրվում են խորհրդային յերկրի ինդուստրացման փոխառությանը։ Բանվոր դասակարգի հերոսական աշխատանքի շնորհիվ ԽՍՀՄ-ի տնտեսությունն աճում է՝ կապիտալիստական յերկրներում չտեսնված տեմպերով։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԵՏ ԼԱՎԱՆՈՒՄ Ե ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ (աշխատավարձի աճում, յոթ ժամյա աշխատանքի որ, աշխատանքի պաշտպանություն, բանվորների վորակավորման բարձրացում և ուրիշ միջոցներ)։ Մեր յերկրում վերացված է գործազրկությունը։

Աշխատանքի արտադրողականության զարգացման հետ բարձրանում է բանվոր դասակարգի կուլտուրական մակարդակը (ֆաբգործուսի, տեխնիկական դպրոցների, բանֆակների, ԲՏՈՒՀ-ների ցանցի ընդարձակում, բանվորական կրթության կոմբինատների կազմակերպում և այլն)։

2. ՄԵՏԱՂ, ԱԾՈՒԽ ՅԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏ—ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՎՈՐ ՃՅՈՒՂԵՐՆ ԵՆ

1. ՄԵՔԵՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՄԵՏԱՂԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ. Մետաղի արդյունահանության հնգամյակը։ Ուրալ-Կուզբասի առանձին կարևոր դերը։ Հնգամ-

յակի վերջում ԽՍՀՄ կանցնի մետաղի արդյունահանությամբ կապիտալիստական յերկրներից, բացառությամբ Ամերիկայի։

Նոր գործարաններին, տրանսպորտին, խորհտնտեսություններին ու կոլտնտեսություններին հարկավոր են միլիոնավոր տոնն մետաղ։ Մետաղ պետք է և մեր յերկրի պաշտպանության գործի համար։

Մետաղագործական արդյունաբերության նշանակությունը թեթև արդյունաբերության զարգացման համար։ Վերջինիս զարգացումը հնգամյակում և յերկրորդ հնգամյակի հեռանկարները։

Մեքենաշինության հնգամյակը։ Մեր նվաճումները մեքենաներ շինելու ասպարեզում (խորհրդային բլյումինգներ, կրեկինգներ, մանածագործական մեքենաներ և այլն)։ Խորհրդային մեքենաների պատրաստելը կազատի ԽՍՀՄ արտասահմանից կախում ունենալուց (կդադարի բարդ մեքենաների ներմուծումը)։

2. ԱԾՈՒԽԻ ՅԵՎ ՆԱՎԹԻ ՀՆԳԱՄՅԱԿԸ։ Ածուխի և նավթի մշակությունն արդյունաբերության զարգացման արագ տեմպերի համար։ Դոնբասս- Ուրալո- Կուզբասը—ածուխի արդյունահանության ամենակարևոր ռայոններ են։ Ածուխի յերկրորդ ավազանը Կարագանդում։ Դոնբասի մեքենայացումը վորպես ամենակարևոր միջոց ածուխի արդյունահանության արտադրողականությունը բարձրացնելու։ ԽՍՀՄ-նավթային արդյունաբերության նշանակությունը։ Նավթի արդյունաբերության հնգամյակը կատարեցինք 2 և կես տարում։ Նավթի արդյունաբերության տեսակետից մենք աշխարհում բռնում ենք յերկրորդ տեղը։ Բաքուն և Գրոզնին նավթի արդյունահանության գլխավոր վայրերն են։

3. ԵԼԵԿՏՐՈՖԻԿԱՑԻԱՅԻ ՀՆԳԱՄՅԱԿԸ։ Ի՞նչ նշանակություն եր տալիս Լենինը ԽՍՀՄ-ի ելեկտրիֆիկացիային։ Ելեկտրիֆիկացիայի պլանը նրա ցուցմունքներով մշակված։ Ելեկտրիֆիկացիայի հսկայական նշանակությունը յերկրի տեխնիկական վերակառուցման համար։ Ելեկտրիֆիկացիայի պլանը յերկրորդ հնգամյակում։ Համատարած ելեկտրոֆիկացիա հնարավոր է միայն ԽՍՀՄ-ում։

Ֆաբրիկների ու գործարանների նախկին տերերի կռիվն իրենց նախկին սեփականության համար։ Վնասարարությունը վառելիքի, ելեկտրոարդյունաբերության և արդյունաբերության այլ ճյուղերում։

Բանվոր դասակարգի և ծանր արդյունաբերության առաջնորդող դերը, գյուղատնտեսական մեքենաշինության և տրակտորաշինության զարգացումը գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար. կոլտնտեսությունների ղեկավարներ և կազմակերպողներ են ուղարկվում (25 հազարյակ)։

4. ՏՐԱՆՍՊՈՐՏ։ Հնգամյակը չորս տարում կատարելու գործում տրանսպորտը շատ կարևոր դեր է կատարում։ Արդյունաբերության և գյուղատնտեսության պահանջների ժամանակին կատարելը կախված է բեռների իրեն ժամանակին տեղափոխելուց (շինանյութ, մեքենաներ, վառելիք և հումույթ նոր ֆաբրիկների համար, գյուղատնտեսական ինվենտար և ուրիշ արդյունաբերական ապրանքներ կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների համար, հաց և այլ սննդամթերքներ)։

Տրանսպորտը կարևոր դեր է կատարում մեր յերկրի պաշտպանության գործում։ Տրանսպորտի դերը կուլտուրական շինարարության գործում։ Տրանսպորտի աշխատանքի ընդհատումները խանգարում են սոցիալիստական շինարարությանը։ Մենք շինում ենք նոր յերկաթուղիներ (Թուրք—Սիբ և այլն)։ Շինում ենք կամուրջներ։ Վոլգայի, Ոկայի, Օբի և մյուս գետերի վրա. խճուղիներ և հողուղիներ յերկրի ավտոմոբիլիզացիայի համար։ Ավտոդոր ընկերությունը և խնդիրները։ Մենք ընդլայնացնում ենք մեր ջրային տրանսպորտը։

Հնգամյակը չորս տարում կատարելու համար հարկավոր է յերկաթուղային տրանսպորտը ելեկտրիֆիկացիայի յենթարկել։ Հարկավոր են մեզ նոր կարող շոգեկառքեր, ելեկտրոքարշեր, ջերմաքարշներ, վագոններ, ավտոներ։ Մենք մեքենայացնում ենք վագոնների բեռնումը և պարպումը։ Տրանսպորտին, ինչպես և արդյունաբերության մյուս ճյուղերին հարկավոր են բարձրորակ աշխատողներ։ Մենք պատրաստում ենք նրանց մեր բարձրագույն դպրոցներում և առաջ քաշում լավագույն բանվորներին ղեկավարող աշխատանքի արդյունաբերության բոլոր ճյուղերում՝ դրանց թվում և տրանսպորտում։

5. ԿԱՊԸ։ Կապի միջոցների դերը պատերազմի ժամանակ։ Կապի զանազան ձևերի նշանակությունը բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի համար։

Դ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՈՒՄԸ

1. ԽՍՀՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՈՒՂԻՈՎ։ Բանվոր դասակարգը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, զարգացնելով մեր յերկրի սոցիալիստական արդյունաբերությունը, ոգնում է գյուղացիներին միացնելու իրենց մանր, բաժան-բաժան տնտեսությունները խոշոր, կոլեկտիվ տնտեսությունների։ Մենք կազմակերպեցինք խորհտնտեսություններ և կոլեկտիվացնում ենք գյուղատնտեսությունը։ Մեզնում աշխարհիս ամենամեծ գյուղատնտեսությունն է։ Կապիտալիստական յերկրներում գյուղատնտեսությունը չի կարող զարգանալ խոշոր տնտեսությունների ուղիով, վորովհետև հողի տերը առանձին կալվածատերեր և կապիտալիստներ են, շահագրգռված են միայն իրենց տնտեսությամբ։ Կապիտալիստական գյուղատնտեսությունը հենված է չքավոր և միջակ ամբողջ մասսաների շահագործման վրա։ Նա զարգանում է ինաշիվ գյուղական տնտեսությունների քայքայման։

Տնտեսության կոլեկտիվացումը ԽՍՀՄ-ում միացնելով միլիոնավոր չքավոր և միջակ տնտեսություններ, վերացնում է ամեն հնարավորություն մարդկանց շահագործումը մարդու կողմից։ Խորհտնտեսությունները խոշոր տնտեսության ամենալավ օրինակն են։ Խորհտնտեսությունների և ՄՏԿ-ի միջոցով ոգնություն է կազմակերպվում կոլտնտեսություններին և իրականացվում հետագա կոլեկտիվացումը։

Կոմբայնների, տրակտորների և ուրիշ խոշոր գյուղատնտեսական մեքենաների գործադրությունը հնարավոր է միայն ԽՍՀՄ-ում, վորտեղ չկան առանձին հողատերեր և վորտեղ ցրված, մանր անհատական տնտեսություններ շատ ռայոններում միացել են, իսկ մյուսներում կազմում են կոլեկտիվ տնտեսություններ։ Հիմնական հացահատիկային ռայոններում հիմնականում ավարտված է կոլեկտիվացումը (Հյուսիսային Կովկաս, Միջին և Ստորին Վոլգա և այլն)։

Միայն կոլեկտիվ աշխատանքով, ընդհանուր հողի վրա կարելի յե բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը գյուղատնտեսության մեջ, ստանալ շատ բերք, արորն ու գութանը փոխարինել բարդ մեքենաներով (տրակտոր, կոմբայն և ուրիշ). վորոնք հեշտացնում են կոլտնտեսականների աշխատանքը։

Միայն սոցիալիստական գյուղատնտեսության մեջ հնարավոր է չոր և անջրդի ռայոնները պլանային կերպով վոռոգել, չորացնել ճահիճները, պարարտացնել ու օգտագործել հողի հսկայական նոր տարածությունը։

Միայն սոցիալիստական գյուղատնտեսության մեջ հնարավոր է ռայոնների մասնագիտացումը (Միջին-Ասիա, Անդրկովկաս—բամբակ, մետաքս և այգեգործություն, Կ. Սևահողային շրջանը, Մերձ—Վոլգյան և Հյուսիսային Կովկասը—հացահատիկային կուլտուրաներ, Ուկրայինան—ճակնդեղ։ Արեվմտյան շրջանը՝ կտավատ և այլն։ Այդ բոլոր միջոցառումները բարձրացնում են խորհրդային դաշտերի բերքատվությունը։

Անասնաբուծության, տեխնիկական կուլտուրաների և հացահատիկային տնտեսության լայն զարգացումը հնարավոր է միայն խորհտնտեսությունների և կոլտնտեսությունների շինարարության միջոցով։

Կոլեկտիվ տնտեսությունը լավացնում է կոլտնտեսականների նյութական դրությունը և բարձրացնում է նրանց կուլտուրական մակարդակը։

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումն ընթանում է դասակարգային կատաղի կռվի պայմաններում։ Սոցիալիստական վերակառուցումը վերացնում է կապիտալիզմի զարգացման հնարավորությունը գյուղատնտեսության մեջ։ Դրա համար կուլակներն ու բոլոր կրոնների հոգևորականները կատաղի կերպով դիմադրում են կոլեկտիվացման և կոլտնտեսային շինարարության։ Նրանք համոզում են անհատականներին չմտնել կոլտնտեսության մեջ և ամեն կերպ վնասում են կոլտնտեսություններին (կոլտնտեսությունների առանձին կազմակերպողների և ղեկավարների սպանություն, կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների մեքենաների փչացում, պահեստների հրդեհում, անասունների վոչնչացում և այլն)։ Նրանք աշխատում են մտնել կոլտնտեսությունների մեջ և ներսից վնասել նրանց աշխատանքը (շրջապատող իրականությունից կուլակային և տերտերական պայքարի փաստեր բերել)։

Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ մենք իրականացնում ենք գյուղատնտեսության սոցիալիստական վերաշինությունը։ Համատարած կոլեկտիվացման շրջաններում վերացված է կուլակը վորպես դասակարգ։ Կուլակներից խլվում են գյուղատնտեսական մեքենաները, լծկան անասունը և տրվում կոլտնտեսություններին։ Կուլակներին արտաքսում են համատարած կոլեկտիվացման ռայոններից։

Հնգամյակի վերջում մենք պետք է ԽՍՀՄ-ում հիմնականում ավարտենք գյուղատնտեսության համատարած կոլեկտիվացումը։ Կոլտնտեսականները խորհրդային իշխանության հիմնական ամուր հենարանն են գյուղում։ Նրանք մասնակցում են ԽՍՀՄ-ի սոցիալիստական շինարարությանը։ Կոլտնտեսությունների ամրացում, ինդուստրիալիզացիայի փոխառության գրվել, մթերումների ժամանակին կատարում, կոնտրակտացիա, պայմանագրեր կնքել ֆաբրիկաների ու գործարանների հետ նրանց տարագնաց բանվորներ տալու համար և այլն։

2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ։ Լիակատար կամավոր մուտք կոլտնտեսության մեջ։ Կոլտնտեսականների հողամասերի միացում մի ընդհանուր հողային զանգվածի, վոր հետո վոչ մի բաժանման յենթակա չի։ Գյուղատնտեսական մեքենաների, լծկան անասունների և տնտեսական շենքերի հանրայնացում։ Կոլտնտեսության մեջ կարող է մտնել ամեն մի աշխատավոր։ Չի կարելի մտնել կոլտնտեսություն կուլակներին, ձայնազուրկներին, տերտերներին, սերմի ու ինվենտարի չարամտորեն փչացնողներին։

Կոլտնտեսության միջոցները՝ մուտքի վճար, անբաժանելի ֆոնդ, փայեր։ Աշխատանքի կազմակերպությունը կոլտնտեսության մեջ։ Սոցմրցման և հարվածայնության բրիգադներ, գործավարձությ՝ «ով շատ լավ կաշխատի, նա ավելի կստանա, իսկ ով չի աշխատի, նա վոչինչ չի ստանա»։ Աշխատանքի բաժանումը կոլտնտեսության մեջ։ Աշխատանքի հաշվառք աշխ-օրերով համաձայն աշխատանքի վորակի և քանակի։ Աշխատանքի պաշտպանությունը կոլտնտեսության մեջ։ Կանանց, յերեխաների, դեռահասների աշխատանքը։ Հոգատարություն կոլտնտեսության աշխատանքի անընդունակ անդամների մասին։ Յեկամտի բաժանումը կոլտնտեսության մեջ։ Մթերքների հանձնումն առաջին հերթին պետությանը։ Կոլտնտեսության գործերի կառավարության կազմակերպությունը. ընդհանուր ժողովներ, վարչություն, տնտեսության ճյուղերի ղեկավարներ, բրիգադներ։ Կոլտնտեսությունները միանում են, կազմում կոլտնտեսությունների միություն (ռայոնական, յերկրային և այլն)։

3. Կոմունան—կոլտնտեսության բարձր ձևն է։ Տնտեսության բոլոր ճյուղերի հանրայնացում։ Արտելից կոմունայի կարելի յե անցնել միայն այն ժամանակ, յերբ արտելն ամրացել է, մեծ հաջողություն է ձեռք բերել արտադրության գործում, աշխատանքի կազմակերպման, աշխատանքի կատարման, գյուղատնտեսության տեխնիկայի բարձրացման մեջ և յեթե իրենք, կոլտնտեսականները լիովին համաձայն են։ Անհատական տնտեսությունը չի կարելի միանգամից կոմունայում միացնել։ Կոլտնտեսության այդ կատարյալ ձևին անցնելու համար սկզբում անհրաժեշտ է արտել կազմակերպել։

4. ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿԵՆՑԱՂԻ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ՝ հասարակական սննդի, մանկամսուրների, հրապարակների, պարտեզների, հասարակական լվացքատների և այլն կազմակերպելու միջոցով։ Կուլտուրական աշխատանքը կոլտնտեսության մեջ՝ անգրագիտության վերացում, տեխնիկային տիրապետել, քաղգրագիտություն, հակակրոնական պրոպագանդ և այլն։

4. ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ

Սոցիալիստական արդյունաբերության և գյուղատնտեսության համար, ֆաբրիկների, գործարանների, կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների աշխատանքը կանոնավորելու, նոր ու բարդ մեքենաների հետ վարվել կարողանալու համար գյուղացիներին հարկավոր է գիտություն։ Կուսակցությունը և խորհուրդները պայքարում են կուլտուրական հեղափոխության համար՝ ընդհանուր գրագիտության, ընդհանուր ուսման և բոլոր յերեխաների համար նոր պոլիտեխնիկական դպրոցի, գրքի և լրագրի համար։ Կուլտուրական շինարարության հնգամյակի 3 տարում մեզնում կազմակերպված են շատ մանկապարտեզներ ու դպրոցներ, դպրոցական հասակի բոլոր յերեխաներն ընդգրկված են դպրոցում։ Հնգամյակի վերջում ամբողջ բնակչությունը կլինի գրագետ։ Ավելի ևս զարգանում է մինչդպրոցական դաստիարակությունը։ Յերեխաներին ընդգրկելով մանկամսուրների, մանկապարտեզների և դպրոցների մեջ, կահավորելով հասարակական սնունդը, մենք ավելի ևս ազատում ենք կնոջը ընտանիքի ծանր հոգսից։ Կինն ավելի ևս ակտիվ աշխատում է արդյունաբերության մեջ, կոլտնտեսության մեջ, դպրոցում, խորհրդում, լծվում է սոցիալիստական շինարարությանը։

Կապիտալիստների ու կալվածատերերի մոտ գիտությունն ու կուլտուրան անմատչելի յեն աշխատավորների լայն մասսաներին։ Շահագործողների համար շահավետ է պահել աշխատավորներին խավարի և տգիտության մեջ։ Անգրագետին, չհասկացողին հեշտ է շահագործելը, հեշտ է հնազանդ պահելը։ Դպրոցի փոխարեն կապիտալիստները աշխատավորների համար շինում են յեկեղեցիներ, վորպեսզի մթնացնեն նրանց գիտակցությունը կրոնական հաշիշով։

5. ՀՆԳԱՄՅԱԿԻ ԱՌԱՆՁԻՆ ՄԱՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԿԱԽՎԱԾ Ե ԻՐԱՐԻՑ.

Արդյունաբերությունը գյուղատնտեսությանը տալիս է մեքենաներ, պարարտանյութ և գյուղատնտեսության վնասատուների (դաշտային մուկ, մորեխ և այլն) դեմ կռվելու միջոցներ։ Առանց արդյունաբերության օգնության չի կարելի բարձր տեխնիկա մտցնել գյուղատնտեսության մեջ, կոլտնտեսության դաշտերի բերքը կախված է նրանից, թե վորքան է արդյունահանում մեր յերկիրը մետաղ, ածուխ, նավթ, վորքան մեքենաներ է պատրաստում, վորքան ելեկտրոկայաններ ունի և այլն։

Մյուս կողմից, վորպեսզի արդյունաբերությունը զարգանա, պետք ապահովել հումույթով, իսկ բանվորներին՝ սննդամթերքներով։

Թեթև արդյունաբերության զարգացման համար (մանածային, կաշվի, սննդի-համի և այլն) պետք է հումույթ, բամբակ, կտավատ, շաքարի ճակնդեղ և այլն։

Այդ տեխնիկական կուլտուրաների մշակումը, անասնաբուծության զարգացման հետ զուգընթաց, այժմ հանդիսանում են խորհտնտեսությունների և կոլտնտեսությունների գլխավոր խնդիրներից մեկը. (ցույց տալ ինչպես է լուծվում տեխնիկական կուլտուրաների խնդիրը)։

Տրանսպորտը կապում է բոլոր ռայոնները իրար հետ, փոխադրում է ածուխ, մետաղ (մեքենաներ), հումույթ և սննդամթերքներ։ Տրանսպորտի աշխատանքի կարգավորումից է կախված հնգամյակը չորս տարում առանց ընդհատումների կատարելը։

6. ԽՍՀՄ ՄՏԵԼ Ե ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՇՐՋԱՆԸ.

Ամբողջ արդյունաբերությունը գտնվում է բանվորական պետության ձեռքին, գյուղական տնտեսությունների ճնշող մեծամասնությունը միացած են կոլտնտեսություններում։ Համատարած կոլեկտիվացման հիմունքով վերացվում է կուլակությունը վորպես դասակարգ.

Սոցիալիստական շինարարության գործում առանձնապես մեծ հաջողությունների յենք հասել հնգամյակի անցյալ 3 տարում (ցույց տալ օրինակներ բերել մեր նվաճումներից արդյունաբերության շրջանում՝ հնգամյակի կատարումը յերկու և կես տարում ելեկտրոարդյունաբերության մեջ, նավթի, տրակտորների արտադրության կոմբայնների, բլյումինգների, ավտոմոբիլների, շոգեկառքերի, դիրիժաբլների և այլն) և գյուղատնտեսության կոլեկտիվացման, խորհտնտեսությունների շինարարության և այլ ասպարեզներում։

Սոցիալիստական շինարարությանը կատաղի դիմադրում են համաշխարհային բուրժուազիան և նրա ագենտները ԽՍՀՄ-ում կուլակների ու կապիտալիստների մնացորդները. Նրանք կազմակերպում են վնասարարություն արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ։

7 - ՅԵՐԿՈՒ ԱՇԽԱՐՀ—ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ

Կապիտալիստների մոտ իշխանությունը շահագործողների ձեռին է, մեզնում, ԽՍՀՄ-ում—իշխանությունը բանվորների ձեռքին է՝ հենված կոլտնտեսականների վրա։ Նրանց մոտ տնտեսությունը դեպի անկում է գնում, մեզնում՝ բուռն աճում է տնտեսությունը։ Նրանց մոտ աշխատավորների խիստ շահագործում է, մեզնում ազատ կոլեկտիվ աշխատանք, սոցմրցում և հարվածայնություն։ Նրանց մոտ գործազուրկների միլիոնավոր բանակ, մեզնում՝ գործազրկությունը վերացված է։ Նրանց մոտ աշխատավորների աղքատացում, սով, մեզնում՝ բանվորների և կոլտնտեսականների նյութական դրության բարելավում։ Նրանց մոտ աճող անկում, ճգնաժամ, մեզնում աճող վերելք։

Մեզ մոտ՝ կուլտուրական հեղափոխություն, ամբողջ կենցաղի վերակառուցում, նրանց մոտ՝ կրոնական նախապաշարմունքներով և անհավատությամբ բանվորների ու գյուղացիների մթագնելը։

Կապիտալիստական յերկրների բանվորները կազատվեն քաղցից ու աղքատությունից միայն կապիտալիստների իշխանությունը վոչնչացնելով։ Նրանք տանում են այդ պայքարն ամբողջ աշխարհում։ Մեր նվաճումները սոցիալիստական շինարարության ասպարեզում ավելի ևս ամրացնում են բանվոր դասակարգի հավատը դեպի սոցիալիզմի հաղթանակը ամբողջ աշխարհում։ ԽՍՀՄ—համաշխարհային պրոլետարիատի հարվածային բրիգադն է։

8. ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ—ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՄԵՆԱԱՌԱՋԱՎՈՐ ԳԻՏԱԿԻՑ ՄԱՍՆ Է.

1. ՀԿԿ(բ)—բոլշևիկների Համամիութենական կոմունիստական կուսակցությունը ղեկավարում և կազմակերպում է սոցիալիստական շինարարության աշխատանքը։ ՀԿԿ(բ) ղեկավարությամբ բանվոր դասակարգը վերականգնեց համաշխարհային և քաղաքացիական պատերազմներից քայքայված մեր յերկրի տնտեսությունը և անց է կացնում յերկրի սոցիալիստական ինդուստրացումը և գյուղատնտեսության կոլեկտիվացումը։

Առանց ամուր համախմբված կոմունիստական կուսակցության բանվոր դասակարգը չի կարող հաղթել կապիտալիստներին և չի կարող հիմնել սոցիալիզմ։

Միայն կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ բանվոր դասակարգի կռիվը կարող է մեզ հասցնել կապիտալիստական ճնշումից ազատագրվելուն, կապիտալիզմին հաղթահարելուն։

2. Կապիտալիստական յերկրներում կոմունիստական կուսակցությունները ղեկավարում են բանվոր դասակարգի կռիվը շահագործողների դեմ, իրենց մոտ էլ խորհուրդներ ստեղծելու համար (ցայտուն որինակներ բերել կապիտալիստական շահագործման, աղքատության և գործազրկության մասին. կապիտալիստական յերկրների—Գերմանիա, Անգլիա, Լեհաստան և այլն բանվորների ժամանակակից հեղափոխական կռվի որինակներ բերել։

3. Կապիտալիստները չեն սահմանափակվում շահագործելով միայն իրենց յերկրի բանվորներին։ Նրանք ավելի ևս խիստ ճնշում և շահագործում են գաղութների աշխատավորներին (թույլ զարգացած արդյունաբերությամբ յերկրներ, վորոնք գտնվում են կապիտալիստական յերկրների լիակատար ճնշման տակ), գաղութների բանվորներն ու գյուղացիները կռիվ են մղում իրենց յերկրի և օտար յերկրների կապիտալիստների դեմ (ցայտուն որինակներ բերել բանվորների շահագործման, առանձնապես կանանց և յերեխաների և բանվորների ու գյուղացիների հեղափոխական պայքարի որինակներ—Չինաստանի, Հնդկաստանի և այլ յերկրների)։ Կռիվը ղեկավարում է կոմկուսակցությունը։ Բուրժուազիան խիստ պատժում է հեղափոխական բանվորներին ու գյուղացիներին, ցույցերի ժամանակ գնդակահարում, բանտեր, աքսորներ և այլն։

Ի պատասխան հալածանքի ամբողջ աշխարհի բանվորները ստեղծել են հեղափոխական մարտիկներին ոգնելու միջազգային կազմակերպություն (ՄՈՊՐ)։

Չնայելով հեղափոխական բանվորների հալածանքին, ավելի ևս զորեղանում է պայքարը պրոլետարական հեղափոխության համար, խորհրդային իշխանություն հաստատելու իրենց մոտ։ Խորհուրդների հաստատված Չինաստանի մի մասում։ Ամբողջ աշխարհի բանվորները մի նպատակ ունեն, մի շահ—կռիվ կապիտալիստների դեմ, կռիվ համաշխարհային պրոլետարական հեղափոխության համար, կռիվ սոցիալիզմի համար։

Ամբողջ աշխարհի բանվոր դասակարգը ստեղծել է միջազգային կազմակերպություն—կոմունիստական ինտերնացիոնալ (Կոմինտերն), վոր ղեկավարում է բանվոր դասակարգի կռիվը Կոմինտերնը միացնում է ամբողջ աշխարհի կոմունիստական կուսակցությունները։

4. ՀԿԿ(բ) Կոմինտերնի մեջ ղեկավարող դեր է կատարում։ Նա միակ կուսակցությունն է, վոր հաղթել է կապիտալիստներին ու կալվածատերերին և ղեկավարում է ԽՍՀՄ-ի սոցիալիստական շինարարությունը—միջազգային հեղափոխության ամրոցը։ Նրա հեղափոխական կռվի և սոցիալիստական շինարարության որինակով բոլոր յերկրների կոմկուսակցությունները սովորում են, ինչպես պետք է առաջնորդել բանվորներին կապիտալիստների դեմ՝ նրանց հաղթելու համար։

Մենք արդեն մտել ենք սոցիալիզմի շրջանը, ամբողջ արդյունաբերությունը խորհրդային իշխանության ձեռքն է և գյուղատնտեսության մեծ մասը կոլեկտիվացված է, մենք լիովին վոչնչացնում ենք կապիտալիզմի մնացորդները մեր յերկրում։ Մենք վերացնում ենք կուլակությունը՝ վորպես դասակարգ համատարած կոլեկտիվացման հիման վրա։

Դրա համար ամբողջ աշխարհի կապիտալիստները կռվում են ԽՍՀՄ-ի դեմ և պատերազմ նախապատրաստում նրա դեմ։ Կրոնական կազմակերպությունները արտասահմանում ոգնում են կապիտալիստներին պատերազմի նախապատրաստության գործում՝ ԽՍՀՄ-ի դեմ։ Կապիտալիստների ոգնականն է ԽՍՀՄ-ի ներսում՝ կուլակը, տերտերը, աղանդավորը, վնասարարը։

Մեր բարեկամներն են ամբողջ աշխարհի բանվորներն ու աշխատավոր գյուղացիները։ Մենք չենք ուզում պատերազմ։ Մենք առաջարկում ենք կապիտալիստներին անցկացնել ընդհանուր զինաթափում, բայց կապիտալիստները հրաժարվեցին քննել անգամ այդ հարցը։ Կապիտալիստները չեն կարող առանց պատերազմի գոյություն ունենալ, վորովհետև նրանք նոր շահերի հետևից են ընկնում, հումույթի հետևից, վորպեսզի շահագործեն վոչ միայն իրենց յերկրի բանվորներին, այլ և ուրիշ յերկրների։

Կապիտալիստական յերկիրը դեպի անկումն է գնում, նա չի կարող հաշտ ապրել բուռն կերպով սոցիալիզմ կառուցող յերկրի—ԽՍՀՄ-ի հետ։ Նա բոլոր ուժերը լարում է նրա հետ կռվելու։ Զինվորման և զինվորական պետքերի համար ծախսերի աճումը կապիտալիստական յերկրներում։ Դրա համար Կարմիր բանակի հզորությունը մեծացնելու խնդիրը առաջվա պես մնում է մարտական խնդիր ԽՍՀՄ-ի աշխատավորության համար։

Բանվոր դասակարգը և մեր յերկրի բոլոր աշխատավորները ամբողջ աշխարհի բանվորների հետ միասին կանգնած են ԽՍՀՄ-ի պաշտպանության համար—ամբողջ աշխարհի սոցիալիստական հայրենիքի համար։ Յեթե կապիտալիստները մեզ վրա հարձակվեն, մեր Կարմիր բանակը ԽՍՀՄ-ի և ամբողջ աշխարհի բանվորների ոգնությամբ կտա նրանց հարկավոր հակահարված։

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

III. ԽՈՒՄԲ

I. ՄԵՐ ՎԱՅՐԸ, ՄԵՐ ՌԱՅՈՆԸ, ՄԵՐ ՄԱՐԶԸ

1. Կողմնորոշում տարածության նկատմամբ—հորիզոնի կողմերի վորոշումն արևով, բևեռային աստղով և կողմնացույցով։ Կեսօրյա գիծ (նրա վորոշումը դպրոցամերձ հրապարակում)։ Ինքնագործ կողմնացույցի կազմությունը (մագնիսի, խցանի, ասեղի ոգնությամբ)։

2. Հեռավորությունների և հրապարակների չափումը քայլերով, մետրով, դպրոցամերձ հողամասում։ Հողամասի, կոլտնտեսության սեղմ պլանի կազմումը, քաղաքում—մոտակա փողոցների պլանը։ Մասշտաբի (չափանիշի) հասկացողությունը։ Պլանի գծումը մասշտաբով։

3. Կողմնորոշում ըստ պատրաստի պլանի։ Նրա ստուգումն եքսկուրսիայի ժամանակ (պլանի համեմատությունն իրականության հետ)։ Հորիզոնի կողմերի նշանակումը պլանում։ Հեռավորությունների վորոշումն ըստ պլանի։ Կարդալ պլանի բացատրական ցուցմունքներից ոգտվել (մեծ քաղաքներում)։

II. ՏԵՂԻ ՄԱԿԵՐԵՍԻ ՅԵՎ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՊԼԱՆԻ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

1. Իր տեղի ծանոթությունը (եքսկուրսիայի միջոցով դեպի բարձունքը և շրջապատները)։ Տեղի մակերևը—հարթություն, բլուր, ցածրություն, ձորեր, գետահովիտ և այլն։ Գյուղատնտեսական հողամասեր (անտառ, դաշտեր, մարգագետիններ, ճահիճ), ճանապարհներ, շենքեր, կապի միջոցներ։

2. Հողամասերի դիրքի ուսումնասիրությունը տեղի ռելեֆի և մարդու տնտեսական ոգտագործման համար պիտանի և անպետք տեղերի հայտնաբերման հետ կապված։

3. Տեղի առանձնահատկությունների արտահայտումը տոպոգրաֆիկ պլանում (սովորողների ծանոթացումն՝ յեղած տոպոգրաֆիկ պլանին)։ Տոպոգրաֆիկ պայմանական նշանների ուսումնասիրությունն և նրանց նկարումն աշխատանքի տետրակում։

4. Տոպոգրաֆիկ պլանի նշանակությունն յերկրի պաշտպանության գործում։

III. ՄԱԿԵՐԵՍԱՅԻՆ ՅԵՎ ՅԵՆԹԱՄԱԿԵՐԵՍԱՅԻՆ ՋՐԵՐ

1. Աղբյուրներ, ջրհորեր, առուներ, գետեր, լճակ, լիճ, հոսող և կանգնած ջրեր:

2. Հատկացողություններ—կղզի, թերակղզի, գետահովիտ, ակունք, հուն, գետաբերան, գետային սիստեմ, գետի վտակները, աջ և ձախ ափը:

3. Ցամաքի մակերեսի ձևափոխումը քամու և ջրի գործունեության հետևանքով—ափերի քանդումը, ձորերի ծանծաղուտների ծագումը, ավազի կիտվածքները, լեռների քայքայումն և այլն:

4. Մարդու ներգործումը բնության վրա—ճահիճների չորացում, ձորերի ամրացում, պայքար ավազների դեմ, հողերի վոռոգում:

IV. ՔԱՐՏԵԶԻ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

1. Իր ռայոնի, մարզի, ԽՍՀՄ քարտեզի ցուցադրումը:

2. Պլանի և քարտեզի տարբերությունը (մասշտաբով, քարտեզի ատրիճանային ցանցով): Իր գյուղի, քաղաքի, մարզի գտնելը քարտեզի վրա: Քարտեզի մասշտաբի գտնելը: Գյուղերի, քաղաքների հեռավորությունների վորոշումը քարտեզով: Գետերի, քաղաքների, ծովերի, լճերի, յերկաթուղիների պայմանական նշանակումները քարտեզի վրա:

3. Յերկրի մակերեսի տարբեր ձևերի նշանակումը ֆիզիկական քարտեզի վրա—ցածրություններ, բարձրություններ և լեռներ, ծովերի զանազան խորություններ, ցամաքի մակերեսի բարձրությունը ծովի մակերեսից: Ֆիզիկական քարտեզի պայմանական գույները:

V. ՅԵՐԿՐԱԳՈՒՆԴԸ ՅԵՎ ՆՐԱ ՊԱՏԿԵՐԸ ԳԼՈԲՈՒՍՈՎ ՈՒ ԿԻՍԱԳՆԴԵՐԻ ՔԱՐՏԵԶՈՎ

1. Գլոբուսը վորպես յերկրագնդի փոքրաձևը (կաղապարը): Ինչու մարդիկ սկսեցին հասկանալ, վոր յերկիրը գունդ է: Աշխարհաշուրջ ուղևորություններ:

2. Յերկրի որական պտույտը: Ցերեկի և գիշերի հաջորդումը:

3. Բևեռներ (յերկրի առանցքի ծայրերը), ատրիճանացանցի գլխավոր գծերը—հասարակած, արևադարձներ, բևեռային շրջաններ, սկզբնական (առաջին) միջօրեական: Հյուսիսային և հարավային, արևելյան և արևմտյան կիսագնդեր:

4. Կիսագնդերի քարտեզը. աշխարհի մասերը. ովկիանոսներ:

5. Յերկրի մակերեսի տարբեր տաքացումը հասարակածում և բևեռներում, արևի ճառագայթների ուղղաձիգ և թեք ուղղության պատճառով: Յերկրի բաժանումը տաքության հինգ գոտիների: Նրանց պայմանական սահմանները (արևադարձ, բևեռային շրջաններ): Աշխատանք գլոբուսով:

6. Տաք և ցուրտ յերկրներ: Համապատասխան պատկերների ցուցադրումը և ուսուցչի բացատրությունը: Մոտավորապես շոշափվում են հետևյալ թեմաները.—

Տաք յերկրներ—նեգրեր, հնդիկներ, արաբներ: Բնակարան և հագուստ: Ընտանի կենդանիներ: Վայրենի կենդանիները—փիղ, առյուծ, վագր, ռնգեղջյուր, ընձուղտ, ուղտ, թռչուններ: Անապատներ—ովազիս, արմավենիներ, կաուչուկ, կոկոսյան ընկույզ:

Ցուրտ յերկրներ—սամոյեդներ, յակուտներ, էսկիմոսներ: Հագուստ, ուղևորություն յեղջերուներով: Կենդանիները և թռչունները: Թռչունների չուն տաք յերկրներից ցուրտ յերկրները:

Բարեխառն կլիմա ունեցող յերկրներ: Չինացիներ, ճապոնացիներ, ամերիկացիներ, անգլիացիներ, գերմանացիներ, ֆրանսիացիներ:

VI. ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՊՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԸ ՄԵՐ ՌԱՅՈՆՈՒՄ ՅԵՎ ՄԵՐ ՄԱՐԶՈՒՄ. ԻՆՉՈՎ ԵՆ ԶԲԱՂՎՈՒՄ

(Աշխարհագրական ակնարկ)

1. Ռայոնի, մարզի տեղադրությունը ԽՍՀՄ-ում (քարտեզով): Իմանալ իր տեղի գետերն ու լճերը: Ուր է հոսում իրենց գետը և ուր է թափվում: Իմանալ գյուղերը, վոր ընկած են իրենց գյուղի շուրջը 5—10 կիլոմետր շառավիղով: Իմանալ իրենց

քաղաքը և մարզի (յերկրամասի) գլխավոր քաղաքները: Յերկաթուղիներ (այդ գիտելիքները ձեռք են բերվում քարտեզի ուսումնասիրությամբ):

2. Մարզի բաժանումն ռայոնների: Մարզի բնակչությունը:

3. Մեր ռայոնի, մեր մարզի բնական պայմանները—մակերեսի կազմությունը, կլիման, հողը, վոռոգումը, բուսական և կենդանական աշխարհը:

4. Մարզի գլխավոր բնական հարստությունները և նրանց ոգտագործումը մարզի տնտեսության մեջ (եքսկուրսիա դեպի հանքերի տեղական մշակումը):

5. Խոշոր էլեկտրոկայանները, ֆաբրիկները, գործարանները և նրանց գլխավոր արտադրանքը:

6. Մարզի գյուղատնտեսության կոլեկտիվացումը: Խոշոր խորհտնտեսությունները, կոլտնտեսությունները, մեքենատրակտորային կայանները, գյուղատնտեսական կետերը:

7. Մեր ռայոնի, մարզի տնտեսական կապը մյուս մարզերին:

8. Մեր մարզի (յերկրամասի) հնգամյա պլանը սոցշինարարության խոշոր ծավալների նկատմամբ: Ինչպես է փոխվելու մեր մարզը հինգ տարվա ընթացքում:

ՉՈՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՇԽԱՐՀԻ ՄՅՈՒՍ ՅԵՐԿՐՆԵՐԸ

I. ԱՇԽԱՐՀԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԸ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵՂԸ ՅԵՐԿՐԱԳՆԴԻ ՎՐԱ

1. Խորհրդային Միության աշխարհագրական դիրքն յերկրագնդի վրա (նշանակել դիրքը հյուսիսային կիսագնդում, զանազան տաք գոտիներում, ովկիանոսների նկատմամբ): Ամենահեռավոր կետերը:

2. Մեր Միության մեծությունը: Խորհրդային Միության ծովային և ցամաքային սահմանները: Կղզիներն ու թերակղզիները:

Ծանոթություն. Խորհրդային Միության վերաբերյալ իմանալ հետևյալ ծովերը—Հյուսիսային, Բելոռային, Սպիտակ, Բարենցովի, Կարայական, Բալտիկ, Սև, Կասպից, Բերինգյան, Օխոտի, Ճապոնական: Կղզիներ և թերակղզիներ—Նոր յերկիր, Կոլսկի, Սախալին, Կամչատկա, Ղրիմ:

3. Խորհրդային Միության հարևանները (սահմանակից պետություններ)—Ֆինլանդիա, Եստոնիա, Լատվիա, Լեհաստան, Ռումինիա, Թուրքիա, Պարսկաստան, Աֆղանիստան, Չինաստան, Մոնղոլիա, Ճապոնիա: Նրանց մայրաքաղաքները:

4. Կապիտալիստական աշխարհի գլխավոր պետությունները—Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա (ցույց տալ քաղաքական քարտեզի վրա): Նրանց մայրաքաղաքները:

II. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՅԵՎ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԸ

1. Խորհրդային Միությունը վորպես յեղբայրական հանրապետությունների միություն: Միութենական հանրապետությունները, ազգային հանրապետություններն և ինքնավար մարզերը, վարչական մարզերը: Միութենական և հանրապետական կենտրոնները և գլխավոր քաղաքները—Մոսկվա, Մինսկ, Խարկով, Թիֆլիս, Աշխաբադ, Տաշկենտ, Ստալինաբադ, Ստալինգրադ, Մուրմանսկ, Օդեսա: Բաթում, Նովոռոսիյսկ, Բաքու, Յերևան, Սվերդլովսկ, Նովո-Սիբիրսկ, Վլադիվոստոկ:

III. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԲՆԱԿԱՆ ԶԱՆԱԶԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Ֆիզիկական, կլիմայական, հողաշերտային, բուսական և կենդանագրական քարտեզների վերլուծումը):

1. Խորհրդային Միության հարթավայրերի, բարձրավանդակների և լեռնային շրջանների դիրքը (ֆիզիկական քարտեզում ցույց տալ—հյուսիսային, յեվրոպական և սիբիրական հարթավայրերը, միջին-ռուսական բարձրավանդակ, Ուրալի, Ղրիմի, Կովկասյան լեռներ, միջին ասիական և Սիբիրական լեռնաշղթան, Պամիրի լեռնաշխարհը:

2. Իշխող քամիների ուղղությունը և մթնոլորտային տեղումների բաշխումը Խորհրդային Միության մեջ: (Կլիմայական քարտեզի վերլուծումը):
3. Խորհրդային Միության հողաշերտային և բուսական շրջանները:
4. Կենդանիների բաշխումը Խորհրդային Միության մեջ (կենդանագրական քարտեզի վերլուծումը):
5. Խորհրդային Միության բնական-աշխարհագրական շրջանները (թվել):

IV. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ՅԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԲԱՂՈՒՄՆԵՐԸ

Ա. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԲԵՎԵՌԱՅԻՆ ՄԱՍԸ

1. Հյուսիսային բևեռային ծովի նկարագիրը: Ծովափնյա գիծ: Կղզիները և թերակղզիները—Նոր յերկիր, Ֆրիտյոֆ Նանսենի, Կոլգույեվի, Վայգաչ, Նոր սիբիրական, Վրանգելի, Կոլի թերակղզին, Կանին, Թայմիր, Չուկոտի: Ծովերը—Բարենցովի, Սպիտակ, Կարայական, Սիբիրի:
2. Կլիմայի խստությունը: Բևեռային ցերեկն ու գիշերը: Հյուսիսափայլերը:
3. Նավագնացության պայմանները Հյուսիսային ծովերում: Հյուսիսային Մեծ ուղին և նրա ուսումնասիրողները: Հյուսիսի ուսումնասիրության մեր արշավախմբերը: «Սեդով», «Կրասին», «Մալիգին», սառցաբեկ նավերի ուղևորությունը:
4. Ռադիոկայանների կառուցումը կղզիներում: Ձմեռողների կյանքը:
5. Գազանային արդյունագործություններ (ծովափոկերի, ծովացուլերի, կետերի, սպիտակ արջերի վորսում):

Բ. ՏՈՒՆԴՐԱ

1. Տունդրաները տարածվում են հյուսիսային ափերով: Տունդրայի յուրահատուկ բնույթը—կարճ ամառ, յերկար ձմեռ բևեռային գիշերով, մշտական սառածություն, հողաշերտի չնչին հալումն ամառը:
2. Տունդրայի բուսականությունը—մամուռ, լոռամրգի (клюква), մոշ, թզուկային կեչի (հարավում):
3. Կենդանիները—հյուսիսային յեղջերու, բևեռային աղվես, սպիտակ կաքավ, ամառը ներչվող թռչուններ:
4. Հյուսիսի բնակչությունը—լոպարներ, նենցիներ, տունգուսներ, կորյակներ, կամչադալներ: Նրանց բնակարանը և կենցաղը:
5. Բնակչության զբաղմունքը—յեղջերապահություն, ձկնորսություն, վորսորդություն: Բնակիչների թափառաշրջիկ կյանքը անասունների կերի պատճառով: Փոխադրության միջոցները:
6. Բնակչության շահագործումը ցարական իշխանության ժամանակ ապրանքառու վաճառականների կողմից: Խորհրդային իշխանության հոգատարությունը հյուսիսային ժողովրդների կուլտուրական զարգացման և կենցաղի լավացման մասին (կուլտբազաներ, առևտրական կետեր, հիվանդանոցներ, դպրոցներ): Տեղական խորհրդները:
7. Հյուսիսի հնգամյակը: Օգտակար հանածոները հյուսիսում և նրանց մշակումը: Խիբինի ապատիտները (պարարտանյութ):

Գ. ՏԱՅԳԱՆ ՎՈՐՊԵՍ ԽՍՀՄ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՅԵՎ ՄՈՐԹԵՂԵՆԻ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆ

1. Փշատերև անտառների տարածությունը ԽՍՀՄ-ում տասնյակ հազարավոր կիլոմետրներով. տայգան կտրող գետերը—հյուսիսային Դվինա, Պեչորա, Օբ Իրտիշ վտակով, Յենիսեյ, Լենա:
2. Կենդանական աշխարհի բազմազանությունը:
3. Տայգայի անմարդաբնակությունը: Հազվադեպ գյուղակներ գետերի ափին կամ Տայգայի մշակման վայրերում:
Տեղական բնակիչները—տունգուսներ, ոստյակներ, վոգուլներ, յակուտներ: Նրանց բնակարանը և կենցաղը:
4. Արդյունագործական կենդանիների վորսը սկյուռ, սամույր և այլն: Պետական անասնարաններ (սևազորշ աղվեսներ և մյուսները):

5. Ծառերի տեսակները—յեղևնի, մայրի: Անտառային արդյունագործություն (փայտի կտրելն և գետով փոխադրելը) փայտի փոխադրումն արտասահման, գետերով: Փայտասղոցային գործարաններն Արխանգելսկում: Տայգայի ճանապարհներից զուրկ լինելը:
6. Կլիման—կարճատև, բայց տաք ամառ, ուժեղ սառնամանիքները ձմեռը: Ցրտի բևեռը—Վերխոյանսկ: Վայրեր, վորտեղ հնարավոր է յերկրագործությամբ պարապել:
7. Հանածո հարստությունները (գրաֆիտ, քարածուխ, վոսկի Յենիսեյում, նավթ—Ուխտա գետով (Պեչորայի ավազան):

Դ. ԽԱՌՆ ԱՆՏԱՌՆԵՐԻ, ԱՆՏԱՌԱՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԻ, ՏԱՓԱՍՏԱՆԻ, ՆԱԽԱԼԵՌՆԵՐԻ ՅԵՎ ԼԵՌՆԵՐԻ ՇՐՋԱՆՆԵՐ

1 Բնական պայմանների համառոտ բնութագիրը—կլիմա, հողաշերտ, բուսական և կենդանական աշխարհ:
2. Խառն անտառների շրջանի բնակիչները (ռուսներ, բելոռուսներ, թաթարներ, չուվաշներ և այլն), տափաստանների շրջանի բնակիչներ (ուկրայինցիք, բաշկիրներ, կազակներ և այլն, լեռնային շրջանի բնակիչներ (Կովկասի և միջին Ասիայի ժողովրդներ): Նրանց կենցաղը:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԱՅՈՆՆԵՐ

1. Գյուղատնտեսական գլխավոր ռայոնների համառոտ ակնարկ քարտեզով (Ուկրաինայի խորհրդային հանրապետություն, Կենտր. սևահողի մարզ (ЦЧО) Մերձվոլգյան շրջան, Սիբիր, Հ. Կովկաս):
2. Յերկրագործության, այգեգործության, բանջարաբուծության նպաստող պայմանները:
3. Գյուղատնտեսական մշակույթներ—հատիկային (հաճար, ցորեն, գարի, վարսակ և այլն), տեխնիկական բույսեր (վուշ, կանեփ, բամբակ, ծխախոտ, կարտոֆիլ, արևածաղիկ, շաքարի ճակնդեղ):
4. Անասնապահություն: Կաթնային և մսային տնտեսություն:
5. Ձկնորսությունը մեծ գետերում, լճերում և ծովափերում:
6. Խորհրդային Միության գյուղատնտեսության զարգացման հնգամյա պլանը: Կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների շինարարությունը: Անհատական գյուղատնտեսության թերությունները:
7. ԹԱՓԱՌԱՇՐՋԻԿ—ԱՆԱՍՆԱՊԱՀՆԵՐԻ (կազակների, բուրյատ—մոնղոլների) աշխատանքի և կենցաղի, տափաստանների և լեռների բնության պատկերները: Նախնական տնտեսություն: Տնտեսության կոլեկտիվացումը խորհրդային իշխանության որով:
8. Բնության, աշխատանքի և կենցաղի պատկերները միջին Ասիայում: Կլիմա, հողաշերտեր, ավազի անապատներ. ովազիսներ: Բամբակի դաշտեր: Կապը տեքստիլ ռայոնների հետ: Պայքար բնության դեմ—վոռոգման սարքավորումներ, ուղիներ, անապատի վերածումն այգիների, դաշտերի: Ազատագրում ցարական ճնշումից, կուլտուրայի մուտքը, սնահավատություն, ազգությունների փոխադարձ թշնամության թուլացումը, ինչպիսի թշնամություն դաստիարակվել է ցարական քաղաքականության շնորհիվ:
9. Բնության, աշխատանքի և կենցաղի պատկերներ լեռնային վայրում (կյանքը լեռներում): Կլիմայի, բուսականության տարբերությունը լեռների զանազան մասերում: Յերկրագործության դժվարությունները լեռներում: Ալպյան մարգագետիններ: Թափառաշրջիկ անասնապահություն, վոչխարապահություն: Ձյունապատ բարձունքներ: Լեռների թռչուններն ու կենդանիները: Առվները լեռներում: Լեռցիների տնայնագործությունը:

2. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՌԱՅՈՆՆԵՐԸ

Խորհրդային Միության ստորյերկրյա հարստությունները:
1. Գլխավոր արդյունաբերական ռայոնների համառոտ ակնարկ քարտեզով, արդյունաբերության զարգացման նպաստավոր պայմանների տեսակետից (Դոնեցկի ավազան, Դոնբասս, Կրիվոյ Ռոգ, Ցենթմոսկովյան ավազան, Մոսկվա, Լենինգրադ, Ուրալ, Կուզնեցկի ավազան (Կուզբաս), Կովկաս, Կարագանդա):

2. Արդյունաբերական աշխատանքի պատկերներ հանքահանության ընթացքում (քարածուխ, նավթ, տորֆ, աղ և այլն):

ա) Աշխատանքը քարածխի շախտերում (Դոնբաս, Կուզբաս, Չերեմխովյան ռայոն): Քարածխի գործածումը: Քարածխի նշանակությունը արդյունաբերության, տրանսպորտի և գյուղատնտեսության զարգացման համար:

բ) Աշխատանքը նավթի արդյունաբերության մեջ (Բաքու, Գրոզնի, Մայկոպ, Էմբա): Նավթի գործածումը յերկրի անտեսության մեջ:

3. Խորհրդային Միության էլեկտրոֆիկացիան: Խոշորագույն էլեկտրոկայաններ—Վոլխով (սպիտակ ածուխով—ջրով), Շատուր (տորֆով), Կաշիր (քարածխով): Դնեպրոշենը (նկարագրել մանրամասն և ուրիշ էլեկտրոկայաններ): Նրանց նշանակությունը արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման համար: Էլեկտրականության կիրառումը կենցաղում և արդյունաբերության մեջ—լուսավորություն, էլեկտրաշարժիչներ տրամվայ, հեռախոս, հեռագիր, ռադիո:

4. Տնայնագործություններ փայտագործական (Նիժեգորոդի յերկրամաս, Մոսկվայի մարզ), մետաղագործական—պավլովյան դանակներ, կողպեքներ և այլն:

5. Խորհրդային Միության արդյունաբերության զարգացման հնգամյա պլանը: Նոր ֆաբրիկաների և գործարանների շինարարությունը: Սոցիալիստական քաղաքներ—Մագնիտագորսկ, Կուզնեցկ, Բոբրիկի: Խիբինոգորսկ և մյուսները:

V. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Խորհրդային Միության յերկաթուղացանցը: Գլխավոր գծերը (մագիստրալները) և յերկաթուղային հանգույցները: Մոսկվան 11 գծերի կենտրոնում: Սիբիրական մեծ ուղին—Թուրքսիբ:

Յերկրի գլխավորագույն ջրային յերակները: Մարինյան սիստեմը: Վոլգայի և Խորհրդային Միության մյուս խոշոր գետերի նշանակությունը—Հյուսիսային Դվինա, Պեչորա, Նեվա, Դնեպր, Դոն, Ուրալ, Օբ-Իրտիշով, Յենիսեյ,—Անգարայով, Լենա, Ամուր Ծովային տրանսպորտը, նավահանգստային քաղաքներ: Արտասահման տանող ուղիները: Ավտոմոբիլային տրանսպորտ: Տրանսպորտի զարգացման հնգամյա պլանը Հաղորդակցության ճանապարհների դերն յերկրի պաշտպանության գործում:

VI. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ

ԽՍՀՄ արտաքին առևտուրը և նրա կապը կապիտալիստական յերկրների հետ: Ներմուծում (մեքենաների) և արտահանում (հացի և ուրիշ գյուղատնտեսական մթերքների, փայտի մորթեղենի և այլն):

VII ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խորհրդային Միությունը վորպես սոցիալիզմի մեծ շինարարության յերկիր, ամբողջ աշխարհի աշխատավորության հենարանը, կապիտալիստական յերկրների իշխող դասակարգերի ատելության առարկա:

Մեր խնդիրն է ամեն կերպ ամրացնել ԽՍՀՄ պաշտպանությունը, հասնել ու անցնել կապիտալիստական յերկրներից, սոցիալիզմի լրիվ հաղթանակի համար:

VIII ԱՇԽԱՐՀԻ ԳԼԽԱՎՈՐ ՅԵՐԿՐՆԵՐՆ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ

Նպատակահարմար ծանոթացնել սովորողներին աշխարհի քաղաքական բաժանմանը՝—աշխարհի գլխավոր պետություններին, նրանց դրությանն յերկրագնդի վրա, իմպերիալիստական պետությունների գաղութներին, համաշխարհային ուղիներին, կարևորագույն ռազմագիտական և առևտրական կետերին և տալ գլխավոր յերկրների համառոտ բնույթագիրը:

1. Ցույց տալ աշխարհի քաղաքական քարտեզում գլխավոր պետությունները—Հ.Ա.Մ.Նահանգներ, Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Ճապոնիա, Չինաստան և այլն: Խորհրդային Միության հարևանները:

2. Գնահատել այդ պետություններից յուրաքանչյուրի աշխարհագրական դիրքը (ծովին մոտիկ լինելը, ծովափի կտրվածությունը, հաղորդակցության հարմարություններ մյուս պետությունների հետ: Ցույց տալ հաղորդակցության համաշխարհային ուղիները, կարևորագույն ռազմագիտական և առևտրական կետերը—Ջիբրալտար, Սուեզ, Պանամա և այլն:

3. Համեմատել քարտեզով—պետությունների բռնած տարածությունները: Քարտեզի վրա գտնել Անգլիայի, Ֆրանսիայի, Հ.Ա.Մ. Նահանգների, Իտալիայի, Ճապոնիայի գլխավոր գաղութային տիրապետությունները:

4. Գտնել այդ պետություններն աշխարհի ֆիզիքական քարտեզում: Համառոտ, հիմնականում պարզել նրանց բնական պայմանները:

ա) Ինչպիսի կլիմայական գոտում է գտնվում:

բ) Մակերեսի կազմությունը (լեռնային, հարթավայրային մակերես):

գ) Բուսական և կենդանական աշխարհ (ցույց տալ գլխավոր ներկայացուցիչները):

դ) Հանքային հարստությունները:

5. Գլխավոր պետությունների և նրանց գաղութների բնակիչների քանակը: Ազգությունների ճնշումը գաղութներում: Սպառազինման աճը կապիտալիստական յերկրներում: Աշխատավորության շահագործումը կապիտալիստական յերկրներում: Հեղափոխական շարժման աճը Հնդկաստանում և մյուս յերկրներում:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

ԱՌԱՋԻՆ ԽՈՒՄԲ

ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴ (50 ժամ)

ՀԱՇԻՎ: Հիմնավորել յերեխաների թվերի, տարածության և ժամանակի մասին ունեցած պատկերացումները:

Ուղիղ և հակադարձ համրանք մինչև 10-ը: Ծանոթություն թվանշանների հետ—իմանալ կարդալ, գրել և նշանակել թվերը մինչև 10-ը:

Գումարում և հանում 10-ի շրջանում. համրանք յերկյակներով, հնգյակներով 10-ի շրջանում: Գումարման և հանման նշանները · + (պլյուս), — (մինուս) (հավասարման նշան):

Չափում յեվ գծագրություն: Ծանոթություն ձևերի հետ-քառակուսու,ուղղանկյան,յեռանկյան և շրջանի հետ. իմանալ նրանց զանազանել իրարից, ուղիղ անունը տալ, թղթից կտրել, կազմել ձողիկներից, գծագրել քառակուսի և ուղղանկյուն վանդակավոր թղթի վրա, իսկ շրջանը՝ վորևէ շրջանաձև առարկայի օգնությամբ (օրինակ՝ դրամի, բաժակի հատակի և այլն): Իմանալ գտնել այդ ձևերը շրջակայքում: Ուղիղ և կոր գիծ. իմանալ ուղիղ գիծը կոր գծից զանազանել, նրանց ճիշտ անունը տալ, թղթի վրա քանոնի օգնությամբ ուղիղ գիծ գծել, գտնել շրջակայքում ուղիղ և կոր գծեր:

Աշխատանք դրամների հետ (1, 2, 3, 5, 10, կոպ). վարժություններ դրամներով պահանջված գումարը կազմելու և մանրը վերադարձնելու 10-ի շրջանում:

Ծանոթություն մետրի և կես մետրի հետ: Օգտվել նրանցով չափումներ անելիս:

Վարժություններ հեռավորությունը քայլերով չափելու և աչքի չափով վորոշելու վերաբերյալ: Օր, հնգօրյակ:

ՅԵՐԿՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ (50 ժամ)

Հաշիվ: Համրանք և թվարկում 20-ի շրջանում, թվերի կազմությունը և թիվ գրելը, ուղիղ և հետադարձ համրանք 20-ի շրջանում, ուղիղ և հետադարձ համրանք զույգերով, հնգյակներով, յեռյակներով, քառյակներով 20-ի շրջանում. գումարում և հանում 20-ի շրջանում:

Համրանք մինչև 100: Ուղիղ և հետադարձ համրանք 100-ի շրջանում զույգերով և հնգյակներով:

Չափում յեվ գծագրություն: Ծանոթություն սանտիմետրի հետ. սանտիմետրով օգտվել չափումներ կատարելիս:

Ծանոթություն կիլոգրամի, կես կիլոգրամի և քառորդ կիլոգրամի հետ: Վոչ մեծ ծանրությունների կշռի վորոշումը կշեռքի և կշռաքարերի միջոցով: Փոքր մարմինների կշռի մոտավոր վորոշումը առարկան ձեռքի վրա վերցնելով (վարժություններ):

Ծանոթություն լիտրի, կես լիտրի և քառորդ լիտրի հետ: Իմանալ մոտավոր կերպով վոչ մեծ անոթների (դույլի, շշի, բաժակի և այլն) տարողությունը:

Աշխատանք դրամների և թղթադրամների հետ—15, 20 կոպ., 1, 3, 5, 10 ռուբ. վարժություններ փող մանրացնելու, պահանջված գումարը կազմելու և անհրաժեշտ մանրը վորոշելու վերաբերյալ։

ՅԵՐՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ (55 ժամ)

Հաշիվ։ Գումարում և հանում կլոր տասնյակներով։ Գումարում և հանում 100-ի շրջանում (բոլոր դեպքերը՝ առանց տասնյակներից անցնելու)։

Ծանոթություն մարմինների հետ յեվ նրանց չափումը. Ծանոթություն մարմինների հետ—խորանարդ, պրիզմա, գլան, գունդ։ Կարողանալ նրանց զանազանել, ուղիղ անունները տալ և գտնել համապատասխան ձևեր շրջակայքում։

Ծանոթություն ժամացույցի հետ. պատրաստել ժամացույցի թվացույց (цифер-блат) սլաքներով։ Ժամացույցի միջոցով վորոշել ժամանակը ուղիղ ժամերով։ Ժամ, տասնօրյակ, ամիս։ Իմանալ, քանի որ կա տասնօրյակում քանի հնգօրյակ կա դեկադում, քանի հնգօրյակ կա ամսում։ Որվա ժամերի թիվը։

ՉՈՐՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ (45 ժամ)

Հաշիվ։ Բազմապատկում և բաժանում 20-ի շրջանում։ Բազմապատկման և բաժանման նշանները։

Ամբողջի $^1/_2$, $^1/_4$ կոտորակ մասերի գրելը։ Առարկաների բաժանումը յերկու և չորս մասերի։ Թվի կեսի և քառորդի գտնելը։

Չափում յեվ գծագրություն։ Մոտավոր կերպով ժամանակամիջոցի, կշռի և ծավալի վորոշման աշխատանքներ (շարունակություն նախկին այդորինակ աշխատանքների)։ Հեռավորության վորոշումը քայլերով։

Պարանի ոգնությամբ ուղիղ գիծ գծել և չափել նրա յերկարությունը։

Ծանոթություն ամենահասարակ դիագրամմաների հետ. իմանալ կարդալ և գծագրել ամենահասարակ սյունավոր դիագրամներ վանդակների միջոցով (վանդակը ընդունվում է վորպես միավոր արտահայտող մեծության)։

Ծանոթություն ամենապարզ սխեմատիկ նկարների և ուղղանկյուն ձևերի գըծագրերների հետ և իմանալ ոգտվել նրանցով աշխատանքի պարապմունքների ժամանակ։

Խնդիրների լուծումը կատարվում է ամբողջ տարվա ընթացքում։

ՅԵՐԿՐՈՐԴ ԽՈՒՄԲ

ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴ (50 ժամ)

Հաշիվ։ Կրկնություն բազմապատկման և բաժանման գործողության 20-ի շրջանում և գումարման ու հանման գործողության 100-ի շրջանում (բոլոր դեպքերը)։

Գումարում և հանում յերկանուն բարդ անվանական թվերի (ռուբլի և կոպեկ, մետր և սանտիմետր, որ և ժամ, ժամ և րոպե)։

Թվերի տարբերական համեմատություն (այսքանով մեծ է, այնքանով փոքր է)։

Աղյուսակային բազմապատկում և բաժանում 100-ի շրջանում.

ա) Ուղիղ և հետադարձ համրանք խմբակներով, վորպես նախապատրաստական աշխատանք աղյուսակային բազմապատկման և բաժանման համար։

բ) Բազմապատկման և բաժանման աղյուսակը (5, 2, 4, 3)։

Չափում յեվ գծագրություն։ Գետնի վրա գծել ուղիղ գծեր և չափել նրանց յերկարությունը։ Չափել հողամասերի (բակի, բանջարանոցի, հրապարակի) յերկարությունը և լայնությունը։ Աչքի չափով վորոշել հեռավորությունը մինչև 100 մետրի սահմանում։

Դասարանի հատակագծի գծագրումը վանդակավոր թղթի վրա։ Ծանոթություն մասշտաբի հետ։ Վորոշ յերկարություն ունեցող ուղիղ գծերի գծագրումը թղթի վրա։

Սյունավոր դիագրամներ (մեկ վանդակը ընդունվում է մի քանի միավորների փոխարեն—2, 5, 10)։

Պարզ հասկացողություն ժամանակի վերաբերյալ—տարի, ամիս, տասնօրյակ, հնգօրյակ, որ, ժամ, րոպե։ Ժամացույցի միջոցով ժամանակի վորոշում րոպեների ճշտությամբ։ Ժամերի կրկնակի վորոշումը (ցերեկվա 2 ժամ— 14 ժամ և այլն)։

ՅԵՐԿՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ (50 ժամ)

Հաշիվ։ Բազմապատկման և բաժանման աղյուսակը (6, 8, 9, 7)։ Իմանալ, վոր արտադրիչների տեղը փոխելուց արտադրյալը յերբեք չի փոխվում։

Բազմապատկում և բաժանում աղյուսակից դուրս. յերկանիշ թվերի բազմապատկումը միանիշ թվերի վրա, և միանիշ թվերի բազմապատկումը յերկանիշ թվերի վրա։ Յերկանիշ թվերի բաժանումը միանիշ թվերի վրա։

Բաժանում մասերի և բաժանում ըստ բովանդակության։ Թվերի քանորդական համեմատումը (այսքան անգամ մեծ է, այնքան անգամ փոքր է)։

Բոլոր գործողությունները 100-ի շրջանում։ Կոտորակ մասեր. ծանոթություն $^1/_8$-ի հետ. համանուն կոտորակ մասերի գումարումը և հանումը։ Թվի մեկ մասը գըտնելը։

Չափում յեվ գծագրություն։ Քառակուսի. նրա կողմերի և անկյունների հավասար լինելը։ Տվյալ մեծությամբ քառակուսու կառուցումը անկյունաչափի և քանոնի ոգնությամբ։ Քառակուսի մետր, քառակուսի սանտիմետր և քառակուսի դեցիմետր։

Փոքր ուղղանկյուն մակարդակների չափումը միավոր ընդունված քառակուսին անմիջապես մակերեսի վրա դնելու միջոցով. քառակուսի մետրը անմիջապես դնել զանազան փոքր մակարդակների վրա և իմանալ քանի անգամ է պարունակում նրա մակերեսի մեջ։

Քառակուսի սանտիմետրը դնելով զանազան քառակուսի և ուղղանկյուն գըծագրերների վրա, իմանալ քանի անգամ է պարունակվում նա։

Աչքի չափով ուղիղ գիծը բաժանել 2, 4, 8 մասերի։ Քառակուսին, ուղղանկյունին, շրջանը բաժանել 2, 4, 8 հավասար մասերի (ծալման միջոցով)։

Սենյակի և դրսի ոդի բարեխառնության աստիճանի չափումը ջերմաչափի ոգնությամբ։

ՅԵՐՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ (55 ժամ)

Հաշիվ։ Բերանացի և գրավոր թվարկում 100-ի շրջանում։

Բոլոր գործողությունները կլոր հարյուրակներով 1000-ի շրջանում։

Գումարում և հանում 1000-ի շրջանում համրիչի վրա և գրավոր։

Գումարում և հանում բարդ յերկանուն անվանական թվերի (մետր և սանտիմետր, ռուբլի և կոպ. և այլն։)

Թվերի մեծացնելը և փոքրացնելը մի քանի միավորներով։

Չափում յեվ գծագրություն։ Ծանրության չափեր. գրամ, տոնն, $^1/_2$ կիլոգրամ (500 գրամ), $^1/_4$ կիլոգրամ (250 գ.), 100 գրամ։

Կշռումների կատարում վերև հիշված կշռաքարերի միջոցով։ Կշռի մոտավոր վորոշում առարկան ձեռքի մեջ վերցնելով (2—3 կիլոգրամի սահմանում)։

Ուղղանկյուն—նրա կողմերի և անկյունների հատկությունները։

Տվյալ մեծության ուղղանկյուն գծագրելը անկյունաչափի ոգնությամբ։

ՉՈՐՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ (45 ժամ)

Հաշիվ։ Բերանացի հաշիվ 100-ի շրջանում. բազմապատկման և բաժանման ամենապարզ դեպքեր (գրավոր) 1000-ի շրջանում։

Կլոր տասնյակների և հարյուրակների բազմապատկումը միանիշ թվերի վրա։ Յերկանիշ թվերի բազմապատկումը յերկանիշ թվերի վրա։ Կլոր տասնյակների և յեռանիշ թվերի բաժանումը միանիշ թվերի վրա։

Կրկնողություն բոլոր չորս թվաբանական գործողությունների 1000-ի շրջանում։

Փակագծերով խնդիրների լուծել։

Չափում յեվ գծագրություն. Կիլոմետր. կիլոմետրով չափումներ ուղիղ գծով։ Վորևե տեղի յերկարության և լայնության չափումը և նրանց մասշտաբի վերածելը և հատակագիծ գծելը։ Պարտեզի, բանջարանոցի, բակի, հրապարակի ուղղանկյուն կոնտուրի գծելը ըստ տված մասշտաբի։

Կարդալ և գծագրել սյունավոր դիագրամներ, ընդունելով մեկ վանդակը պայմանական կերպով մի քանի միավոր տեղ։

Խնդիրների լուծումը կատարվում է ամբողջ տարվա ընթացքում։

ՅԵՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ

ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴ (55 ԺԱՄ)

Ամբողջ թվեր։ *Բերանացի հաշիվ 100-ի և 1000-ի շրջանում (1000-ի շրջանում միայն հեշտ դեպքերը, յերբ գործողությունը կատարվում ե ամբողջ հարյուրակների և տասնյակների հետ) բազմապատկում և բաժանում 1000-ի շրջանում. յերկանիշ թվերի բազմապատկումը յերկանիշ թվերի վրա։ Յեռանիշ թվերի բաժանումը յերկանիշ և յեռանիշ թվերի վրա։*

Ստուգում՝ բազմապատկումը բաժանումով և բաժանումը բազմապատկումով։ Թվերի մեծացումը կամ փոքրացումը մի քանի անգամ։

Թվերի բերանացի և գրավոր թվարկումը մինչև 1.000.000։ Թվերի կարգերի և դասերի բաժանումը. իմանալ թվերը գրածը՝ կարդալ, թելադրածը՝ գրել և համրիչի վրա հաշվել։

Չափերի մասին ունեցած գիտելիքները ընդարձակել և վորոշ սիստեմի բերել։ Յերկարության չափեր,—կիլոմետր, մետր, դեցիմետր, սանտիմետր, միլիմետր։ Ծանրության չափեր—տոնն, ցենտներ, կիլոգրամ, գրամ։ Հողի մակերեսի չափեր—ար, հեկտար։ Այդ չափերի մեջ յեղած հարաբերությունները։ Չափերի վերածումը։ Չափերից ոգտվել իմանալը չափելիս և կշռելիս։

Հատարակ կոտորակներ։ *Ամբողջ կոտորակ մասերը— $^1/_2$, $^1/_4$, $^1/_8$, $^1/_3$, $^1/_6$, $^1/_5$, $^1/_{10}$։ Կոտորակ մասերի վերածումը։*

Համանուն և բազմապատիկ թվերով հայտարար ունեցող կոտորակների գումարումը և հանումը (յերբ հայտարարը 10-ից մեծ թիվ չե)։ Ամբողջի մեկ կամ մի քանի մասերի գտնելը (յերկու գործողությամբ)։

Յերկրաչափական նյութ։ *Արի և հեկտարի չափումը։ Քառակուսու և ուղղանկյան կառուցումը Նկկերի ոգնությամբ։*

Վանդակավոր թղթի վրա փոք մեծ ուղղանկյուն հողամասի հատակագիծ գծելը վորոշ մասշտաբով։

Մասշտաբով ուղղանկյուն գիագրամմաների գծելը։

ՅԵՐԿՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ (55 ժամ)

Ամբողջ թվեր։ *1000-ի շրջանում ամեն տեսակի թվերի գումարման և հանման պարզացրած ձևերը։*

Գումարում և հանում 1.000.000-ի շրջանում (գրավոր, բոլոր դեպքերը) Թվերի անունները գումարման և հանման ժամանակ։ Գումարման ստուգումը գումարելիների տեղը փոխելով և հանման միջոցով։ Հանման ստուգումը գումարումով։ Հետևյալ ձևի որինակների լուծում. 25 + X = 42; X — 25 = 40; 60 — X = 16։ Մեծ թվերի գումարումը համրիչի վրա։

Տասնորդական կոտորակներ։ *Հասկացողություն տասնորդական կոտորակների մասին։ Տասնորդական կոտորակների կարդալը և գրելը։ Տասնորդական կոտորակների ձևափոխումը. (որինակ, 0,2 — 0,20)։ Տասնորդական կոտորակների մեծությունների համեմատումը։ Մետրական չափերով արտահայտված բարդ անվանական թվերի տասնորդական կոտորակների միջոցով գրելը (5 մետր, 25 սանտիմետր = 5,25 մետր) և ընդհակառակը։*

Յերկրաչափական նյութ։ *Ուղղանկյուն մակերեսի չափումը։ Տված հատակագծով և մասշտաբով ուղղանկյուն հողամասի հսկայական մեծության վորոշելը։*

Մասշտաբով և պայմանական նշաններով դիագրամմաներ կարդալ իմանալը։

ՅԵՐՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ (65 ժամ)

Ամբողջ թվեր, *1.000-ի շրջանում թվերի բազմապատկումը 2, 10. 5-ի։*

Բազմանիշ թվերի բազմապատկումը յեվ բաժանումը *(վերացական և բարդ անվանական թվերի) միլիոնի շրջանում (գրավոր)։ Բազմանիշ թվերի բազմապատկումը միանիշ թվերի վրա, մեկով սկսվող և զերոյով վերջավորված թվերի վրա։ Կլոր տասնյակների վրա, յերկանիշ թվերի վրա։*

Բազմանիշ թվերի բաժանումը միանիշ թվերի վրա, մեկով սկսվող և զերոներով վերջավորված թվերի վրա, կլոր տասնյակների վրա, յերկանիշ թվի վրա։

Թվերի անունները բազմապատկման և բաժանման ժամանակ։ Բազմապատկման ստուգումը բաժանումով և բաժանման ստուգումը բազմապատկումով։

Հետևյալ տեսակի որինակների վորոշումը. X × 7 = 105., 78 : X = 39., X : 15 = 4

Տասնորդական կոտորակներ։ *Գումարում և հանում։*

Տոկոսներ։ *Տոկոսը վորպես հարյուրերորդ մաս։ Տոկոսի նշանակելը (%) Տվյալ թվի մեկ կամ մի քանի %-ը գտնելը (յերկու գործողությամբ). որինակ, գտնել 400-ի 5%-ը։*

Յերկրաչափական նյութ։ *Յեռանկյունի, յեռանկյունների զանազան տեսակները ըստ անկյունների—ուղղանկյուն, սուրանկյուն, բութանկյուն։ Ըստ կողմերի—հավասարակողմ, հավասարասրունք, անհավասարակողմ։*

Քառակուսուց ստացած յեռանկյունիների կողմերի և անկյունների հատկությունը։ Ուղղանկյուն յեռանկյան գծագրելը. ուղղանկյուն յեռանկյան մակերեսի գտնելը։

ՉՈՐՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ (50 ժամ)

Ամբողջ թվեր։ *100-ի և 50-ի վրա բերանացի բազմապատկման յեղանակը։ Բազմապատկում և բաժանում ամբողջ թվերի (վերացական և բարդ անվանական) միլիոնի շրջանում (գրավոր)։ Բազմապատկում բազմանիշ թվերի. վորոնց կենտրոնում զերոներ կան։*

Բազմանիշ թվերի բաժանումը յեռանիշ թվերի վրա, (հեշտ դեպքեր)։ Բաժանում հապավումով։

Գործողությունների կարգը և փակագծերը,

Հասարակ կոտորակներ *Տված մասով գտնել ամբողջը (յերկու գործողությամբ). որինակ գտնել թիվը, յեթե $^3/_4$ = 30-ի։*

Տոկոսներ։ *Տոկոսը արտահայտել ամբողջի մասերով.*

100%	75%	50%	25%	10%
1	$^3/_4$	$^1/_2$	$^1/_4$	$^1/_{10}$

Ոգտվել այդ աղյուսակից խնդիրները լուծելիս։ Տված տոկոսով գտնել թիվը (յերկու գործողությամբ)։

Յերկրաչափական նյութ։ *Հողամասերի մակերեսի վորոշում նրանց ուղղանկյուններ և յեռանկյունիների բաժանելու միջոցով։*

Մասշտաբով ոգտվել իմանալ հատակագծեր և քարտեզներ կարդալիս։

Մասշտաբով ոգտվելով քարտեզի միջոցով իմանալ յերկու տեղերի մեջ յեղած հեռավորությունը։

Ծանոթություն պայմանական տոպոգրաֆիկ նշանների հետ։ Նրանց գծագրելը տետրում։

Կազմել ամենապարզ գրաֆիկներ ոդի յեղանակների փոփոխության դիտողության վերաբերյալ։ Կազմել գրաֆիկներ բույսի աճեցման դիտողության վերաբերյալ։

Խնդիրների լուծումը կատարվում է ամբողջ տարվա ընթացքում։ Ծանոթություն նաև վարժական ամենապարզ ձևերի հետ, կազմել հաշիվ, կանխահաշիվ, ծանոթություն յել ու մեկից գրերի հետ։

ՉՈՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ

ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴ (55 ժամ)

Ամբողջ թվեր։ *Բերանացի և գրավոր թվարկում միլիարդի շրջանում։ Թվային կարգեր և դասեր։ Միլիարդը վորպես հաշվի միավոր։ Մեծ թվերի ընթերցումը։*

Մեծ թվերի կրճատ գրումը հազարներով և միլիոններով։

Թվերի կլորացումը. կատարումը մեծ թվերով։

Բոլոր չորս գործողությունների կատարումը մեծ թվերով։ Բազմապատկման ժամանակի դեպքերը. գրոներ արտադրիչի ներսում և վերջում։ Բաժանման ժամանակի դեպքերը՝ զրոներ քանորդում, զրոներ բաժանելիի և բաժանարարի վերջում։

Պարզ և բարդ թվեր։ *Թվերի բաժանման հատկանիշները 2, 5, 10, 100, 25, 4, 3, 9,-ի վրա։ Թվերի պարզ արտադրիչների վերլուծելը։*

Տասնորդական կոտորակ: *Տասնորդական կոտորակի բազմապատկումը ամբողջ թվի վրա: Տասնորդական կոտորակի բաժանումը ամբողջ թվի վրա: Տասնորդական կոտորակների բազմապատկումը և բաժանումը 10, 100-ի վրա:*

Տոկոսներ: *Թվի մեկ կամ մի քանի տոկոսը գտնելը (յերկու գործողությամբ) տասնորդական կոտորակների միջոցով:*

Յերկրաչափական նյութ: *Խորանարդ. նրա յերեսների և կողերի հավասար լինելը: Խորանարդի պատրաստելը կարտոնից: Խորանարդի գծագրելը:*

Խորանարդի ծավալի չափումը:

Խորանարդ չափեր. խորանարդ մետր, խորանարդ դեցիմետր, խոր. սանտիմետր:

ՅԵՐԿՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ (55 ժամ)

Հասարակ կոտորակներ: *Կոտորակի համարիչը և հայտարարը: Կոտորակի մեծության փոփոխվելը հայտարարի և համարիչի մեծանալուց կամ փոքրանալուց: Կոտորակների ձևափոխումը (կրճատումը, տված կոտորակը արտահայտել ավելի փոքր մասերով, որինակ $2/5=6/15$): Կանոնավոր և անկանոն կոտորակ:*

Անկանոն կոտորակից ամբողջ դուրս հանելը: Խառն թիվն անկանոն կոտորակ դարձնելը:

Միևնույն հայտարարներով կամ բազմապատիկ թվեր հայտարար ունեցող կոտորակների գումարումը և հանումը: Տարբեր հայտարարներով կոտորակների գումարումը և հանումը (պարզ դեպքերը): Կոտորակների ամենափոքր ընդհանուր հայտարար գտնելը (ամենափոքր բազմապատիկը):

Հասարակ կոտորակների բազմապատկումը և բաժանումը ամբողջ թվի վրա:

Թվային ֆորմուլ (числовая формула):

Յերկրաչափական նյութ: *Ուղղանկյուն պրիզմա. պրիզմայի յերեսները և կողերը: Պրիզմայի պատրաստելը ստվարաթղթից: Պրիզմայի գծագրելը: Պրիզմայի ամբողջ մակերեսի հաշվելը: Ուղղանկյուն պրիզմայի ծավալի չափելը:*

ՅԵՐՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ (65 ժամ)

Ամբողջ թվեր: *Ինչպես է փոփոխվում գումարը, տարբերությունը, արտադրյալը, քանորդը յերբ փոփոխվում են գործողության մեջ գտնվող թվերը:*

Հասարակ յեվ տասնորդական կոտորակներ: *Ամբողջ թվի բազմապատկումը հասարակ և տասնորդական կոտորակի վրա: Թվից ամբողջ տոկոս գտնելը (տասնորդական կոտորակի վրա բազմապատկելու միջոցով):*

Ամբողջ թվի բաժանումը հասարակ և տասնորդական կոտորակի վրա: Թվի գտնելը նրա տված մասով (կոտորակի վրա բաժանելով):

Թվի գտնելը նրա տված տոկոսով:

Յերկրաչափական նյութ: *Շրջանագիծ և շրջան: Շրջանի կենտրոնը, տրամագիծը, շառավիղը: Շրջագծի յերկարության և տրամագծի ու շառավիղի մեջ յեղած հարաբերությունը: Շրջագծի բաժանելը. 2, 4, 6, 3 հավասար մասերի:*

Շրջագծի ոգնությամբ քառակուսի, կանոնավոր վեցանկյուն և յեռանկյուն գծագրելը:

Ծանոթություն տոկոսային տրանսպորտերի (փոխադրիչ) հետ: Շրջանաձև դիագրամների գծագրումը տոկոսային տրանսպորտերի ոգնությամբ:

ՉՈՐՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ (50 ժամ)

Հասարակ յեվ տասնորդական կոտորակներ: *Տասնորդական կոտորակների բազմապատկումը և բաժանումը տասնորդական կոտորակների վրա: Հասարակ կոտորակների բազմապատկումը և բաժանումը հասարակ կոտորակների վրա: (Պարզ դեպքեր):*

Հասարակ կոտորակը տասնորդական կոտորակ դարձնելը: Տասնորդական կոտորակը հասարակ կոտորակ դարձնելը: Արդյունքի կլորացումը հարյուրյերրորդական մասերում:

Գտնել՝ տված թիվը մյուս տված թվի վո՞ր մասն ու տոկոսն է կազմում:

Գործողությունների կարգը և փակագծերը:

Յերկրաչափական նյութ: *Ուղղանկյուն հողամասերի մակերեսի չափումը: Ուղղանկյուն հողամասերի պլանի գծելը: Պայմանական (տոպոգրաֆիկ) նշաններից ոգտվելը հատակագծեր գծելիս:*

Աչքի չափով ամենապարզ ռազմական պլաններ գծելը առանց ռելեֆի:

Ամբողջ տարվա ընթացքում կատարվում է խնդիրների լուծումը, բերանացի հաշիվ յեվ տարրական աշխատանքներ հաշվապահության վերաբերյալ:

ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

I. ԽՈՒՄԲ

1) ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ (10 ժամ)

(Տալ սանիտարական—առողջապահական ունակություններ)*

Մարմնի մաքրության կանոնները և հիվանդություններից պաշտպանվելը (ձեռների, վզի, գլխի, դեմքի, աչքերի, քթի, ատամների մաքրության հետևելը), գիտենալ գործածել օճառը, ջուր, խոզանակ, թաշկինակ: Ուտելու առողջապահական կանոնները՝ ուտել առանձին ամաններից, ամանների մաքրությունը. ուտելուց առաջ ձեռները լըվալ: Ինչպես պետք է նստել սեղանի առաջ աշխատելիս (մարմնի ուղիղ դիրքը):

Առողջ և հիվանդ մարդ: Կեղտոտությունը վարակիչ հիվանդությունների տարածողն է: Վարակիչ հիվանդություններ (ծաղիկ, քոս). ինչպես պաշտպանվել վարակիչ հիվանդություններից: Կրոնական ծեսերի վնասակարությունը (հաղորդվելը, սուրբերի պատկերներ համբուրելը, ձեռք համբուրելը և այլն):

Մաքրությունը դպրոցում և տանը՝ ավլել հատակը ջուր սրսկելուց հետո, դասարանի օդը մաքրել, ոտքերը մաքրել: Անկողնի, շորերի, կոշիկների մաքրության հետևել: Մաքուր օդի նշանակությունը առողջության համար: Ամառ ժամանակ արևի, ջրի և օդի ոգտագործումը առողջության ամրացման համար: Հիվանդանալու դեպքում բժշկին դիմելու անհրաժեշտությունը: Կախարդ կանանց «բժշկության» վնասակարությունը:

2. ԱՇՈՒՆ (20 ժամ—1-ին քառորդ և 2-րդ քառորդի սկիզբը): Աշնան տեսարաններ—փոփոխություններ բնության և մարդկանց աշխատանքային գործունեության մեջ: Անտառի տեսքը աշնան (եքսկուրսիա դեպի անտառ կամ պարտեզ մի պարզ որ): Տերևների գույնն աշնանը: Ամենատարածված 4—5 տեսակի ծառեր և թփեր ճանաչել: Ասեղնատերև և սաղարթավոր ծառեր: Ծանոթություն ծառերի սերմերի և պտուղների հետ՝ թխկու թռչող սերմերը, կաղիններ, ոնձենու (клен) *պտուղները և ուրիշներ, նրանց մթերել, ձմեռը ոգտակար թռչուններին կերակրելու համար:*

Աշնանային գյուղատնտեսական աշխատանքների տեսարաններ (բարդ կալսիչ մեքենաներով կալսելը խորհ. կամ կոլտնտեսությունում տրակտորով վարելը, բանջարանոցում բանջարեղենի հավաքելը):

Թռչունների չվելը, ամենատարածված չվող և ձմեռող թռչունները: Ո՞ւր են չըվում թռչունները ձմեռելու: Վայրի կենդանիների՝ ճագարի, վոզնու, դաշտային մկան ձմեռելու պատրաստությունը:

Աշնանային յեղանակի որացույց կազմել (նշաններով)՝ նշանակել անձրևային և պարզ որերը: Քամի—թույլ, ուժեղ, վոր կողմից է փչում (ցուրտ և տաք կողմից): Բընության միջից նյութեր հավաքել ձմեռնային աշխատանքների և դասարանը զարդարելու համար:

3. ՁՄԵՌ (20 ժամ—2-րդ քառորդ և 3-րդ քառորդի սկիզբը). Դիտել բնության փոփոխությունները ձմեռ ժամանակ՝ որերի կարճանալը, գիշերների յերկարելը, ձմրան ամենակարճ որը, ջրերի սառչելը, սառույցի, ձյան կազմվելը: Կազմել ձմրան յեղանակի որացույց նշաններով:

Ընտանի կենդանիները ձմեռը, նրանց ցրտից պաշտպանելը խորհ. կամ կոլտընտեսությունների տաք ախոռում (եքսկուրսիա դեպի կենդանիների բակը—ախոռը): Տնտեսության ախոռի առավելությունները համեմատած անհատ տնտեսության ախոռի հետ:

Ինչպես են անցկացնում ձմեռը վայրենի կենդանիները, որինակ—աղվեսը, գայլը, արջը, ճագարը, սկյուռը: Վորսորդական տեսարաններ թավամազ կենդանիների վրա: Ձմեռող թռչուններին կեր տալը և խնամելը (4—5 ամենատարածված ձևերը):

Տաք և ցուրտ յերկրների բնության տեսարաններ: Ցուրտ յերկրների ձյունը, սառույցը, բևեռային գիշերը, հյուսիսափայլը: Ցուրտ յերկրների բուսականությունը գաճաճ ծառեր, մամուռ: Պատմվածքներ սառցահատ «Կրասին» նավի եքսպեդիցիայի մասին: Տաք յերկրների մշտադալար բուսականությունը՝ (արմավի, կիտրոնի, նարնջի

** Սանիտարական—առողջապահական ունակությունների վերաբերյալ աշխատանքները տարվում են ամբողջ տարվա ընթացքում—*

ծառերը, թեյի թփերը)։ Ցուրտ յերկրների կենդանիները՝ (սպիտակ արջեր, հյուսիսային յեղջերուներ, բևեռային աղվես) և տաք յերկրների կենդանիները փղեր, առյուծ, փիղ)։

Ինչպես են պաշտպանվում մարդիկ ցրտից—բնակարան շինում, ինչպես և ինչից են շինում հագուստը։ Բնակարաններն ու հագուստները տաք և ցուրտ յերկրներում։

4։ ԳԱՐՈՒՆ (20 ժամ—3-րդ քառորդի վերջը և 4-րդի սկիզբը) Դիտել բնության գարնանային փոփոխությունները՝ որվա յերկարելը, արևի տաքացնելը, ձյան հալչելը, սառցահալք, գետերի վարարելը։ Ջրի աշխատանքը (ափերի վողողելը, քանդելը)։

Ավազի հատկություններին ծանոթանալը—(լավ է անցկացնում իր միջից ջուրը, չի պղտորվում ջուրը) ծանոթանալ կավի հատկություններին (կպչուն է, կարելի է զանազան ձևեր տալ, չորանալուց հետո կարծրանում է, պղտորում է ջուրը, դժվարությամբ է բաց թողնում ջուրը)։ Ավազն ու կավը-վորպես շինարարական նյութ։

Առաջին վերադարձող թռչունը։ Կենդանիները գարնանը—մազերի թափելը, վայրի կենդանիների ձագերի կյանքի մասին պատմվածքներ։ Դիտել ճյուղերի բողբոջների բացվելը դասարանում, և ծառերի բողբոջների բացվելը դրսում։ Սենյակի բույսերի խնամելը։ Դիտել սերմերի աճումը (գարի, հաճար, ոսպ)։ Գարնանային գյուղատնտեսական աշխատանքները դաշտում, բանջարանոցում և պարտեզում (եքսկուրսիա դեպի կոլտնտեսության, խորհտնտեսության կամ բանվորական բանջարանոցը)։ Յեղանակի որացույց (գարնան ալբոմ)։ Ծանոթանալ հորիզոնի չորս կողմերին ըստ արևի։

Բույսերի զարգացման վերաբերմամբ դիտողություններ կատարել դպրոցական հողամասում ցանած բույսերի վրա՝ ծիլերի, ծաղիկների, պտուղների յերևան գալը (բույսի զարգացման հիմնական մոմենտներն արտահայտել պարզ նկարներով, չորացնելով)։

5. ԱՄԱՌ (15 ժամ 4-րդ քառորդ) Ամառվա յեղանակների դիտողություն և ամառային բնության որացույց կազմելը։ Արևի բարձր դիրքը յերկնքում, կարճ շուք։ Դիտել ջրում ապրող կենդանիների կյանքը՝ ձուկ, խեցգետին, ջրային խխունջ, միջատներ (եքսկուրսիա դեպի ջրամբարները)։ Ամառնային բուսականության բազմազանությունը (եքսկուրսիաներ—շրջագայություններ)։ Ինչպիսի բույսեր են հանդիպում անտառում (ծառեր, թփեր, հատապտուղ բույսեր, սունկեր), ճահիճներում (ջրային բույսեր, մամուռ և այլն)։ Տարբեր տեղերում (անտառում, մարգագետնում, ճահճում) տարբեր բույսեր են աճում։ Տեսարաններ գյուղատնտեսական ամառնային աշխատանքների խորհ. և կոլտնտեսություններում։ (Մեքենայով խորհարք, ցանքսերի խնամք, պայքար մոլախոտերի դեմ)։

Բանջարանոցային կարևոր մոլախոտերը (2-4 տեսակ)։ Բանջարանոցի և պարտեզի վնասատուները՝ մկներ, միջատներ (սպիտակ-թիթեռներ, հողի լու)։

Շարունակել դիտողությունները բույսերի զարգացման վերաբերյալ։ Բույսերի գլխավոր մասերը՝ արմատ, տերև, ցողուն, ծաղիկ պտուղ։

1 ԽՄԲԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

(10 ժամ)

Պարզ կուլտուրայի բանջարեղենների և ծաղկաբույսերի մշակություն դպրոցական հողամասում։ Ոգնել բարձր խմբերի աշակերտներին թմբեր և մարգեր պատրաստելու աշխատանքին (մաքրել հողը արմատներից, մոլախոտերից, աշխատանք փոցխերով)։ Շարքերով ցանել լոբի, բողկ, գետնախնձոր (կարտոֆիլ) և սոխ։ Ցանել և տնկել ծաղկաբույսեր (մեխակ, թավշայի և այլն), խնամել տնկած բույսերը։ Տեղափոխել անտառից և մարգագետնից գեղեցիկ ծաղիկներ ունեցող բույսեր։ Խմբի հողամասի բերքի հավաք։ Ծաղկաբույսերի սերմի հավաք։

II ԽՈՒՄԲ

(10 ժամ)

1. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

(Ամրացնել սանիտարական առողջապահական ունակությունները*

Ոդի, բնակարանի և մարմնի մաքրության նշանակությունը առողջության համար։ Բաղնիս և հանրային լվացքատներ։

*Սանիտարական-առողջապահական ունակությունների ամրացման աշխատանքը տարվում է ամբողջ տարվա ընթացքում։

Բուսական և կենդանական սննդանյութեր՝ բանջարեղենների և պտուղների նշանակությունը սնունդի մեջ։ Խմելու ջուր, մաքուր և պղտոր ջուր, պղտոր ջուրը դարձնել պարզ, զաման միջոցով և նրան հանգիստ դրությամբ թողնելով (փորձեր)։ Ինչու համար խմելու ջուրը պետք է լինի յեռացրած։ Հորերն և աղբյուրներն մաքուր պահելու անհրաժեշտությունը։

Վորտեղ են գտնվում մարդու մեջ թոքերը, սիրտը, ստամոքսը, աղիքները։

Հանրային սննդառություն՝ ճաշարաններ, ֆաբրիկա-խոհանոցներ, հացի գործարաններ, իրա ժամանակին և կանոնավոր սնվելու անհրաժեշտությունը։ Ծոմ և պաս պահելու վնասները։

Վարակիչ հիվանդությունների յերևան գալու դեպքում առաջին միջոցառումները՝ հիվանդության մասին իմաց տալ դպրոցին և հիվանդանոցին, հարաբերություն չունենալ այն ընտանիքների հետ, վորտեղ վարակիչ հիվանդներ կան։ Ոգնություն թեթև վիրավորվելու դեպքում, մատը փաչով ծակելու կամ հարվածից ջարդվածքներ ստաթև վիրավորվելիս)։—Գաղափար բժշկի, հիվանդանոնալու դեպքում (վերքը կապել թեթև վիրավորվելիս)։—Գաղափար բժշկի, հիվանդանոցի, դիսպանսերի աշխատանքի մասին։

2. ԲԱՆՋԱՐԱՆՈՑԸ, ՊԱՐՏԵԶԸ, ԱՆՏԱՌՆ ԱՇՆԱՆԸ.

(20 ժամ 1-ին քառորդ և 2-րդ քառորդի սկիզբը)

Ինչ են տալիս զանազան բանջարեղենները՝ կաղամբը—հյութալի տերևներ, գա
զարը—արմատներ, վարունգն ու պամիդորը, սիսեռն ու լոբին—սերմեր (եքսկուրսիա)։
Բանջարանոցային բույսերի վնասատուներն աշնանը, (սպիտակ թիթեռների
թրթուրները, կաղամբի վոջիլ)։ Վորտեղ են ձմեռում բանջարանոցների վնասատուները՝
որինակ թիթեռի հարսնյակները կաղամբի արմատների տակ հողի մեջ, կաղամբի թի-
թեռի հարսնյակները—ցանկապատի վրա։
Ինչպիսի պտղատու ծառեր և հատապտուղային թփեր են բունում պարտեզում,
տարբերել նրանց ըստ ճյուղերի և բնի կազմության (եքսկուրսիա դեպի պարտեզ)։
Պարտեզի վնասատուներն աշնանը՝ չոր տերևներ թրթուրներով, ողակավոր մետաք-
սաթել թրթուրի ձվերը, ծառի կեղևի տակ ձմեռող վնասատուներ։ Ինչպես պայքարել
այս վնասատուների դեմ։
Եքսկուրսիա դեպի անտառ աշնանը։ Ավելի լայն ծանոթություն ձեռք բերել
ծառերի և թփերի գլխավոր տեսակների մասին։
Խոտաբույսերի ձմեռելը ստորյերկրյա մասերի միջոցով (դիտողություններ եքս-
կուրսիայում)։ Սերմերի և պտուղների տարածվելը, թեվավորներ, թռչողներ, չորերին
կպչողներ։ Մեր անտառների ուտելի և թունավոր հատապտուղներն ու սունկերը (4-5
տեսակ), հատապտուղների և սունկերի մթերում։ Դպրոցի կենդանի անկյան համար
նյութեր հավաքել։
Անտառային աշխատանքների տեսարաններ ձմեռ ժամանակ. փայտի, ատաղձի
մթերում։ Ինչ է տալիս անտառը խորհրդային տնտեսությանը.—շինանյութ, վառելա-
նյութ, թուղթ պատրաստելու նյութ։ Հյուսիսային անտառների անտառները (տայ-
գա). անտառային հրդեհներ և պայքար նրանց դեմ։ Տաք յերկրների անտառները՝
հնդկաընկուզենու (կակոս) և փյունիկյան արմավենիներ, բանան, բամբուկ, լիաններ,
ֆիկուս (կաուչուկ սատնալը)։ Տաք յերկրների բուսականությունն ավելի բազմազան
է քան հյուսիսային յերկրները։

3. ԸՆՏԱՆԻ ՅԵՎ ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ՅԵՎ ԹՌՉՈՒՆՆԵՐ

(20 ժամ—2-րդ քառորդ և 3-րդի սկիզբը)

Մեր յերկրի ընտանի և վայրի կենդանիները։ Կատու և շուն՝ դիտողության ա-
ռարկա դարձնել նրանց սովորությունները, նրանց և նրանց ազգակից վայրի գիշա-
տիչների (գայլ, վագր, լուսան) միջև յեղած արտաքին նմանություններն ու տարբե-
րությունները։ Շները վորպես փոխադրության միջոց հյուսիսում։
Խոտակեր կենդանիներ—կով. ձի։ Ձիու վայրի ազգակիցները—վայրի ձի և զեբր։
Ուղտ և եշ։ Խոզ—նրա ամենակերությունը և բազմածնությունը, խոզի վայրի ազգա-
կիցը—վարազ։ Ճագարը վորպես կրծող, նրա բազմածնությունը։ Գիշատիչների խո-
տակերերի, կրծողների ատամները, նրանց զանազանությունները։ Ինչպես է մարդը
ընտելացրել տնային կենդանիներին, նրանցից ստացած ոգուտը։ Խորհտնտեսությունն-

ների և կոլտնտեսությունների խոշոր անասնապահական անտեսությունների շինարարության տեսարաններ:

Պատմվածքներ տաք յերկրների վայրի կենդանիների մասին՝ օրինակ—ռնգեղջյուրի, գետաձիու, ընձուղտի, կապիկների, կոկորդիլոսի, խոշոր օձերի մասին:

Ընտանի թռչուններ՝ հավեր (վորպես օրինակ ցամաքի վրա ապրող թռչունների): Բադեր, սագեր (վորպես լողացող թռչունների): Ընտանի թռչունների տված օգուտը (ձու, միս, փետուր): Խորհտնտեսություններում և կոլտնտեսություններում մեծ թռչնաբուծական տնտեսությունների շինարարությունը:

Ինչպես են ապրում վայրի թռչունները: Դիտել թռչունների կյանքը բնակարանների մոտ՝ աղավնի, ագռավ, ճնճղուկ: Թռչունները անտառում, դիտողություններ էքսկուրսիայի ժամանակ փայտփոր, յերաժշտահավ, խածկտիկ (снегир): Ցերեկվա գիշատիչներ՝ բու, բուեճ: Ճահճային թռչուններ՝ արագիլ, կռունկ: Անապատների թռչուններ—ջայլամ, նրանց ընտելացնելը: Տաք յերկրների անտառների թռչուններ—թութակ, տրոքիլոս: Զանազան թռչունների կտուցների և ճիրանների կազմությունը կյանքի պայմանների հետ կապված: Օգտակար թռչուններին գրավելը և խնամելը:

4. ՏԱՔՈՒԹՅՈՒՆ, ՕԴ ՅԵՎ ՋՈՒՐ

(15 ժամ—3-րդ քառորդ)

Տաքության նշանակությունը մարդու կյանքում—բնակարանների տաքացնելը, կերակուր յեփելը, տաքության օգտագործումը արդյունաբերության մեջ:

Զանազան նյութեր տարբեր չափով են հաղորդում տաքություն (փորձեր): Տաքությունից պինդ մարմինների լայնանալը (փորձեր): Տները շինում են այնպիսի նյութերից, վորոնք տաքության վատ հաղորդիչ են:

Օդը. նրա առաձգականությունը (օդային պիստոլետ), տաքությունից լայնանալը (փորձ-խցանով լավ փակված շիշը տաքացնել): Տաք և սառն օդի հոսանքը սենյակում: Քամին վորպես օդի հոսանք: Քամու մասին դիտողություններ կատարելու գործիք—հողմացույցը և նրա կազմությունը:

Քամու աշխատանքը բնության մեջ՝ փոթորիկ, ավազաբեր հողմեր, պայքար նրանց դեմ: Քամու ուժի օգտագործումը—հողմաղաց, հողմաշարժիչներ:

Ջուրը, նրա յերեք վիճակները. ջրի լայնանալը տաքացնելիս և սառեցնելիս (փորձ—ջուր սառեցնել շշի մեջ): Գաղափար ջերմաչափի մասին և գիտենալ նրանով օգտվել: Վորտեղից և ինչ ձևով է ջուրը թափվում յերկրի վրա: Ընդհանուր հասկացողություն անձրևի, ձյունի, ամպի—մառախուղի, ցողի, յեղյամի կազմվելու մասին (պարզ փորձեր կատարել՝ ջուր գոլորշացնել և նրա գոլորշիները սառեցնել պաղ առարկաների վրա): Ձյան շերտը վորպես աշնանացանքերը սառելուց պաշտպանող, (շիշով ջուրը ձյան տակ և ձյան վրա սառեցնել): Ջրի ուժի օգտագործումը մարդու կողմից: Ջրաղաց, «սպիտակ ածուխ»-ի օգտագործումը, Դնեպրոստրոյ:

5. ԳԱՐՈՒՆ ՅԵՎ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

(20 ժամ—4-րդ քառորդ)

Դիտել գարնան յեղանակի հիմնական յերևույթները (տաքությունը, քամու ուղղությունը, անձրևային տեղումները), բնության յերևույթների և գյուղատնտեսական աշխարհի հաջորդական փոփոխությունները:

Վաղ գարուն: Առաջին նշանները, սերմանաքաղ, ագռավների դարձը: Յեղանակի տաքանալը, առաջին միջատների յերևալը (ճանճ, թիթեռ), վորտեղից նրանք յերևան յեկան: Թռչունների վերադարձը, սարյակ, կռունկ: Գետերի վարարելը ձյան ծածկոցի անհետանալը, դետ յեղերքների քանդվելը, տիղմի կազմվելը: Ջրերի առաջանալը, ինչպես պայքարել դրա դեմ՝ յեղերքներն ամրացնել, փայտերով բռնեցնել: Հող (վերին շերտ), ավազի և կավի շերտեր, ինչքան խորն են թափանցում բույսերի արմատները: Ջրի շրջանառությունը բնության մեջ՝ անձրև և ձյուն, ջրի թափանցելը հողի տակ—աղբյուրներ, ակեր, վորտեղից է առաջանում հորերում ջուրը, առվակներ, գետեր, ծով, ջրի գոլորշիանալը և այլն:

Տաքության ավելանալը, խոտերի աճելը, կենդանիներին առաջին անգամ արածելու հանելը: Առաջին գարնանային ծաղիկները: Միջատների շատանալը, միջատակեր թռչունների վերադարձը, մողեսի յերևալը, օձերի բներից դուրս գալը, գորտերի ձու ածելը, շերեփուկների զարգացումը: Վորտեղից են յերևան գալիս մայիսյան բզեզ-

ները: Մոծակի թրթուրի զարգանալը, մոծակների դուրս գալը ճահիճներից (դիտողություններ բնության մեջ և կենդանի անկյունում): Թփերի և ծառերի ծաղկելը, փեթակների դուրս բերելը, դաշտը հերկելն ու վաղ գարնանացանը, բանջարանոցներում բանջարեղեններ ցանելը: Պտղատու ծառերի բողբոջների ուռչելը, գարնանային աշխատանքներ պարտեզում: Առաջին վորոտը, անտառների կանաչելը: Տաքության ավելանալը: Պտղատու ծառերի ծաղկելը (դիտողություններ պարտեզում): Ուշ գարնանացանը դաշտում և բանջարանոցում. ինչու համար բույսերից վոմանց ցանում են ավելի շուտ, մյուսներն ուշ: Ինչ մեքենաներով են կատարում գարնանային գյուղատնտեսական աշխատանքները (դիտել աշխատող մեքենաները):

Գարնանային յեղանակի, բնության զարգացման և գյուղատնտեսական աշխատանքների միջև կապը:

Յեղանակի ազդեցությունը (անձրևի, կարկուտի, յերաշտի, ցրտահարության) գյուղատնտեսական բույսերի զարգացման վրա: Պայքար յերաշտի և ցրտահարության դեմ 1):

Պարզ փորձեր կատարել դպրոցական հողամասում պարզելու համար բույսերը խնամելու նշանակությունը (քաղհանի, ջրելու նշանակությունը և այլն):

ՅԵՐԿՐՈՐԴ ԽՄԲԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ (15 ժամ)

Բանջարանոցային յեվ ծաղկանոցային աշխատանքներ դպրոցի հողամասում:-Բանջարանոցային և ծաղկանոցային տունկեր պատրաստել արկղների և ածուների մեջ: Պատրաստել դպրոցի հողամասը ցանքսի համար. հողամասը բաժանել մասերի, թումբ շինել, պարարտացնել աղբով և մոխիրով:

Բանջարանոցային բույսեր ցանել և ածուի տունկեր տնկել: Բույսերին խնամել՝ քաղհան, փխրացնել, ծիլերը նոսրացնել, ջրել, սխտորի տունկի մոտը փայտեր տնկել: Պայքար վնասատուների դեմ՝ վոչնչացնել թրթուրները, մոխիր ցանել հողի լուերից պաշտպանելու համար:

Բերքի հավաքումը:

Սովորել ճիշտ գործածել բանջարանոցային ձեռքի գործիքները, վորոնք հարմարեցված պետք է լինեն մանուկների հասակին (բահը, փոցխը, ցնցուղ, բրիչը):

Թռչնաբուծություն.- խնամել թռչուններին և պահել նրանց ճիշտ կանոններով դպրոցի թռչնանոցում և կամ կոլտնտեսությունում. բնակարանի մաքրելը և կեր տալը: Ինչպես պետք է շինված լինի և պահվի թռչուններին կեր տալու և ջրի ամանը, վորպեսզի այնտեղ լինի միշտ մաքուր կուտ և թարմ ջուր: Թխսան հավի և ճուտիկների խնամքը:

ՅԵՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ

1. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ (10 ժամ. 1 քառորդ). Մարդու հիվանդությունները՝ վարակիչ և վոչ վարակիչ հիվանդություններ: Հիվանդություն առաջացնող մանրէների (միկրոբների) մասին գաղափար տալ—հասարակ աչքով անտեսանելի, միայն միկրոսկոպի միջոցով տեսանելի կենդանի էյակներ: Ինչպես կարելի յե վարակվել՝ շփման միջոցով (դիֆթերիա, քութեշ), կերակրի միջոցով (վորովայնի տիֆ, խոլերա, արյունային փորհարինք (դիզենտերիա), ներշնչած օդի միջոցով (թոքախտ), մանրէներն արյան մեջ մտնելու դեպքում (ջերմ—մալարիա, բծավոր տիֆ): Ճանճերը, մոծակները և վոջիլները, վորպես վարակիչ հիվանդություններ տարածողներ (մոծակ—ջերմի տարածող, ճանճերը-դիզենտերիայի, վորովայնի տիֆի, խոլերայի տարածողներ, վոջիլը՝ բծավոր տիֆ տարածող): Պայքար հիվանդություններ տարածող միջատների դեմ: Ինչպես պգուշանալ վարակվելուց: Կրոնական հավատալիքների և նախապաշարումների վնասակարությունը հիվանդությունների առաջացման հետ կապված:

Արևի, ջրի և օդի նշանակությունն առողջության ամրացման և հիվանդություններն դեմ պայքարելու տեսակետից: Օրգանիզմը դիմացկուն դարձնել (закаливание).

1) Գարնանային էքսկուրսիաների ժամանակ յերեխաները յուրացնում են աշխարհագրական տարրական հասկացողություններ (բլուր, փոս, գետափ, գետի ակունք, վտակ, աջ և ձախ յեղերքներ վորոշում են հորիզոնների կողմերը, ծանոթանում են նաև տեղի հատակագծին:

սննդի և քնի կանոնավորումը։ Ցիկլուլատուրա, կազմակերպված աշխատանք։ Առաջին օգնություն թեթև վիրավորվելու և գազերով թունավորվելու դեպքում։ Ինչպես օգնել խեղդվողին։

2. ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐ—ՀԱՆՔԵՐ, ՄԵՏԱՂՆԵՐ ՅԵՎ ՀԱՆՔԱՅԻՆ ՔԱՐԵՐ

(30 ժամ—1-ին և 2-րդ քառորդ)

Տվյալ ռայոնի օգտակար հանածոները։ Նրանց ստանալը և օգտագործումը։

Քարեր, վորոնք օգտագործվում են գլխավորապես շինարարական նպատակների համար՝ գրանիտ, կրաքար, ավազաքար։ Համեմատելով ծանոթանալ նրանց արտաքին տեսքին (գույն, շերտավորումները, հատիկները)։ Նրանց հատկությունները, կարծրությունը, ինչ է տեղի ունենում, յերբ մի կաթիլ թթու յենք կաթեցնում (փորձ)։

Ինչպես են այրում կրաքարը կիր ստանալու համար՝ գաղափար այրած և հանգած կրի մասին և նրանց գործածությունը։ Կրաքարի զանազան տեսակներից ցեմենտ պատրաստելը։

Ավազաքարը վորպես նյութ աղալու և դանակ սրելու քար պատրաստելու համար։ Աղ։ Աղի բյուրեղների կազմվելը (դիտողություններ աղի հագեցած լուծույթից բյուրեղներ ստանալու վերաբերմամբ)։ Ծովից, աղի լճերից և աղբյուրներից աղ ստանալը։ Աղի հանքերի մշակումը։ Աղի անհրաժեշտությունը մարդու և կենդանիների կյանքի համար։

Մետաղներ՝ յերկաթ, պղինձ, անագ, կապար, ցինկ, ալյումին, ազնիվ մետաղներ՝ վոսկի, արծաթ, պլատին։ Համեմատելով ծանոթանալ մետաղների արտաքին տեսքին՝ գույնը փայլը։

Կարծր մետաղներ՝ յերկաթ, պղինձ և փափուկ մետաղներ՝ կապար, անագ։ դժվարահալ՝ (յերկաթ, պղինձ) և դյուրահալ՝ (կապար, անագ), ծանր (յերկաթ), և թեթև (ալյումինիում) մետաղներ։ Խառնուրդ մետաղների որինակներ՝ անագապղինձ, լատուն և ուրիշներ։

Մետաղների կրած փոփոխությունները օդի և կրի ներգործությունից՝ յերկաթի ժանգոտելը, պղնձի թունավոր կանաչ ժանգը, կապարի և ցինկի «ժանգը»։ Արծաթի և վոսկու անփոփոխ մնալը օդի և ջրի ազդեցությունից։ Վոսկին ու արծաթը բնության մեջ—շերտեր, բնական կտորներով և փոշիաձև, նրանց ստանալը։ Հանքերից մետաղ ստանալը։ Հանքերի որինակներ՝ յերկաթաքար, պղնձաքար, կապարաքար (ծանոթանալ որինակներին)։ Տեսարաններ հանքերի մշակույթի մասին ԽՍՀՄ-ում։ Հանքահորեր, նրանց կառուցվածքը և մեքենայացումը։ Հանածոների հալեցնելը։ Հասկացողություն դոմնյան հալոցային վառարանների կազմության մասին։

Յերկաթը և նրա տեսակները՝ թուջ, պողպատ. Նրանց տարբերությունն իրարից և գործածությունը արդյունաբերության մեջ։ Մետաղի արդյունաբերության հսկաները՝ Մագնիտոգորսկ և Կուզբաս։ Մետաղների նշանակությունը ԽՍՀՄ-ի ինդուստրացման մեջ։ Մեքենագործական հսկաները՝ Ստալինգրադի տրակտորի գործարանը և Ռոստովի գյուղատնտեսական մեքենաների գործարանը։

3. ԲՈՒՅՍԵՐԻ ԿՅԱՆՔԸ (50 ժամ—3 րդ և 4-րդ քառորդ)։

Դաշտային, բանջարանոցային բույսերի և մոլախոտերի սերմերը (տեսնել, համեմատել և կազմել հավաքածուներ)։ Սերմերի կազմությունը՝ սերմի բլթակներ և սաղմը։ Սերմի աճման պայմանները՝ տաքություն, օդ, խոնավություն. (փորձեր-զանազան պայմաններում սերմեր աճեցնել)։ Սերմի կրած փոփոխություններն աճելիս (դիտողություններ)։ Սերմերի աճողության ու կեղտոտության աստիճանը վորոշել (գործնական աշխատանք)։ Սերմերի զտման և ընտրության նշանակությունը մոլախոտերի սերմերը հեռացնելու և բերքը բարձրացնելու գործում.-Ինչու համար են կատարում սերմերի ախտահանումը։ Սերմերի ազնիվ տեսակների նշանակությունը բերքի բարձրացման գործում։ Նախապաշարումներ ցանքսի հետ կապված—նրանց վնասակարությունը (որինակներ տեղական կյանքից վերցրած)։

Ինչ է վերցնում բույսը հողից արմատների միջոցով՝ աղեր և ջուր։ Աղերի ներկայությունը հողի ջրերի մեջ (հողի ջրերի գոլորշիացման փորձ)։ Հողի պարզ տարրալուծումը, հումուսի այրումը, ավազի և կավի մաքրվելը։ Վոր հողն է ավելի լավ բաց թողնում ջուրը (ավազահողի և կավահողի վերաբերմամբ փորձ)։ Հող և յենթահող. դիտել հողի շերտերը եկսկուրսիայի ժամանակ։ Հողը լավացնել մշակելով և հանքային պարարտանյութեր ավելացնելով (պարզ փորձեր կատարել հողի պարարտացման վերաբերյալ)։

Պարարտանյութերի հանքային շերտերը ԽՍՀՄ-ում. տեսարաններ նրանց մշակման վերաբերյալ (խիբինի և սոլիկամսկի հանքեր)։-

Լույսի նշանակությունը բույսերի կյանքում, առանց լույսի բույսերը չեն կանաչում, չեն մեծանում և չորանում-մեռնում են (փորձեր-մթության մեջ՝ բույսեր աճեցնել)։

Ցողունի նշանակությունը՝ ցողունի միջով փոխադրվում են ջուրը և սննդանյութերը։ Ցողունի կազմությունը՝ կեղև, լուբ, փայտանյութ (դիտել)։ Տարեկան օղակները բունի կտրվածքի վրա, օղակների միջոցով վորոշել ծառի տարիքը։ Հյութերի հոսանքը ծառի մեջ։ Բողբոջը, նրա կազմությունը. դիտել, թե բողբոջից ինչպես է ճյուղ զարգանում։

Բույսերի ծաղկելը և պտղատվությունը։ Ծաղկի կազմությունը՝ ծաղկի կոկոնը, առէջները, փոշանոթը (դիտել խոշոր ծաղիկների վրա)։ Ինչպես են փոխադրում միջատները ծաղիկների բեղմնափոշին, ինչպես են բեղմնավորում մեղուները պտղատու ծառերի ծաղիկները։ Սերմը զարգանում է բեղմնավորված ծաղիկներից։ Բույսեր, վորոնք բոլորովին չեն ծաղկում՝ մամուռներ, պտերներ, սունկեր։ Բույսերի բազմացումն առանց սերմերի՝ կարտոֆիլը՝ «աչքերով» ուռին, հաղարջենին՝ (ճյուղերով) յելակը՝ (բեխերով) մոլախոտերը՝ (արմատներով)։

Փորձեր և դիտողություններ բույսերի զարգացման վերաբերյալ դպրոցի հողամասում և կոլտնտեսություններում։ Սովորեցնել փորձերի ժամանակ դիտել, հաշվառման յենթարկել արդյունքները և ցույց տալ դիագրամներով ու գրաֆիկներով։

Ծանոթություն զանազան կուլտուրական բույսերի հետ՝ հացահատիկային, տեխնիկական (վուշ, կանեփ, բամբակ, շաքարի ճակնդեղ, արևածաղիկ), թիթեռնածաղկային բույսեր՝ (լոբի, սոյա)։ Թիթեռնածաղկային բույսերի մշակման նշանակությունը հողը լավացնելու համար։ Ցանքափոխության մասին հասկացողություն։ Նոր բույսերի գյուտերը և մշակումը, կաուչուկաբեր խորհրդային բույսեր։ Կուլտուրական բույսերի մշակման (մանավանդ նոր բույսերի) փորձեր դպրոցի հողամասում։

Խորհ. և կոլտնտեսությունների բերքի բարձրացման հիմնական ուղիների մասին գաղափար տալ. աշխատանքի ուղիղ կազմակերպում, մեքենաների և քիմիայի գործադրում, կիրառել կյանքի մեջ գյուղատնտեսական գիտության նվաճումները։ Խորհ. և կոլտնտեսությունների հաջողությունները տեխնիկական բույսերի և հացահատիկների մշակման գործում։

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ (20 ժամ)

Կազմել ծրագիր դպրոցական հողամասի աշխատանքների վերաբերյալ։ Մանուկների հասակին հարմար աշխատանքներ ջերմոցում։

Բանջարանոցային բարդ խնամք պահանջող բույսերի մշակումը, որինակ՝ պամիդոր, ծաղկակաղամբ։ Բանջարանոցային բույսերի սերմեր հանելը, արմատապտուղների կաղամբի, պամիդորի։

Բանջարանոցային սերմացուների ընտրությունը։

Դպրոցական հողամասում կազմել հատապտուղանոց՝ բազմացնել յելակը ճյուղերը թաղելու միջոցով, հաղարջենին-վոստերը տնկելու միջոցով, մորենին արմատների տեղափոխման միջոցով։ Հատապտուղանոցը խնամել։ Մասնակցել կոլտնտեսության նման աշխատանքներին։

Մասնակցել գյուղատնտեսական մեքենաների խնամքին։ Ծանոթանալ գյուղատնտեսական գործիքների և մեքենաների ընդհանուր կառուցվածքին և հիմնական մասերին։ (գութան, շարքացան, հնձիչ, կալսիչ)։ Ծանոթանալ կոմբայնի ընդհանուր կազմությանը։

Բացի այդ, շարունակվում են թռչնաբուծական աշխատանքները, վորոնք սկսվել եյին յերկրորդ խմբում (խնամել հավերին, կուտ տալ, հաշվել հավերի ածանությունը). վորտեղ հնարավոր է, զբաղվել ճագարաբուծությամբ։

ՉՈՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ

1. ՔԱՐԱԾՈՒԽ, ՆԱՎԹ, ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (40 ժամ—1-ին քառորդ)

Շարժիչ ուժերի աղբյուրները՝ քամի, ջուր, վառելանյութ։ Կապույտ ածուխը (քամի) և սպիտակ ածուխը (ջուր), վորպես եներգիայի եժան աղբյուրներ։ Տեսարաններ հսկա հիդրոկայանի Դնեպրոստրոյի շինությունից։

Վառելանյութի տեսակները՝ տորֆ, ածուխ, նավթ: Տորֆ և նրա առաջանալը բուսական մնացորդների կուտակումը ճահճում: Տորֆային ճահիճներ, նրանց բուսականությունը (էքսկուրսիա դեպի տորֆային ճահիճ): Տորֆի մշակությունը և նրա նշանակությունը սոցիալիստական տնտեսության մեջ: Տորֆի օգտագործումն էլեկտրականություն ստանալու համար:

Քարածուխ.—Ծանոթանալ քարածուխի զանազան տեսակի օրինակներին և համեմատել նրանց փայտածուխի և տորֆի հետ գույնը, խտությունը, վառվելը, բուսական մնացորդների տեսքը: Բույսերի ածխացումը, յերբ վառում ենք նրանց անբավարար օդի մեջ (ինչպես են ստանում փայտածուխը): Դարեր առաջ գոյություն ունեցող անտառների բուսականությունից քարածուխ առաջանալը: Քարածուխի մշակությունը, հանքահորերը և քարածուխի մշակման մեքենայացումը: Քարածուխի արդյունաբերության դերը սոցիալիստական շինարարության մեջ: Քարածուխի արդյունաբերության կենտրոնները՝ Դոնբաս և Կուզբաս:

Նավթը—հեղուկ վառելանյութ: Տեսարաններ նավթի արտադրությունից. նավթատար խողովակներ: Նավթից ստացված զանազան նյութերը և նրանց օգտագործումը արդյունաբերության մեջ (բենզին, կերոսին, յուղեր և այլն):

Տարբեր վառելանյութերի դերը զանազան շարժիչ մեքենաների աշխատանքներում: Հեղուկ վառելանյութի ջրային գոլորշին և գազերը, նրանց հատկանիշները՝ լայնանալն ու առաձգականությունը (փորձ—ջուր յեռացնել փակ ամանում): Գոլորշու և գազերի լայնանալու և առաձգականության օգտագործումը շարժիչ մեքենաների մեջ՝ այրելու ժամանակ գոլորշու և գազերի լայնանալը շարժման մեջ է դնում մխոցը: Գաղափար շոգեմեքենայի և շոգեկառքի կազմության մասին (տես պոլիտեխնիկական աշխատանքի ծրագրում): Ներքին այրման շարժիչների կազմության մասին գաղափար տալ (տրակտորի կազմության և աշխատանքի մասին տես պոլիտեխնիկական աշխատանքի ծրագրում), թեթև շարժիչների գործածությունը սավառնակների մեջ: Յերբ և ով է հնարել շոգեմեքենան: Առաջին շոգեկառքը և ներկայի գերազանց կարողություն ունեցող շոգեկառքերը: Տրանսպորտի և օդանավերի դերը ժողովրդական տնտեսության և յերկրի պաշտպանության գործում: Գաղափար օդային հարձակման և պաշտպանության մասին:

Էլեկտրականություն.—Մագնիս և նրա հատկությունը (փորձեր մագնիսով): Կողմնացույցի կազմությունը: Շփման միջոցով էլեկտրական կայծեր ստանալը (փորձ): Կայծակ և ամպի դղրդը էլեկտրական յերևույթ. կայծակի և ամպի վորոտի հետ կապված կրոնական հավատալիքների անմտությունը:

Շանթարգելի կազմությունը:

Ելեմենտների կազմության հետ ծանոթանալ, բատարեայի մեջ ելեմենտների միանալը: Էլեկտրականության հաղորդիչները: Մեկուսացնողներ: Ծանոթություն դինամոմեքենայի կազմության հետ, նրան զանազան ձևերով շարժման մեջ դնելը (ջրով, քամով, շարժիչներով): Տարրական ծանոթություն էլեկտրական լուսավորության կազմության մասին՝ էլեկտրական հոսանքի աղբյուրը, հաղորդիչ, զատիչ, միացուցիչ (выключатель), լամպ (փորձ լամպով և գրպանի լամպի բատարեայով): Տարրական ծանոթություն էլեկտրական զանգի կազմության մասին: Էլեկտրական հոսանքի նշանակությունը հաղորդակցության համար (հեռագիր, հեռախոս, ռադիո):

Էլեկտրականությունը շատ ու բազմազան նպատակների համար օգտագործվում է արդյունաբերության, գյուղատնտեսության, յերկրի պաշտպանության մեջ և կենցաղում (օրինակներ): Էլեկտրականությունը բարձր տեխնիկայի և սոցիալիստական շինարարության հիմքն է: ԽՍՀՄ-ի էլեկտրիֆիկացիան:

2. ԻՆՉՊԵՍ Է ԿԱԶՄՎԱԾ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ Է ԱՇԽԱՏՈՒՄ ՄԱՐԴՈՒ ՅԵՎ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՄԱՐՄԻՆԸ (50 ժամ—2-րդ քառորդ և 3-րդի սկիզբը)

Մարդու և կենդանիների արտաքին տեսքի համեմատությունը: Մարմնի գլխավոր մասերը և մաշկը, մազերը (կենդանիների բուրդը): Դիտողություններ սեփական մարմնի մկանների աշխատանքի վերաբերյալ: Մկանների օգնությամբ շարժման մեջ են դրվում մարդու և կենդանիների մարմնի մասերը:

Կմախքի հիմնական մասերը՝ վողնաշարը և գանգը, կրծքի վանդակը, վերջավորությունները (սեփական մարմնի վրա շոշափել վոսկորները): Ինչից են կազմված վոսկորները՝

այրվող և չայրվող նյութեր (վոսկորն այրելու փորձ): Կմախքի դերը՝ մկաններին հենարան և ներքին գործարաններին՝ պաշտպան—պահարան: Վողնաշարի ծռվելը աշխատանքի ժամանակ մարմնի սխալ դիրքից, նախազգուշացման միջոցներ:

Ներքին գործարաններ՝ վողնուղեղի և գանգուղեղի տեղը և արտաքին տեսքը՝ սիրտը, թոքերը, ստամոքսը և աղիքները, լյարդը, յերիկամները և միզափամփուշտը (դասարանում անդամահատել ճագար, գորտ կամ ուրիշ մանր կենդանիներ):

Կերակրի ճանապարհը մարդու մարմնի մեջ՝ կերակրի մանրանալը բերնի մեջ, նրա կրած փոփոխությունները ստամոքսում, ներծծումն աղիքների մեջ: Սննդի նշանակությունն աշխատանքի համար, սնունդը կանոնավոր ընդունելու անհրաժեշտությունը:

Սրտի աշխատանքը և արյան նշանակությունը:

Մարմնի բոլոր մասերին սնունդ և թթվածին մատակարարել: Ալկոհոլի վնասը. նա քայքայում է առողջությունը, պակասեցնում է աշխատանքի արտադրողականությունը. պայքար ալկոհոլի դեմ:

Շնչառություն. Թոքերը: Օդի բաղադրությունը՝ թթվածին, բորակածին և ածխաթթու գազ: Թթվածնի հատկությունը՝ նպաստել այրմանը (փորձ): Թթվածնի նշանակությունը մարդու և կենդանիների շնչառության համար: Ածխաթթու գազի հատկությունը. օդից ծանր է, չի նպաստում այրման, պղտորում է կրաջուրը (փորձ): Ածխաթթու գազի արտաշնչումը (փորձ—արտաշնչած օդը փչել կրաջրի մեջ): Թոքախտ և նրա տարածման ուղիները: Խորհրդային իշխանության և հասարակայնության միջոցառումները թոքախտի դեմ պայքարելու համար: Ծխելու վնասը: Թունավոր գազերի և հակագազերի մասին հասկացողություն: Ինչպես են ազդում թունավոր նյութերը մարդու և կենդանիների օրգանիզմի վրա:

Ուղեղի և նյարդերի նշանակությունը, զգայարանների դերը և նրանց կապն ուղեղի հետ: Ինչպես պահպանել լավ տեսողությունը: Աշխատանքի և հանգստի ուղիղ հաջորդականության անհրաժեշտությունը:

Մարդու և կենդանիների մարմնի կազմության նմանությունները՝ մարմնի գլխավոր մասերը, մաշկը, ներքին գործարանները: Մարդու կազմվածքի առանձնահատկությունները, մարմնի ուղղաձիգ դրությունը, քայլելուց ազատված ձեռները, ձեռքերով աշխատելը, մաշկի մազերի աղքատությունը, ավելի զարգացած ուղեղը: Մարդու և կենդանիների հիմնական տարբերությունը, աշխատանք և աշխատանքի գործիքներ պատրաստելը:

3. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԾԱԳՈՒՄԸ

(50 ժամ—3-րդ քառորդի վերջը և 4-րդ քառորդ)

Ծովերում յեվ օվկիանոսներում ապրող կենդանիներ և նրանց հարմարվել ջրի կյանքին, օրինակ՝ կորալները, սպունգները, ծովային խոզերը, ակուլա, ծովերի հատակում ապրող ձկների առանձնահատկությունները՝ լուսավոր ճառագայթներ արձակելու հարմարությունները, ծովային առյուծ (տյուլեն), կետ: Կետի վորսորդություն, ծովային այլ կենդանիների վորսորդություն և ձկնորսություն: Ձկների ձկնկիթ արձակելը: Մարդու տնտեսական ներգործությունը ավազանների կյանքի վրա՝ ջրի ավազաններում ձկներին բնակեցնելը, ձկների գիշատիչների դեմ պայքար, ավազանների մաքրելը: ԽՍՀՄ-ի ձկնատնտեսության զարգացման նշանակությունը:

Կյանքն օդում.—Թռչունների թռչելու հարմարությունները, փետուրի և բմբուլի (նրբափետուր) դերը, մարմնի ընդհանուր կազմության առանձնահատկությունները (իրանը, թևերը, դատարկ վոսկորները): Թռչունների զանազան տեսակները համաձայն նրանց կյանքի պայմաններին և սնունդ ձեռք բերելու ձևերին (բերել մի քանի փայլուն օրինակներ արծիվ, հավալուսն (պելիկան), կտցար, սոխակ, ծիծեռնակ, տրոքիլ (колибри) և այլն): Վայրի հավերի, բադերի և սագերի առանձնահատկությունները, ինչպես են հարմարվել ընտանի կյանքին (ձագ հանելու համար թուխս նստելը. կերի մեջ վոչ ընտրող լինելը, հավերի թռչել դժվարանալը): Ձվի կազմությունը և ձագեր առաջացնելու անհրաժեշտ պայմանները: Այդ պայմանների արհեստականորեն ստեղծելը ինկուբատորի մեջ, վերջինիս կազմությունը (էքսկուրսիա): Ճտերի խնամելը բրուդերում: Տնտեսական թռչունների զանազան ցեղերը, վորոնց առաջացրել է մարդը, տվյալ վայրի ամենաարժեքավոր ցեղերը: Նամակատար աղավնիների մասին գաղափար, նրանց նշանակությունը յերկրի պաշտպանության գործում:

Կյանքը ցամաքի վրա.—Ցամաքային կենդանիների հսկայական բազմազանությունը։ Թունավոր և վոչ թունավոր օձեր բարեխառն և տաք յերկրներում (որինակ իժ, հասարակ օձ, վիշապաօձ, քոժոժավոր օձ)։ Կրիա, կոկորդիլոս և նրանց պաշտպան պատյանները։ Մողես և նրա առանձնահատկությունը՝ ազատվել գիշատիչների ճանկերից պոչը թողնելով։

Տաք և ցուրտ յերկրների գիշատիչ կենդանիները։ Սպիտակ արջ, նրա պաշտպանողական գույնը, նրա հատկությունը՝ յերկար պառկած մնալ սառույցի վրա վորսի սպասելիս, կայծակի նման արագաշարժությունը, թեև թվում է թե ճարպիկ չէ։ Առյուծներ և վագրեր (հարձակողական և պաշտպանողական զենքերը, գույնը, վոր օգնում է հանկարծակի հարձակման համար)։ Գաղափար բնության մեջ «դիմակավորման» մասին և արհեստական դիմակավորման մասին՝ պատերազմի ժամանակ։

Շունը, վորպես մարդու ուղեկից, պատերազմական շներ։ Ուսելու տեսակետից շան ցեղակից գիշատիչներին ընտելացնելու աշխատանքներ (աղվեսի ֆերմեր)։

Կենդանիներ, վորոնք մեծ մասամբ սնվում են բուսական կերով և նրանց ընտանեցնելու հեշտությունը։ Այս կենդանիների հսկայական նշանակությունը մարդու կյանքում (ձի, կով, խոզ, վոչխար, հյուսիսային յեղջերու, ուղտ, ճագար)։

Սոցիալիստական խոշոր անասնապահության և թռչնաբուծության խնդիրները՝ անասնապահական խորհտնտեսությունների, կաթի և մսի ապրանքատու ֆերմերի թռչնաբուծարանների, ինկուբատորային կայանների շինարարությունը։

Ինչպես են առաջացել կենդանիներն ու մարդը.—Մարդու կողմից առաջացված ընտանի կենդանիների և կուլտուրական բույսերի բազմազանությունը, (որինակ, յեղջյուրավոր անասունների, ձիերի, շների, աղավնիների, հավերի կաղամբի զանազան տեսակներն և ցեղերը)։ Միչուրինի աշխատանքները նոր տեսակի պտղատու ծառեր ստանալու վերաբերմամբ։ Մարդը կարող է փոխել կենդանիներին և բույսերին։ Կենդանիների և բույսերի փոփոխվելը կատարվել է և կատարվում է նաև վայրի բնության մեջ։ Յերկրի մակերևույթի փոխվելը միլիոնավոր տարիների ընթացքում վորտեղ այժմ ցամաք է, մի ժամանակ ծով էր (ծովային կենդանիների քարացումները և կամ նրանց պատկերները դիտել)։ Կենդանիների և բույսերի փոփոխությունը միլիոնավոր տարիների ընթացքում (դիտել հնադարյան մահացած կենդանիների և բույսերի նկարները, որինակ հսկա—մողեսները, նախաթռչունը, մամոնտ, ծառանման պտերներ)։ Հնադարյան կենդանիների և բույսերի մահացումը և նրանց փոխարինումը կյանքի պայմաններին ավելի հարմարված բույսերով և կենդանիներով։ Այսպես է բնականորեն առաջացել և մարդը։ Մարդու և մարդանման կապիկների ավելի մոտ նմանությունները։ Ժամանակակից մարդն առաջացել է նախամարդուց, վոր ապրել է 100 հազարավոր տարիներ առաջ և էլ ավելի մոտ էր կապկին (դիտել կապկի, նախամարդու և ժամանակակից մարդու պատկերները)։

Գիտության տվյալները յերկրի մասին, կյանքի և կենդանիների ու բույսերի ծագման որենքների մասին, մարդկային մարմնի կազմության մասին շատ պարզ ցույց են տալիս կրոնի ուսմունքի ամբողջ անմտությունն աշխարհի և մարդու աստծո կողմից ստեղծագործության մասին, կենդանիների և բույսերի անփոփոխության մասին։

Բոլոր այս հեքյաթները պետք են ճնշողներին, վորպեսզի աշխատավորներին պահեն խավարի և տգիտության մեջ և էլ ավելի շահագործեն նրանց։

ՉՈՐՐՈՐԴ ԽՄԲԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ (30 ժամ)

1) Անասնապահություն.—Մասնակցել նոր ծնված կենդանիներին (հորթ, խոզի ձագ) խնամելու աշխատանքներին՝ կերակրել նորմայով, ջուր տալ, մաքրել, բնակարանի օդը մաքրել։ Վորոշել կենդանու քաշը և պարզ հաշիվ անել կենդանու սննդի վերաբերյալ։ Ծանոթանալ կեր պատրաստելու և կեր տալու գլխավոր մեքենաներին (յեթե կան այդպիսիները)՝ արմատներ կտրող, հարդ կտրող, քուսպ պատրաստող և այլն։

2) Աշխատանք պտղատու պարտիզում.—Ծառերի բների կեղևը մաքրել, սպիտակացնել, թրթուրների բները վոչնչացնել, խեժից օղակներ շինել, ծառերի չոր ճյուղերը կտրատել, ծառեր տնկել և պտուղի բերքը հավաքել։

3) Խմբում արած փորձերի հաշվառում կատարել։

ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ—ՕԳՏԱԿԱՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ 1 ԱՍՏԻՃԱՆԻ ԴՊՐՈՑՈՒՄ

I. ԽՈՒՄԲ

1.—Սենյակային բուսականությունն օգտագործել դպրոցը, մանկապարտեզը, հասարակական ճաշարանը, ակումբը և այլն զարդարելու համար։

2.—«Կոլեկտիվիզացիայի և բերքի որը» տոնին զարդարել ցուցահանդեսը։

3.—Կերակրել ձմեռող օգտակար թռչուններին և մասնակցել «թռչունի որ» տոնին։

II. ԽՈՒՄԲ

1.—Մասնակցել «թռչունի որ» տոնին և պատրաստել սարյակի համար տնակներ։

2) Մանկապարտեզում հասարակական ծաղկանոց շինելու աշխատանքներին մասնակցել։

3) «Անտառի որը» մասնակցել անտառային տնկարանի աշխատանքներին՝ սերմեր ցանել, սերմից ծլած տունկերը տեղափոխել, տնկարանի համար ծառի սերմեր հավաքել (տխկենու սերմեր, կաղին և այլն)։

4) Հավաքել կաղամբաթիթեռի թրթուրները կոլտնտեսության կամ բանվորական բանջարանոցում։

5) Մասնակցել բերքի հավաքմանը (բողկի, սոխի, սխտորի և այլն) բանվորական կամ կոլտնտեսության բանջարանոցում։

6) «Կոլեկտիվիզացիայի և բերքի» տոնի որը հանդես գալ վոտանավորների արտասանությամբ, պարզ ներկայացումով՝ նվիրված բերքի համար մղված պայքարին։

7) Ագիտացիա մղել ծխի և պասի դեմ։

III. ԽՈՒՄԲ

1. Ցանքսի և բերքահավաքման կամպանիային նվիրված անկյուն կազմակերպել (խրճիթ ընթերցարանում կամ գյուղխորհրդում) տեղական կոլտնտեսությունների աշխատանքի ընթացքը լուսաբանելու նպատակով։ Նկարել պլակատներ, լրագրից կտրած հատվածներից կազմել ալբոմ, վորը գաղափար տա ԽՍՀՄ-ի ցանքսի և բերքահավաքման կամպանիայի մասին։

2) Մասնակցել «կոլեկտիվիզացիայի և բերքի» տոնին։ Կազմել դիագրամներ խորհտնտեսությունների, կոլտնտեսությունների և անհատական տնտեսությունների բերքի մասին։ Ցուցահանդեսում կազմակերպել «անաստված» անկյուն։

3. Մասնակցել «առաջին ակոսի տոն»-ի կազմակերպմանը և անցկացմանը։ Ըստուգել, թե ինչքան պատրաստ է գյուղը ցանքսն սկսելու։

4. Կոլտնտեսական և բանվորական բանջարանոցի համար հավաքել ձրի պարարտանյութեր (մոխիր), կոլտնտեսության և բանվորական բանջարանոցի սերմերի ծլունակությունը վորոշել։ Օգնել սերմերի ընտրության։

5. Օգնել կոլտնտեսության գյուղատնտեսական մեքենաների խնամքին, մաքրել, յուղել, հետևել, թե ինչպես են պահպանվում։

6. Յեկեղեցական տոներին ագիտացիա մղել լքումների դեմ։

7. Տարածել ագրո-կոլտնտեսային գրականություն։

8. Մասնակցել կոլտնտեսության կամ բանվորական բանջարանոցի արտադրական աշխատանքներին (կապված դպրոցական ծրագրի հետ)։

9. Կոլտնտեսական թռչնանոցում օգնել ընտանի թռչունների խնամելուն։

10. «Անտառի որվա» և «թռչունի որվա» տոներին մասնակցել։

11. Հետազոտել ջրհորների, աղբյուրների և խմելու ջրերի ակների սանիտարական դրությունը և գյուղխորհրդում հարց բարձրացնել գործնական միջոցներ ձեռք առնելու համար։

12. Պայքար մղել միջատների դեմ—բնակարանների, պարտեզների և վարակ տեղափոխողների դեմ (փայտոջիլների, ճանճերի, տտակաների) հասարակական հիմնարկություններում և տներում։

IV. ԽՈՒՄԲ

1. «Կոլեկտիվիզացիայի և բերքի որը» մասնակցել ցուցահանդեսի կազմակերպման աշխատանքներին։

2. Օգնել կոլտնտեսության փորձերի արդյունքների հաշվառման։

3. Խրճիթ-ընթերցարանի համար պատի թերթ լույս տեսցնել, նվիրված գարնանացանի կամպանիային, բերքի պահպանման, աշնանացանի և բերքի հավաքման կամպանիաներին և այլն։

4. Մասնակցել կոլտնտեսության արտադրական աշխատանքներին՝ պտղատու ծառերի պարտեզներում, խոզանոցում, հորթերի ախոռում (կապված դպրոցական ծրագրի հետ։)

5. Մասնակցել սերմերի ընտրության և մաքրելու աշխատանքներին։

6. Մասնակցել դաշտային մկների դեմ մղած պայքարին։

7. Կազմակերպել խրճիթ-ընթերցարանում սանիտարական—առողջապահական և մայրերի ու մանուկների պաշտպանության անկյուններ։ Ակտիվորեն պայքար մղել մանուկների առողջության պահպանման և կենցաղի լավացման համար (առանձին ջերմաչափեր, առանձին անկողին, հատուկ անկյուն տան մեջ և այլն)։

8. Կազմակերպել դպրոցում՝ բնակչության համար շուտափույթ օգնության անկյուն և դեղարան։

9. Կազմակերպել հակաալկոհոլական ցուցահանդես խրճիթ-ընթերցարանում և գեղարվեստական ներկայացումներ, զեկուցումներ և այլն։

10. Տարածել հակակրոնական գրականություն, անցկացնել բարձր ընթերցանություն խրճիթ-ընթերցարանում և կազմակերպել հակակրոնական անկյուն։

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Մեր դպրոցի առաջ խնդիր է դրված յերեխաներից պատրաստել բազմակողմանի զարգացած՝ սոցիալիզմի այնպիսի կառուցողներ, վորոնք կարողանան թեորիան կապել պրակտիկայի հետ և տիրապետել տեխնիկայի կարևորագույն ելեմենտներին։

Տեխնիկայի հիմունքներին տիրապետելու գործն ամենից ավելի օգտակար է կազմակերպել այնպես, վոր տեխնիկայի այս կամ այն ճյուղում մասնագիտանալուն նախորդի ընդհանուր պոլիտեխնիկական կրթությունը։

Տարրական դպրոցում յերեխաների պոլիտեխնիկական կրթության հիմնական բովանդակությունը կայանում է ելեմենտար գործիքների հետ վարվելու գործնական ունակությունների յուրացման և արտադրական պրոցեսի ընդհանուր գիտական սկզբունքներին ծանոթ լինելու մեջ։

Պարզ գործիքների հետ վարվելու ունակությունների յուրացումը տեղի յե ունենում ամենից առաջ յերեխաներին ձեռքի աշխատանքի սովորեցնելու պրոցեսում։ Ձեռքի աշխատանքի այս ուսուցումն սկսվում է առաջին խմբում թեթև նյութերի վրա, ինչպես են՝ թուղթը, կավահողը, ավազը, վորոնք առանձին գործիքներ չեն պահանջում և միևնույն ժամանակ զարգացնում են ձեռքի թաթերն ու մատները։ Նրա հիմնական ձևերն առաջին աստիճանում պետք է լինեն՝ աշխատանք տեկստիլ նյութերի (հյուսել, կարել, մանել և գործել), փայտի վրա և թեթև մետաղի (թիթեղ և լար) մշակումը (գլխավորապես սառը մշակումը)։ Տեկստիլ նյութերի վրա կատարվելիք ձեռքի աշխատանքների նպատակն է՝ յերեխաներին պատրաստել հետագայում մեքենայի վրա աշխատելու և ձեռքով կարելու գործնական ունակությունները յուրացնելու համար։ Փայտի և մետաղի վրա կատարվելիք ձեռքի աշխատանքի դերը կայանում է նրանում, վոր աստիճանաբար ընդլայնվի այն գործիքների և ունակությունների թիվը, վորոնց տիրապետում են յերեխաները և այն հասարակական օգտակար իրերի քանակը, վորոնք կարողանում են պատրաստել նրանք։

Աշխատանքի ծրագիրը՝ ձեռքի աշխատանքի նկատմամբ, կառուցվում է հետևյալ սկզբունքներով.

1) Ավելի թեթև նյութից դեպի ծանրը, սահմանափակ թվով պարզ գործիքներից դեպի նրանց հետ հեշտությամբ վարվելու հմտությունը և դեպի ավելի մեծ թվով բարդ գործիքները և ունակությունները։

Չափազանց ձանձրալի և հոգնեցուցիչ կլիներ յերեխաների համար, յեթե մենք աշխատեյինք այդ ունակությունների յուրացումը ձեռք բերել անընդհատ վարժությունների միջոցով։ Յերեխաները միշտ ցանկանում են տեսնել իրանց աշխատանքի արդյունքը։ Այդ պատճառով ունակությունների մշակումը կատարվում է այնպիսի իրերի պատրաստման միջոցով, վորոնք կարող են ունենալ հասարակական օգտակար նշանակություն։ Միմիայն այն դեպքում դպրոցի աշխատանքը կլինի հասարակական-օգտակար, յերբ յերեխաները՝ իրանց կարողության սահմաններում, արտադրում են այնպիսի իրեր, վորոնք կարող են օգտակար հանդիսանալ դպրոցի և մանկապարտեզի համար, կամ անհրաժեշտ են դպրոցական հողամասի համար և այլն։ Աշխատանքի ուսուցման այսպիսի մեթոդը կարելի յե անվանել օպերացիոն-առարկայական (операционно-предметный) այն իմաստով, վոր նա ուսուցչի համար օպերատիվ աշխատանք է (խստիվ սիստեմատիկ հետևողականությամբ սովորեցնել աշակերտներին վորոշ աշխատանքային գործերի), իսկ յերեխաների համար՝—առարկայական (արտադրել օգտակար առարկաներ)։ Իհարկե, պետք է շինել տալ բացառապես մատչելի իրեր և ամեն կերպ աշխատել, վոր արտադրանքն իր վորակով լինի ըստ կարելույն բարձր։

Սակայն ժամանակակից տեխնիկապես կատարելագործված աշխատանքը մեքենայի աշխատանքն է։ Այդ պատճառով, դեռևս տարրական դպրոցում յերեխաներն սկսում են աշխատել յերկու մեքենայի վրա՝ կարի և մի վորև թեթև ու անվտանգ գյուղատնտեսական մեքենայի վրա։ Այս մեքենաների վրա աշխատել սովորեցնելու գործը պետք է այնպես կազմակերպվի, վոր յերեխաները վոչ միայն յուրացնեն մեքենայի հետ վարվելու ունակությունները, այլ և իմանան՝ թե ինչպես պետք է պահել և խնամել նրան։ Մեքենայի վրա աշխատել սովորելու հետ միաժամանակ յերեխաները բարձր խմբերում ձեռք են բերում նաև տարրական ունակություններ ելեկտրոտեխնիկայից։

Չափազանց մեծ սխալ կլիներ պոլիտեխնիկական պատրաստությունը՝ թեկուզ առաջին աստիճանի դպրոցում, դարձնել զուտ ձեռքով և մեքենայի վրա աշխատելու գործնական ունակություններ։ Պոլիտեխնիկական կրթությունը պարտադրապես պայմանավորում է արտադրական պրոցեսի ընդհանուր գիտական հիմունքների ծանոթությունը։ Վերին աստիճանի մեծ սխալ կլիներ ունակությունները գիտական հիմունքներից բաժանելը, ընդհակառակը՝ սերտ կերպով մեկը պետք է կապված լինի մյուսի հետ։

Վոչ մի բան չի կարող համարվել պոլիտեխնիզմի սկզբունքի այնքան խոշոր խեղաթյուրում, վորքան սոսկ աշխատանքի և պատմողական պոլիտեխնիզմի յերկվությունը։

Ահա թե ինչու, հենց սկզբից աշխատանքի ուսուցումը պետք է ծանոթացնի յերեխաներին նրա գիտական հիմունքների հետ։ Դեռ ևս թղթի վրա աշխատելիս, առաջին խմբի նորեկները վարժվում են իրենց զգայարանքների զարգացման մեջ և սովորում են ավելի մանրամասնորեն գիտել առարկայի արտաքին (տեսանելի և շոշափելի) հատկանիշները և վորակը։ Աշխատանքների հետևյալ ցիկլում՝ ավազի և կավահողի վրա աշխատելիս, յերեխաները սովորում են եկսպերիմենտներ կատարել և աշխատանքի ընթացքում ծանոթանում են կավահողի, ավազի, ջրի և կրակի հետ։ Փայտի, մետաղի և տեկստիլ նյութերի վրա կատարվող աշխատանքների ծրագիրը կառուցվում է այնպես, վոր նա այս մասում իրանից ներկայացնում է նյութագիտության աստիճանաբար ընդլայնվող դասընթացք և արտադրական պրոցեսների հետզհետե խորացող անալիզների մի սերիա։ Յերեխաների տեխնոլոգիայի վերաբերյալ ունեցած գիտելիքների աճումը և խորացումն այսպես է ստացվում։ Բարձր խմբերում, վորտեղ մանուկների հասակն ավելի մեծ է և վորտեղ արդեն տեղի յեն ունենում մեքենայի աշխատանքն ու ելեկտրոտեխնիկան, հնարավոր է դառնում ծանոթացնել յերեխաներին մեքենայագիտության և արտադրության ընդհանուր ուսմունքի հետ։ Սակայն այս թեորետիկ ընդհանրացումները, վորոնք արվում են գլխավորապես չորրորդ խմբում, անպայմանորեն իրացվում են յերեխաների նախընթաց խմբերում ձեռք բերած կոնկրետ գործնական փորձերի հիման վրա։

Պոլիտեխնիկական կրթությունը կազմում է կոմունիստական դաստիարակության բաղադրիչ մասը։ Վոչ թե ծրագրի այս կամ այն մասը, այլ աշխատանքի ուսուցման ամբողջ գործը պետք է այնպես կազմակերպված լինի, վոր յերեխաները միշտ հասկանան և զգան, վոր տեխնիկան մեզ անհրաժեշտ է սոցիալիստական շինարարության համար։ Յերկրորդ խմբում յերեխան արդեն պետք է հասկանա կոլեկտիվիզմի և մեխանիզացիայի օգտակարությունը, թեկուզ առանց ճշգրիտ և բարդ ձևակերպումների։ Արդեն յերկրորդ խմբում յերեխայի առաջ միշտ կանգնած պետք է լինի սոցիալիստական լավ աշխատողի պատկերը և նրա մեջ շարունակ պիտի դաստիարակվի այդպիսին լինելու ձգտումը։ Ուսուցման յերկրորդ տարին, վոր բաց է անում յերեխայի առաջ ժամանակակից տեխնիկայի հիմնական հատկանիշները, պետք է դաստիարակի նրա մեջ ժամանակակից տեխնիկայի նվաճումներին տիրապետելու կամքը, վորպեսզի հասնենք և անց-

նենք կապիտալիստական յերկրներից, վորպեսզի արագացնենք սոցիալիզմի վերջնական հաղթանակը կապիտալիզմի դեմ։

Վերջապես, ուսուցման չորրորդ տարում, վորտեղ յերեխաները ծանոթանում են զանազան արտադրությունների և ժամանակակից տեխնիկայի նվաճումների հետ, աշխատանքի պարապմունքները բնականորեն կապվում են հասարակագիտության հետ։ Սխալ կլիներ աշխատանքի ժամերին տարվող յերեխաների քաղաքական դաստիարակությունը կապել աշխատանքի ծրագրի միայն մի քանի կետերի հետ։ Սխալ կլիներ նույնպես կրճատել յերեխաների պոլիտեխնիկական պատրաստության համար հատկացված ժամերը միմիայն կրկնելու համար այն, ինչ վոր յերեխաները մանրամասն կերպով սովորում են հասարակագիտության դասերին։ Աշխատանքի պարապմունքի ժամանակ յերեխան պետք է ստանա գլխավորապես տեխնիկային տիրապետելու պատրաստությունը, սակայն տեխնիկային տիրապետելը, ինչպես և աշխատանքի բոլոր պայմանները պետք է ներշնչված լինեն այն գիտակցությամբ, վոր տեխնիկան մեզ պետք է, վորպեսզի կառուցենք սոցիալիզմը, վորպեսզի վերջնականապես հաղթանակի սոցիալիզմը։

Առաջին խմբում աշխատանքը սկսվում է թղթից նախ, նրա համար, վոր նա թեթև նյութ է. յերկրորդ, յերեխաները նրանից կարող են պատրաստել իրենց համար (յերբ դեռ ևս գրագիտության ուսուցման են անցնում) բազմաթիվ օգտակար իրեր՝ այբուբենական լոտո, տառեր—պլակատների համար, ինքնագործ տետրակներ, տուփեր—մատիտների և գրքերի համար և այլն. յերրորդ՝ այս աշխատանքները կարելի յե այնպես կազմակերպել, վոր յերեխաները կոլեկտիվ կերպով աշխատեն, գործադրելով աշխատանքի բաժանման էլեմենտար ձևերը (մի բրիգադ ամբողջ դասարանի համար պատրաստում է տետրակներ, մյուսը՝—տուփեր և այլն)։ Ցեվ գրագիտության դասերին՝—գրելու ժամանակ, յեվ աշխատանքի ժամերին յերեխաներն իմանում են, վոր թուղթը լինելու յե զանազան տեսակի և տարբեր հատկության։ Զանազան տեսակի տարբեր հաստության և այլ և այլ գույնի թղթերը մեզ հնարավորություններ են տալիս զարգացնելու յերեխաների մեջ գույները և նրանց նրբությունները տարբերելու ունակությունը, ինչպես և նրբացնում են նրանց շոշափելիքը. իսկ զարգացած շոշափելիքը և գույները տարբերելու ունակությունը յուրաքանչյուր աշխատողի համար անհրաժեշտ հատկություններ են։ Թղթի վրա աշխատելիս հեշտությամբ հաջողվում է վարժեցնել յերեխաներին ճշտապահության և մաքրասիրության, սովորեցնել նրանց աշխատանքից հետո մաքրել սենյակը, սեղանը և այլն։ Մի խոսքով, այս աշխատանքների ժամանակ կարելի յե յերեխաների մեջ հեշտությամբ առաջ բերել մի շարք այնպիսի սովորություններ, վորոնք անհրաժեշտ են ամեն մի աշխատողի համար։

Ինչպես արդեն ասացինք, թղթի վրա աշխատելու պրոցեսում յերեխաներն իմանում են, վոր թուղթը լինում է տարբեր հատկության։ Այսպիսով յերեխաները գաղափար են կազմում այն նյութի, այն արտադրանքի մասին, վորի հետ գործ են ունենում։ Գաղափար է կազմվում նյութի արտադրանքի լավ կամ վատ հատկության մասին։ Միաժամանակ յերեխաներն սկսում են հասկանալ, վոր նյութն աշխատանքի արդյունք է։ Իսկ յերբ ուսուցիչը պատմում է, թե ինչպես է պատրաստվում թուղթը, այն ժամանակ յերեխաների համար միանգամայն պարզվում է, թե ինչպես աշխատանքի շնորհիվ անպետք փալասը դառնում է չափազանց օգտակար և կարևոր մի բան (թուղթը)։

Թղթի վրա պետք կլինի աշխատել մոտավորապես 3-4 տասնօրյակ (մոտ 15 ժամ)։ Նրանից հետո սկսվում է աշխատանքը կավահողի վրա, մանկական շինարարական աշխատանքների կատարման կարգով. 1) կավահողը թույլ ընդդիմադրություն ունեցող նյութ է. 2) նրա վրա աշխատելու հետևանքով զարգանում է յերեխայի ձևավորող գործունեությունը և բացվում է նրա առաջ ստեղծագործության լայն ասպարեզ, հնարավորություն տալով ուսուցչին կազմակերպել կոլեկտիվ աշխատանք, 3) աշնանը յերեխան տեսնում է նոր շինվող տներ և բնականորեն նրա մեջ ևս ցանկություն է առաջ գալիս իր պատրաստած աղյուսներից տնակներ շինել։

Այն ժամանակ, յերբ յերեխան աշխատում է կավահողի վրա և զբաղվում է շինարարությամբ, տեղի յե ունենում նրա՝ ձեռքերի հետագա զարգացումը. մասնավորապես զարգանում են ձեռքերի մատները (վոր, ի միջի այլոց նպաստում է ձեռագրի գեղեցկանալուն)։ Կատարվում է նաև սովորությունների մշակման հաջորդ քայլը. սկզբից՝ թղթի վրա աշխատելիս, յերեխան ընտելանում է ճշտապահության, իսկ այժմ՝ շարունակ նրա առաջ կանգնած է մաքրության հարցը։ Կատարվում է հաջորդ քայլը նաև

զգայողական օրգանների զարգացման խնդրում։ Թղթի վրա կատարած աշխատանքները զարգացնում են շոշափելիքն ու գույները տարբերելու ունակությունը, իսկ կավահողի վրա աշխատելիս զարգանում է ձեռքի մատների և թաթի մկանային փորձառությունը։ Վերջապես, պրիմիտիվ կաղապարումների ժամանակ, խորանում է յերեխայի աշխատանքի և արտադրանքի մասին ունեցած հասկացողությունը, նրա համար միանգամայն պարզվում է, վոր արտադրանքը մի շարք արտադրական պրոցեսների հետևանք է։

Աշխատանքի ընթացքում և փորձերի միջոցով յերեխաները ձեռք են բերում խառնուրդներ կազմելու հմտությունը (կավահողի և ավազի) և ըմբռնում են ջրի և կրակի կավահողի վրա ունեցած ներգործությունը։ Իսկ յերբ ուսուցիչը պատմում է, թե ինչպես է պատրաստվում ապակին, յերեխաները հնարավորություն են ստանում հասկանալու նաև կրակի ներգործությունն ավազի վրա։ Այսպես վորոշ չափով ընդլայնվում են յերեխաների՝ նյութի դիմացկունության, ամրության, փափկության և թանձրության մասին ունեցած հասկացողությունները։ Կավահողի և ավազանյութերի վրա աշխատելու և շինարարական աշխատանքների համար կպահանջվի նույնպես մոտ 15 ժամ։

Աշխատանքների յերրորդ ցիկլը—տեկստիլ նյութերի վրա—պահանջում է մոտավորապես 2 ամիս։ Այստեղ ավելի ևս զարգանում են յերեխաների արտադրանքի մասին ունեցած գաղափարները, վորպես արտադրական պրոցեսների մի ամբողջ շղթայի (կտավատ-թել-գործվածք—շապիկ). Նրանք արդեն մոտենում են պրոֆեսիաների բազմազանության (կտավագործ, մանող, գործող, դերձակ) աշխատանքի բաժանման և աշխատակցության հարցերին։ Նրանք սկսում են հասկանալ աշխատանքը, վորպես հումույթը ֆաբրիկատի վերածող պրոցես։ Նրանք ծանոթանում են աշխատանքի զանազան ձևերին (ձեռքի աշխատանք մեքենայի վրա, մենակ, կոլեկտիվ, բոլորով միասին մի գործ են կատարում կամ աշխատանքը բաժանում են) և համոզվում են, վոր կոլեկտիվ աշխատանքը, աշխատանքը մեքենայի վրա և աշխատանքի բաժանումն ավելի արդյունավետ են (ավելի շուտ, շատ և լավ են կատարվում)։ Սրան կարելի յե հարմարեցնել նաև էքսկուրսիաներ դեպի մարդկանց աշխատանքի զանազան վայրերը և դեպի գործարանները, վորտեղ յերեխաները տեսնում են կոլեկտիվ աշխատանքը, մեքենայի աշխատանքը և աշխատանքի բաժանումը։ Այսպես հետզհետե զարգանում են յերեխաների արտադրության մասին ունեցած գաղափարները։

Միևնույն ժամանակ, տեկստիլ նյութերի վրա կատարած աշխատանքների ընթացքում յերեխաները վերջացնում են ձեռքի զարգացման առաջին կոնցենտրը (թոկերի, գոտիների և թելերի վոլորումը, ասեղով կարելը) և աշխատանքի բնույթը փոխվում է։ Յերկրորդ տարվա աշխատանքների առաջին ցիկլը—աշխատանքը թղթի վրա—կայանում էր ուսումնական իրեր և խաղալիքներ շինելու մեջ։ Նմանապես և յերկրորդ ցիկլը—աշխատանքը կավահողի վրա—գլխավորապես կայանում էր խաղալիք—տնակներ շինելու մեջ։ Սակայն այս յերկրորդ ցիկլում սկսում է հանդես գալ յերեխաների կենցաղային աշխատանքը. կավահողից խաղալիք ամանեղեններ և այլն շինելով և շարունակ մաքրության ձգտելով յերեխաները ձեռք են բերում ամանեղենի հետ վարվելու ունակություն, սովորում են, թե ինչպես պետք է լվանալ և մաքրել ամանները, դանակները, պատառաքաղները, ապակին և այլն)։ Այստեղ՝ աշխատանքների յերրորդ ցիկլում, տեկստիլ նյութերի վրա, կենցաղային աշխատանքը կազմում է հիմնական բովանդակությունը (կարը)։

Աշխատանքների չորրորդ (և վերջին) ցիկլը առաջին խմբում—դա փայտի մշակումն է։ Այս աշխատանքները վերջին հերթին են դրված հետևյալ պատճառներով, 1) փայտը համեմատաբար մեծ դիմադրություն ունեցող նյութ է, 2) նրա մշակումը պահանջում է գործիքների բազմազանություն։ Մինչև այժմ յերեխան աշխատում էր կամ միմիայն ձեռքով և կամ չափազանց սահմանափակ թվով գործիքներով (մկրատ, ասեղ)։ Մինչև այժմ գլխավոր ուշադրությունը դարձվում էր ձեռքի զարգացման վրա՝ մասնավորապես թաթի և մատների։ Այժմ տրվում է համեմատաբար դժվարամշակ նյութ և մի շարք գործիքներ (մուրճ, դանակ, սղոց, աքցան, գայլիկոն, խարտոց, տովրիչ և այլն). սակայն յերբեք չպետք է ավելացնել գործիքների թիվը, ձգտելով տալ յերեխաներին այդ գործիքների հետ հմտությամբ վարվելու ունակությունը (մեխ խփել և հանել, սղոցել, գայլիկոնել, խարտոցով հարթել և այլն)։ Չափազանց կարևոր է, վոր յերեխաները հենց սկզբից յուրացնեն գործիքների հետ կանոնավոր ունակությունը, վորովհետև ավելի հեշտ է միանգամից կանոնավոր սովորեցնելը, քան թե հետո ուղղելը։ Հենց այդ ժամանակ էլ յերեխաները սովորում են պահպանել գործիքները, դասդեն

չշփրտել և այլն: «Կոնստրուկտոր»-ի վրա աշխատելով, նրանք ծանոթանում են մոնտաժի և մեքենայագիտության էլեմենտների հետ:

Փայտի վրա աշխատելիս շատ ժամանակ է գնում (մոտ 40 ժամ): Տարեվերջին (մոտ 10 ժամ) գումարառման է յենթարկվում թե ինչպիսի աշխատանքային ունակություններ են ձեռք բերել յերեխաները և ինչպիսի հասարակական օգտակար իրեր են կարողանում շինել: Ամփոփվում են նաև յերեխաների ձեռք բերած արտադրական գաղափարները (ով է շինում—պրոֆեսիաները, աշխատանքի բաժանումը և գործակցությունը. ինչից է շինում—նյութը, հումույթը. ինչ է շինում—արտադրանք, ապրանք. ինչով է շինում—գործիք. ինչպես է շինում—տալով այլ ձև կամ փոխելով նրա նյութը, օրինակ՝ ձուլելով նրան. վորտեղ է շինում—տանը, տնայնագործական արհեստանոցում, գործարանում): Այսպիսով առաջին տարվա աշխատանքների հաջորդականությունը վորոշվում է հետևյալ սկզբունքներով. 1) Ավելի թեթև նյութից դեպի ավելի դժվար (թուղթ, կավահող, տեկստիլ և փայտ): 2) Ձեռքի, թաթի և մատների զարգացումից դեպի գործիքներով աշխատելը: 3) Խաղալիքներ և ուսումնական իրեր շինելուց, կենցաղային աշխատանքի միջոցով դեպի տնտեսական նշանակություն ունեցող իրերի պատրաստումը: 4) Յերեխաների սեփական աշխատանքային փորձերից դեպի արտադրական ընդհանրացումները:

Յերկրորդ տարվա աշխատանքն սկսվում է առաջին տարվա հիմնական թեմաների կրկնությամբ, սակայն շատ ավելի լայնացրած մասշտաբով: Առաջին տարում յերեխան ինքն էր աշխատում կավահողի վրա, իսկ այժմ, շարունակելով իր աշխատանքները, նա ծանոթանում է, թե ինչպես մեծերն են աշխատում աղյուսի գործարանում, կավահողի վրա: Առաջին տարում նա ստանում էր ընդհանուր պատկերություն՝ թե ինչ է գործարանը, իսկ այժմ նա ավելի մանրամասն ծանոթանում է վորոշ կոնկրետ գործարանի (աշխատանքի կազմակերպումը, աշխատանքի պրոցեսի տարրալուծումը, մեքենայացումը), կոնկրետ արտադրության հետ: Խորանում է նաև կրակի ներգործության մասին ունեցած ծանոթությունը:

Նմանապես և ավելի մեծ չափով ծանոթանում է յերեխան նաև շինարարության հետ: Առաջին տարում դրված էյին գլխավորապես հետևյալ խնդիրները. ով է շինում տունը. (արհեստ), ինչից են շինում տունը (նյութը), ինչպիսի գործիքներով է աշխատում հյուսնը) ատաղձագործը և այլն: Յերկրորդ տարում վոչ միայն ավելի լրիվ պատասխաններ են տրվում այս հարցերին, այլ ծագում է նաև նոր հարց—տուն շինելու պրոցեսը: Հետևյալ նոր հարցը—դա շինության մասերն են: Սրա հետ միասին ծագում են վառարանի, նրա տեսակների, ջրմուղի, կանալիզացիայի հարցերը: Հարց է առաջ գալիս նաև, թե ինչպես պետք է վարվել նրանց հետ, վոր բնականորեն ծանոթացնում է յերեխաներին տան տնտեսության հետ, իսկ նրանից ծագում են կոմունալ տնտեսության ընդհանուր հարցերը: Այս յերկու աշնանային թեմաների համար (աղյուսի գործարան, նորակառույց շենք) պետք կլինի մոտավորապես 20 ժամ, այսինքն՝ մոտ յերկու ամիս: Այս թեմաների մշակման ընթացքում յերեխաները սովորում են և ավելի տարրալուծել արտադրական պրոցեսը նրա հիմնական մոմենտներին, վոր նախապատրաստում է նրանց բարձր խմբերում «արտադրության սխեմա» կազմելու:

Ուսման յերկրորդ տարում յերեխաների հիմնական աշխատանքը փայտի մշակումն է (մոտավորապես 35-40 ժամ): Այստեղ հետզհետե ավելանում է այն գործիքների թիվը, վորոնց տիրապետում են յերեխաները, այն ունակությունների թիվը, վոր ձեռք են բերում նրանք և այն իրերի թիվը, վորը սովորում են շինել: Յերկրորդ տարվա աշխատանքը առաջինից գլխավորապես տարբերվում է նրանով, վոր այստեղ դժվարամշակ նյութերի թիվն ավելանում է. շատանում են նաև գործիքները: Ուրեմն այստեղ գլխավոր խնդիրը գործիքներին տիրապետելն է: Ուսուցման պրոցեսում յերեխաների առաջ միշտ դրված է կանոնավոր և ռացիոնալ աշխատանքի խնդիրը, աշխատանքի վորակի և լավ աշխատողի խնդիրը: Քննել և իմանալ, թե մեր աշխատած հիմնարկում ում և ինչու համար հաշվում են լավ աշխատող: Սակայն այս հարցերին յերեխաներին պետք է մոտեցնել աստիճանաբար, յելնելով իրենց անձնական փորձերից:

Ուսուցման յերկրորդ տարվա հիմնական աշխատանքը տեկստիլ նյութերի վրա կատարվող աշխատանքներն են (մոտավորապես 20-25 ժամ): Այստեղ, համեմատած առաջին տարվա հետ, մի կողմից ավելի խորացվում են արտադրական պրոցեսի հիմնական աստիճանների մասին տրված գիտելիքները և կարելու համար վերցվում են ավելի բարդ իրեր, իսկ մյուս կողմից, վորպես նոր բան մտցվում է աշխատանքը վոստայնանկի վրա: Այսպես յերեխան նախապատրաստվում է ըմբռնելու մեքենայի աշխատանքը բարձր խմբերում:

Ուսման յերկրորդ տարում յերեխաները դեռ չեն աշխատում մեքենաների վրա. մինչ այդ նույնիսկ մեքենայի հետ էլ նրանք ծանոթանում են այն տեսակետից, վոր մեքենան հեշտացնում և արագացնում է մարդու աշխատանքը, վոր մեքենայացումն ավելի արդյունավետ է դարձնում աշխատանքը: Սրանումն է կայանում մեքենայի մասին տրված ծանոթության գլխավոր բովանդակությունն ուսման առաջին տարում: Այս տարում արվում է հետևյալ քայլը: Վորպես ուսումնասիրության օբյեկտ վերցվում է վորևե լիակատար և միևնույն ժամանակ մատչելի ինքնաշարժ (автомат), օրինակ՝ ջրաղացը. և նրա վրա ուսումնասիրվում են մեխանիզմի հիմնական մասերը՝ շարժող ույժը, փոխադրիչ և աշխատող մեխանիզմները: Պարզվում է, թե ինչպես ինքնաշարժի աշխատանքի ժամանակ՝ ինչպիսին է ջրաղացը, արտադրական պրոցեսը մասնատվում է մի շարք հաջորդական պարզ պրոցեսների: Մինչ այդ յերեխան բազմիցս դիտել էր արտադրական պրոցեսի այդ մասնատումը (աղյուսի գործարանը, նորաշենը, տեկստիլ նյութը). հետևաբար նա կամաց կամաց պատրաստվում է անալիզի յենթարկելու արտադրական պրոցեսը: Իսկ դա մեքենայի և մեխանիզմի աշխատանքը հասկանալու հիմունքներից մեկն է:

Ջրաղացից բնական է անցնել հացի գործարանին և ֆաբրիկա-խոհանոցին, վորտեղ յերեխաները ծանոթանում են, թե ինչպես գործնականում տեղի յեն ունենում սննդեղենի մշակման մեխանիզացիան: Այն յերեխաներին, վորոնք ծանոթ են խոհանոցին և դիտեն, ինչպես է տեղի ունենում աշխատանքը խոհանոցում, միանգամայն հասկանալի և պարզ կլինի այս ասպարեզում կատարված մեխանիզացիան: Մնացած ժամանակը հատկացվում է յերկրորդ տարվա աշխատանքի հիմնական բովանդակությունն ամփոփելուն, վորովհետև այդ բովանդակությունը վերջի վերջո կայանում է յերկու հիմնական հասկացողությունների մեջ—«արտադրական պրոցեսի էլեմենտները» և «լավ աշխատողը»: Բայց վորովհետև այդ հասկացողություններից առաջինն արդեն պարզվեց ջրաղացի ուսումնասիրության ժամանակ, ուստի տարվա վերջին մասը նպատակահարմար է հատկացնել ամփոփման (և նույնիսկ վոչ այնքան ամփոփման, վորքան կոնկրետ օրինակներ հավաքելուն) ինչպիսի բանվոր—լավ բանվոր (իհարկե սոցշինարարության պայմաններում):

Հենց դպրոցի կապը կցված արտադրության հետ՝ ուսուցման յերկրորդ տարում վոչ այլ ինչ է, յեթե վոչ կապ այդ արտադրության բանվորների հետ: Յեթե առաջին տարին ընդհանուր գաղափար է տալիս այն մասին, թե ինչ է գործարանը և յեթե միայն յերրորդ խումբն է վիճակի յե վորոշ չափով ըմբռնելու նրա արտադրությունը, ապա յերկրորդ տարում յերեխաների համար պարզվում է, թե ինչ են անում բանվորներն այդ արտադրական հիմնարկում, ինչ աշխատանք են կատարում նրանք, ինչպես են նրանց աշխատանքի պայմաններն ու պաշտպանությունը, ինչ են ներկայացնում իրանցից լավագույնները բանվոր-հարվածայիններից, ինչ է մեզ հարկավոր, վորպեսզի մենք էլ լինենք նրանց նման (վորակավորում, սոցիալիստական վերաբերմունք դեպի աշխատանքը):

Ուսուցման յերրորդ տարվա աշխատանքի ծրագրի հիմնական նպատակն է պարզել ժամանակակից տեխնիկայի հիմնական հատկանիշները: Այստեղ էլ, ինչպես յերկրորդ խմբում, փայտի վրա աշխատելու համար հատկացվում է ավելի ժամանակ, քան աշխատանքի վորևե այլ ձևի համար (մոտ 25 ժամ): Նորն այստեղ, համեմատած յերկրորդ տարվա հետ, մի շարք նոր գործիքներն են, վորոնց տիրապետել պետք է սովորի յերեխան, մի շարք ավելի դժվար ունակություններ, վոր պետք է ձեռք բերի նա և մի քանի գիտելիքներ նյութագիտությունից: Բայց այդ նորության մեջ ամենագլխավորը փայտի մշակման տարբեր ձևերի (մեքենայով և ձեռքով) համեմատությունն է, ձեռքի աշխատանքի համապատասխան գործիքների համեմատությունը մեքենաների հետ և այլն: Ծանոթությունը սղոցարանի և փայտի մեխանիկական մշակման հետ, ձեռքի և մեքենայի աշխատանքի համապատասխան գործիքների համեմատությունը և այլն: Սղոցարանի, ատաղձագործական և կամ վորևե այլ փայտամշակ գործարանի ծանոթությունը շատ փայլուն և միևնույն ժամանակ մատչելի կերպով ցուցադրում է յերեխաներին աշխատանքի մեխանիզացիան, պարզ ցույց տալով մեքենայի աշխատող մեխանիզմի և ձեռքի աշխատանքի համապատասխան գործիքների կապը:

Ժամանակակից տեխնիկայի յերկրորդ առանձնահատկությունն այն է, վոր փայտը շինարարական գործից աստիճանաբար դուրս է դրվում (պլյուղոսա-փայտյա, քաղա-

քում-քարե): Քարաշեն շինության ծանոթությունը էլ ավելի խորացնում է յերեխայի ժամանակակից աշխատանքի մեխանիզացիայի մասին ունեցած գաղափարը (շինարարական աշխատանքների մեխանիզացիան յերեխաներին համեմատաբար ավելի հասկանալի կլինի, յեթե նրանք դեռ յերկրորդ խմբում ծանոթացել են սովորական շինարարության հետ): Միևնույն ժամանակ տեղի յե ունենում յերեխաների նյութագիտությունից ունեցած գիտելիքների խորացումը (փայտյա նյութերից անցնում են հիմնական հանքային նյութերի ուսումնասիրությանը): Վերջին հաշվով յերեխաները գաղափար են կազմում ժամանակակից տան, ժամանակակից քաղաքի, նոր քաղաքների շինարարության մասին: Այս բոլորի համար հատկացվում է մոտավորապես 15 ժամ:

Մեր ժամանակաշրջանի յերրորդ առանձնահատկությունն այն է, վոր նա մետաղի դար է: Յերեխաներն սկսում են աշխատել թեթև մետաղների վրա (թիթեղ, լար), սկսում են տարբերել իրարից գործածական մետաղները և ձեռք են բերում մետաղի մշակման ելեմենտար ունակություններ: Մետաղի վրա աշխատելով յերեխաները նկատում են, թե ինչպես նյութի ընդդիմադրության համեմատ փոխվում են նաև գործիքները (համեմատել փայտի մշակման գործիքները մետաղի մշակման գործիքների հետ). միաժամանակ նրանց մեջ սկսում է տպավորվել (առ ժամանակ տեսականապես դեռ չձևակերպված) մեխանիկական մշակման տարբեր գործիքների կապակցությունը: Յերրորդ տարում մետաղի վրա կատարվող աշխատանքների համար հատկացվում է մոտավորապես 20 ժամ:

Մեր ժամանակաշրջանի չորրորդ առանձնահատկությունն այն է, վոր նա ելեկտրականության դար է: Յերրորդ տարում յերեխաները ծանոթանում են մի քանի պարզ ելեկտրոտեխնիկական աշխատանքների հետ (լույսի և ելեկտրական զանգակի անցկացումը, հասարակ ռադիո-ընդունարանով ոգտվելը): Սրան հատկացվում է մոտ մի ամիս:

Տեկստիլ նյութերի վրա կատարվող աշխատանքները յերրորդ տարում խորացվում են՝ նյութագիտության գծով (հիմնական թելանյութերը, գործածական գործվածքները): Մտցվում է կար մեքենայի վրա: Ծանոթություն է տրվում նույնպես լըվացքի հիմնական պրոցեսների մասին: Այս ծանոթությունը հնարավորություն է տալիս համեմատելու ձեռքով կատարվող լվացքը մեքենայով կատարվող լվացքի հետ:

Յերեխաները հնարավորություն են ստանում նաև ձեռք բերելու մի քանի գիտելիքներ քիմիայից (ճարպերի լուծվելը):

Մնացած ժամանակը (մոտ քսան ժամ) ամփոփում, վերջացնում է տվյալ տարվա հիմնական թեման. յերեխաները գաղափար են կազմում պարզ, մի քանի վոչ բարդ մեքենաների աշխատանքի և դպրոցին կցված հիմնարկում տեղի ունեցող արտադրական պրոցեսի մասին: Այս բոլորը կոնկրետ բազա յե հանդիսանում այն տարրական մեքենայագիտության և արտադրության ուսմունքի համար, վոր չորրորդ տարվա աշխատանքների բովանդակության հիմնական մասն է կազմում:

Չորրորդ տարին սկսվում է նրանով, վոր ծանոթություն է տրվում ելեկտրոտեխնիկայի մասին (ելեկտրական հոսանք, ելեկտրական մագնիս, լուսավորություն, ռադիո): Ելեկտրոտեխնիկայից հետո աշակերտներին ծանոթություն է տրվում եներգիայի գլխավոր աղբյուրների մասին և մասնավորապես կանգ է առնվում վառելիքի ձևերի և արդյունահանման վրա: Այս բաժնից հետո, վոր կարելի յե անվանել «տարրական գիտելիքներ եներգետիկայից», աշակերտները ծանոթանում են արտադրության հիմնական ձևերի հետ: Այստեղ ուշադրությունը կենտրոնացվում է մետաղի մշակման վրա: Մի կողմից յերեխաներն արհեստանոցում խորացնում են յերրորդ խմբում ընկըսած մետաղի սառը մշակման ունակությունները, ծանոթանում են մետաղների տեխնիկական-հատկությունների հետ և սովորում են ոգտվել: Մյուս կողմից, նրանք ծանոթանում են մետաղագործական պրոցեսների հիմնական մոմենտների հետ և գաղափար են կազմում մետաղի տաք մշակման մասին (դարբնոցում): Խորանում է նաև փայտը մըշակելու ունակությունը և շարունակվում է յերրորդ խմբում սկսված փայտի մշակման ձևերի (ձեռքով և մեքենայով) համեմատությունը: Փայտի և մետաղի մշակման համար (հաշված նաև տեխնիկական գծագրության ելեմենտները) հատկացվում է մոտավորապես 50 ժամ:

Սրանից հետո ծանոթություն է տրվում տեկստիլ արտադրության մասին (նրա հիմնական բաժիններից յուրաքանչյուրի եյության ըմբռնումը): Ինչ վերաբերվում է քիմիական արտադրության, նրա հետ չորրորդ խմբի աշակերտները ծանոթանում են մի քիչ ուշ՝ տարրական մեքենայագիտությունից հետո և այն էլ միմիայն ընդհանուր

գծերով այն չափով, վորչափով անհրաժեշտ է հասկացողություն տալ քիմիական արտադրության մասին (գործիքների դերը, քիմիական փոփոխության եյությունը):

Դեռ յերրորդ խմբում յերեխաները գաղափար են կազմում մի քանի մեքենաների աշխատանքի մասին: Իսկ այժմ չորրորդ տարում, նրանք տարրական տեղեկություններ են ստանում ընդհանուր մեքենայագիտությունից: Ճիշտ այսպես էլ յերրորդ խմբում մոտակա հիմնարկի հետ կոնկրետ կերպով ծանոթանալուց հետո, չորրորդ տարում նրանք ամփոփում են իրենց ձեռք բերած տեղեկությունները և կոնկրետ գաղափար են կազմում այն մասին, թե ինչ է ժամանակակից գործարանը և ինչ է ներկայացնում իրանից ռացիոնալիզացիայի յենթարկված սոցիալիստական հիմնարկը:

Ուսուցման չորրորդ տարում՝ աշխատանքի դասերին յերեխաները տեղեկություն են ստանում արտադրության և այն բնական կապի մասին, վոր կա հասարակագիտության ծրագրի համապատասխան բաժինների և արտադրության մեջ: Մեքենայագիտության ելեմենտների հետ ծանոթացնելը և ինդուստրիալ հիմնարկի ուսմունքը կպահանջեն, մոտավորապես, 25 ժամ:

Չորրորդ տարվա յեզրափակիչ պարապմունքները նվիրվում են «Տեխնիկայի նշանակությունը» կոչվող ամփոփիչ թեմային: Այս թեման հաջորդաբար յերեք ուղղությամբ է մշակվում. 1) Տեխնիկայի ազդեցությունը մարդկանց վրա (պատմական ցուցադրումներ), տեխնիկայի ժամանակակից նվաճումները տրանսպորտում, զինվորական ասպարեզում և կյանքում, 3) Մեր տեխնիկական վերակառուցման նշանակությունը:

Հաշվի առնելով այն ռեալ պայմանները, վորոնց մեջ գտնվում է մեր տարրական դպրոցը, ծրագիրը նշում է աշխատանքի այնպիսի ձևեր (թուղթ, կավահող, ավազ, տեկստիլ նյութեր, փայտ, սառը մշակման մատչելի մետաղ) և դիտողության այնպիսի ոբյեկտներ (ջրաղաց, նորաշեն շենք, սղոցարան, աղյուսի գործարան, այլ ձեռնարկություն), վորոնք ընդհանրապես մատչելի յեն մասսայական դպրոցին: Սակայն պայմանների բազմազանության շնորհիվ, կարող է պատահել, վոր բոլոր դպրոցներն իվիճակի չլինեն կիրառելու աշխատանքի այս ձևերը և եկսկուրսիաների միջոցով ծանոթանալու այս բոլոր ոբյեկտների հետ: Այդ դեպքում պետք կլինի, իհարկե, կրճատել ձեռքի աշխատանքի ձևերը և կամ մեկը կամ մյուսը փոխել ուրիշ՝ տվյալ պայմաններին համապատասխան ձևով: Սակայն այս դեպքում կարևոր է, վոր հիմնական տեխնոլոգիական ընդհանրացումները, վորոնք ցույց են տրված ծրագրի մեջ, համենայն դեպս յուրացնեն յերեխաները, թեկուզ առանց համապատասխան պրակտիկ ունակությունների: Նմանապես այնտեղ, վորտեղ հնարավոր չէ յերեխաներին ծանոթացնել եկսկուրսիայի միջոցով, վերջիններիս փոխարինում է ուսուցչի պատմածը, իհարկե, համապատասխան ցուցադրումներով, վորպեսզի, բաց թողնելով վոչ եյական կոնկրետ մանրամասնությունները, յերեխաներն ստանան ընդհանուր պարզ գաղափար:

Վերջապես, աշխատանքի ծրագիրը հսկայական հնարավորություններ է տալիս ծանոթացնել յերեխաներին ռազմական տեխնիկայի ելեմենտների հետ (հեռագիր, հեռախոս, ռադիո, տանկ, ջրասույզ նավեր, դիրիժաբլ և այլն), ոգտագործելու յերեխաների աշխատանքը դպրոցական ռազմական անկյուն կազմակերպելու համար՝ պատրաստելով մի շարք ռազմական առորյայի իրեր (զանազան մոդելներ, աղեղներ, նետեր, գծաչափ քանոններ և այլն):

ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ

ԱՌԱՋԻՆ ԽՈՒՄԲ

1. Մկրատի և սոսինձի հետ վարվելու ունակություն: Սովորեցնել աշխատանքի ժամանակ ճշտապահ և մաքրասեր լինել:

Թղթի արտաքին նշանները՝ գույնը (գորշ, սպիտակ, սև, կարմիր, կապույտ՝ դեղին, վարդագույն, կապտագույն), փայլը, հաստությունը, հարթությունը և անհարթությունը:

Թղթի զանազան տեսակները (գրելու, փաթաթելու, ծխախոտի, ծծան և այլն) և հատկությունները: Լավ տեսակի գրելու թղթի հատկությունը (հարթությունը, անծծունությունը, անթափանցկությունը): Ուսուցչի զրույցը՝ թե ինչից է շինվում թուղթը—բնափայտային և կտորեղենի զանգվածից:

Թղթից զանազան տեսակի ուսումնական պիտույքներ (մատիտների և գրչակոթերի համար տուփեր, ծրարներ, տառեր—պլակատների համար, այբուբենական լոտո, ինքնագործ տետրակներ, շրջանակներ, շապիկներ—հաստ թղթից և այլն) և խաղալիքներ (աղավնիներ, նետեր, նավակներ, պտտող ջրաղացներ, պարաշյուտ և այլն) պատրաստելը։

2. Ծանոթություն տեկստիլ նյութից պատրաստված իրերի հետ (թել, պարան, բամբակ, թաղիք, ճոթ, գործվածք)։ Գաղափար առանձին գործիքների նշանակության մասին (սպիտակեղենի, ներքևի և վրայի շորերի, ամառվա և ձմեռվա շորերի համար)։ Կար անելով դեպի առաջ և դեպի հետ։

Պարան, շնուր և գոտի հյուսելու ունակություն։ Կոճկածակեր, կոճակ և շորին ըզգեստակալ կարելը և թաշկինակ ձևելը։

3. Խաղ—պարապմունքներ հրապարակում շինարարական նյութերով։

Խաղ—շինարարություններ բնական և շինարարական նյութերից՝—կավահողից, ավազից, ճյուղերից, քարերից, տախտակներից, դրվագաթերթից (фанера) և այլն։ Տնակների, ծածկույթների, վրանների, կամուրջների շինարարություն—բնական անտառանյութերից։ Կավահողից աղյուս պատրաստելը և նրա թրծումը։

Լաբորատոր աշխատանքներ՝ կավահողի, ավազահողի, քարի, նրանց հատկությունները, թրծումն և դեպի ջուրը ունեցած հարաբերությունների մասին հաղորդված տեխնոլոգիական գիտելիքների ամրապնդման համար։

Կավահողի հատկությունները—չոր և գնդաձև դրության մեջ ամուր ե, հեշտությամբ կարելի յե փոշի դարձնել, պղտորում ե ջուրը և ապա դանդաղ նստում ե ջրի տակը. Ջրի հետ միանալիս խմորում ե, վորին հեշտությամբ կարելի յե տալ այս կամ այն ձևը. չորանալիս՝—ամրանում ե և առանց ավազի խառնուրդի ճաքճաքում ե։ Կավահողը թրծելուց ամրանում ե և ջրի մեջ չի կակղում։

Ավազի հատկությունները. չոր դրության մեջ թափվող ե, իսկ խոնավ դրության մեջ քիչ մածուցիկ։ Մաքուր ավազը ջուրը չի պղտորում և արագությամբ նստում ե ջրի տակը. Թրծելիս հատկությունները չի փոխում։

Քարի հատկությունները. (ավազաքարի, աղյուսի). պինդ ե, ամուր և դյուրաբեկ (հարվածների ժամանակ փշրվում ե), հեշտությամբ միանում ե կավահողի հետ, ջրում չի թրջվում։

Ով ե շինում տունը (հյուսները, քարտաշները, ձեղունագործները, թիթեղագործները և այլն)։

Ինչից են շինում տունը (փայտ, քար, աղյուս, յերկաթ. ապակի և այլն)։ Ինչ են շինում փայտից (տներ, կահ-կարասիք, փոխադրության միջոցներ)։

Ինչ գործիքներով (անուններ) աշխատում են հյուսնը, ատաղձագործը, փականագործը։

4. Իմանալ հնգից վոչ պակաս փայտի մշակման հիմնական գործիքները (գայլիկոն, տովրիչ, սղոց, դանակ, մուրճ)։ Կարողանալ մեխ խփել և հանել։ Կարողանալ սղոցել, գայլիկոնով ծակել, տովրիչով հարթել, ներկել փայտը և կավահողը քարածխաներկով։

5. Գաղափար տալ այն մասին, թե ինչպես իրը հումույթից արտադրանք դառնալիս, մշակման մի քանի աստիճան ե անցնում (փայտ—թղթային զանգված—թուղթ կավահող—կավահողային զանգված—աղյուս. հացահատիկ—ալյուր—հաց. կտավատ—մանվածք—գործվածք—բլուզ)։ Ով ե աշխատել հացի վրա, վոր մենք ուտում ենք (գյուղացիք, ջաղացպանները, հացթուխը)։ Ով ե աշխատել այն շորերի վրա, վոր մենք հագնում ենք (գյուղացիք, մանողները, ջուլհակները, դերձակը)։ Գաղափար տալ հասարակական օգտակար աշխատանքի, պրոֆեսիաների բազմազանության և նրանց աշխատակցության մասին։ (Ուսուցչի և յերեխաների բերած օրինակներով)։ Ինչպիսի հասարակական օգտակար իրեր մենք արդեն կարող ենք պատրաստել։

Ինչպես են աշխատում մարդիկ (մենակ և կոլեկտիվ, բոլորը մի գործ են կատարում կամ աշխատանքը բաժանում են, ձեռքով և մեքենայի վրա)։

Կոլեկտիվ աշխատանքն ավելի արդյունավետ ե՝ աշխատանքի բաժանումով աշխատանքը ավելի արդյունավետ ե դառնում։ Մեքենան հեշտացնում և արագացնում ե աշխատանքը (այս ամենի մեջ համոզվել փորձով և յերեխաներին մատչելի օրինակներով)։ Եքսկուրսիաներ դեպի մարդկանց աշխատանքի զանազան վայրերը (հողի վրա, արհեստանոցում, գործարանում և այլն)։ Գաղափար գործարանի մասին, վորպես մի վայրի, վորտեղ բազմաթիվ և տարբեր մասնագիտության բանվորներ աշխատում են

տարբեր ցեխերում մեքենաների վրա և, վորպես նրանց ընդհանուր աշխատանքի հետեվանք ստացվում ե գործարանի արտադրանքը։ Յերեխաների ազատ ստեղծագործական աշխատանքները զանազան նյութերից՝ իրանց ընտրությամբ։ Յերեխաների աշխատանքները ստեղծելով «կոնստրուկտոր» № 1 (փայտյա և մետաղյա)։

6. ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ. Կարողանալ փափկացնել և հավասարեցնել հողը, ցանքսի համար ակոսներ քաշել, կարողանալ շարքերով ցանել բակլայի ցեղին պատկանող բույսեր. տնկել գետնախնձոր և սոխ։ Կարողանալ տնկել և ցանել պարզ ծաղկաբույսերի սերմեր և խնամել աճման ժամանակ։ Կարողանալ տարբերել բանջարանոցային բույսերի և ծաղիկների ծիլերը մոլախոտից։

Կարողանալ օգտագործել ծաղիկները բնակարանների, դպրոցական հողամասի և խմբի կանաչ անկյան բարեկարգության համար։ Կարողանալ հող պարարտել ծաղկամանների և արկղների համար, փոխադրել և ջրել բույսերը, բազմացնել սերմերով։ Կարողանալ արկղների մեջ աճեցնել ծաղիկների բույսեր՝ ծաղկանոցների և դպրոցական հողամասի համար։ Խնամել ծաղիկների բույսերը և հավաքել նրանց սերմերը։ Դիտել բույսերի զարգացումը։

Սերմերը բուսցնելու համար անհրաժեշտ ե տաքություն և խոնավություն. բացի այդ, բույսերի աճման համար անհրաժեշտ ե նաև լույս։ Հողի փափկացման և ջրելու նշանակությունը արկղներում արված ցանքսի համար։

Աշխատանք դպրոցական հողամասի վրա (ցանել և աճեցնել բանջարանոցային բույսեր և ծաղիկներ)։ Մասնակցել ծաղկանոցների և բանջարանոցների շարքերի պատրաստման աշխատանքներին։

7. ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ։ Կարողանալ կազմակերպել իր աշխատանքի վայրը։ Իմանալ գործիքների դասավորման կարգը պահարանում և սեղանի վրա։

Մաքուր պահել աշխատանքի տեղը և խնամքով վերաբերվել դեպի գործիքները։

Կարողանալ միասին միևնույն աշխատանքը կատարել։ Կարողանալ միասին աշխատել աշխատանքի պարզ բաժանման պայմաններում։

ՅԵՐԿՐՈՐԴ ԽՈՒՄԲ

1. Հասկացողություն ունենալ գործվածքի կազմության մասին (գործելը). կարողանալ կապել պարզ և զույգ հանգույցներ։ Կարողանալ աշխատել վոստայնանկի դազգյահի վրա (հասարակ միտկալի ներհյուսանք)։ Ձեռքով կարել (յերկու յերեք հիմնական կար)։ Ավելի մանրամասն, քան առաջին տարում, գաղափար տալ այն մասին, թե ինչպիսի աստիճաններ ե անցնում կտավատը կամ բուրդը մինչև շոր դառնալը (բայց առանց ծանոթություն տալու այդ աստիճաններից յուրաքանչյուրի եյության մասին)։ Ծանոթություն կար կարողի և դերձակի աշխատանքի մասին։

2. Կարողանալ թղթի և ստվարաթղթի վրա աշխատելիս կտրելու տեղերը նշաններ անել. դանակով կտրել թուղթը և ստվարաթուղթը։ Կարողանալ շոհ յեփել։ Կազմարարական կլեյնկորի կամ այլ կտորի միջոցով սոսինձով միացնել ստվարաթղթի յերկու կտորներ։

Ճանաչել ստվարաթղթի գործածական տեսակները և նրանց տեխնիկական հատկությունները՝ դյուրաբեկությունը, խտությունը, հարթ մակարդակը, դիմացկունությունը։ Հաստությամբ վորոշել ստվարաթղթի համարները։ Ինչպես ե պատրաստվում ստվարաթուղթը։

Կարողանալ ստվարաթղթից պատրաստել շապիկներ, տուփեր, ցնցվող խաղալիքներ («дергуны») և այլն։

3. ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ՇԵՆՔ։ Ինչպիսի բանվորներ են աշխատում այնտեղ և ինչ են անում նրանք։ Վորոնք են տան շինության հիմնական մոմենտները։ Ինչպիսի նյութերից ե շինվում շինության գլխավոր մասը (հիմքը, սխեմանները, կտուրը)։ Ելեմենտար ծանոթություն վառարանների կազմության մասին։ Ինչպես պահպանել տաքությունը տան մեջ և խուսափել ածխահոտից։ Իմանալ հրդեհների հաճախակի կրկնվող պատճառները, նրանցից խուսափելու միջոցները և թե ինչպես պետք ե պահել հրդեհների ժամանակ։ Ընդհանուր գաղափար կենտրոնական վառարանների սիստեմի մասին։ Այնտեղ, վորտեղ կա կենտրոնական վառարանասիստեմ, սովորեցնել վարվել ողանցքների, ջրմուղու, կանալիզացիայի հետ և հասկացնել, թե ինչու այսպես կամ այնպես պետք ե վարվել։

4. ԱՂՅՈՒՍԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ. Ով ինչ է անում այնտեղ (ելեմենտար հասկացողություն գործարանում աշխատանքը կազմակերպելու մասին): Ինչպես է պատրաստվում գործարանում կավահողը: Ինչպես է կատարվում աղյուսի կաղապարումը (ձեռքով և մեքենայով): Ինչպես են չորացնում աղյուսը: Ինչպես է նա թրծվում: Ինչով է տարբերվում թրծված աղյուսը չթրծվածից: Աղյուսի և ամանների կաղապարումը (կարողանալ չորացնել կաղապարած իրերը և փոքրիկ աղյուսներ):

5. Իմանալ փայտի մշակման համար անհրաժեշտ 10-ից վոչ պակաս գործիքներ (մուրճ, աքցան, զայլիկոն, տուրպիչ, սղոց, դանակ, դուր (стамеска), բութ մուրճ, (киянка), վոլորտ ծակիչ, ձեռնասղոց (нотевка): Իմանալ, թե ինչպես է պատրաստվում դրվագաթերթը (фанера)—սոսնձով կպցրած մի քանի թերթ, վորոնք դարսված են տարբեր ուղղությամբ: Կարողանալ սղոցել փայտի յերկարությամբ և թեք ուղղությամբ: Կարողանալ ձեռնասղոցով սղոցել դրվագաթերթ: Կարողանալ ոգտվել ջրապտույտով, դուրով ծակել փայտը և ներկել այն: Կարողանալ քերիչով հարթել խորդուբորդությունները: Կարողանալ ոգտվել քանոնով և անկյունաչափով: Փայտի վրա աշխատելիս կարողանալ բնական մեծությամբ գծագրել հասարակ ձևեր: Տեխնիկական գծագրության՝ ստվերագիծ, սեփական նախագծերի ուրվագծեր:

6. Ջրաղացների ձևերը (ձեռքի, քամու և այլն): Գաղափար տալ շարժիչի մասին և շարժիչ ույժերի զանազան ձևերի համեմատական գնահատությունը (մարդ, ձի, քամի, ջուր, շոգի): Գաղափար ջաղացի մասին, վորպես լիակատար ավտոմատի: Հաղորդող մեխանիզմի դերը ջրաղացում: Ինչպես հացահատիկը ջրաղացում դառնում է ալյուր (հիմնական մոմենտները՝ զատումը խառնուրդներից, կեղևել (лущение), աղալը, աղունի արտադրանքի զատումը): Ինչպես է պատրաստվում խմորը (ընդհանուր գծերով): Ինչպես են թխում հացը: Ցեթե հնարավոր է՝—եքսկուրսիա կազմակերպել դեպի հացի գործարանը նրա հիմնական բաժինների մասին ընդհանուր ծանոթություն ստանալու համար: Ինչպես է պատրաստվում յուղը: Ինչպես է պատրաստվում ուտելիքը (ապուր յեփելը, միս տապակելը): Գաղափար գործարան-խոհանոցների մասին:

7. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ. Բանջարաբուծական աշխատանքը դպրոցական հողամասում: Սերմերի ցանելը, նորածիլ բույսերի տեղափոխումը, քաղհանը, ջրելը: Կարողանալ վորոշել բանջարանոցային սերմերի ծլունակությունը ծլեցման միջոցով: Բույսերի նոսրացումը: Բանջարանոցային բույսերի խնամումը նրանց աճման ժամանակ (ջրելը, նոսրացնելը, քաղհանը, հողի փխրեցումը): Կարողանալ ոգտվել բահով, փոցխով, բրիչով, ցնցուղով: Կարողանալ պայքարել մոլախոտերի և վնասատուների դեմ՝—թրթուրների հավաքումը, մոլախոտերի վոչնչացումը և այլն: Կարողանալ պահպանել բանջարանոցային բույսերը ցրտից:

Բույսերի նոսրացման նշանակությունը: Փոխադրման (пикировка) և մաղարմառները խուզելու նշանակությունը: Մոխրի նշանակությունը վորպես պարարտանյութ:

Ցերեխաների և մեծահասակների աշխատանքի կազմակերպումը: Ուսուցման յերկրորդ տարում յերեխաները ձեռք են բերում ռացիոնալ և կոլեկտիվ կերպով աշխատելու ունակությունը: Պատրաստել աշխատանքի համար անհրաժեշտ իրերը, պահպանել կանոնավոր դիրք և հասնել ըստ հնարավորության բարձր վորակի արտադրանքի: Մշակել ներքին կանոնադրություն կոլեկտիվ աշխատանքի համար, հաշվետվություն անել իրենց աշխատանքի մասին, կարողանալ կատարել մառանապետի պարտականությունները, բաց թողնել և ընդունել գործիքներ և նյութեր, ոգտվել այս նպատակի համար հրահանգ-կանոնադրությամբ:

Ծանոթանալ վոչ միայն արտադրական պրոցեսի հետ, այլ և բանվորների աշխատանքի—ինչ են անում նրանք, ինչպես են նրանց աշխատանքի պայմանները (թեթև, դժվար, վտանգավոր) և ինչպես է պաշտպանվում նրանց աշխատանքը (խորհրդային իշխանության ընդհանուր միջոցառումները աշխատանքի պաշտպանության նկատմամբ): Սոցիալիստական վերաբերմունք դեպի աշխատանքը: Ով է լավագույն և առաջավոր բանվորը:

9. Թեթև իրերի պատրաստումը—խաղալիքներ (գնդակներ, փայտի ամաններ, սահնակներ, ձյան չմուշկներ, ջրաղացներ, նավեր. շոգեշարժեր, այերոպլաններ և այլն), ուսումնական պիտույքներ (տետրեր, ստվարաթղթե ժամացույց՝ շարժական սլաքով և հռոմեական թվանշաններով և այլն): Գյուղատնտեսական սարքավորում (որինակ՝ փայտյա ծանրիչներ, ետիկետներ,—սերմնաբույսերի և տունկերի համար, փայտյա փոքրիկ հեցուկներ—բույսերի մոտ տնկելու համար, փայտյա արկղներ—սերմնաբույսերի և արմատիքների

համար, թռչունների և ճագարների կերակրելու, փայտյա ամաններ և այլն), շինել զանազան տնտեսական իրեր (հայտարարության տախտակներ, աղբարկղներ, պայուսակներ, հողաթափներ—ֆիզկուլտուրայի համար, շորեր կարկատել, յերեսսրբիչ կարել և այլն): Աշխատանք № 2 «կոնստրուկտորով» (աշխատանքի առաջին համարները):

ՅԵՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ

1. Իմանալ, թե բույսի վոր մասից է ստացվում թելը (բամբակի պտուղը, կտավատի կճեպը և այլն) և ինչումն է կայանում կտավատի նախնական մշակումը (թրջելը, լվանալը, գզելը): Տարբերել հիմնական հյուսվածքային նյութերը (կանեփ, կտավատ, բամբակ, բուրդ, մետաքս) ըստ արտաքին տեսքի, շոշափելով, վառելու և թթուներով ազդելու միջոցով. ըստ տեսքի տարբերել ավելի դյուրընթաց գործվածքները (չիթ, սաթան, կտավ, բոմբասին, դրապ, բոմազեյ, մահուդ, տրիկո): Ինքնաշարժ ճախարակի վրա ծանոթացնել մանելու գործողության հետ՝ միմիայն նրա համար, վոր յերեխան հեշտությամբ հասկանա, թե ինչպես է աշխատում մանող մեքենան: Կարողանան թելից (шпагат) ցանցեր հյուսել: Չափ առնել, ձևել և մեքենայի վրա կարել պարզ իրեր: Կարողանալ մաքրել և յուղել կարի մեքենան: Իմանալ, թե ինչպես պետք է վարվել մեքենայի հետ, վոր չփչանա: Լվացքի հիմնական պրոցեսները (թրջելը, յեփելը, լվանալը, հարթուկելը) և ձեռքի լվացքը համեմատել մեքենայի լվացքի հետ: Ինչպես են մաքրում գործվածքի վրայի յուղոտ բծերը (յուղի լուծվելը սապոնի, բենզինի և սպիրտի ազդեցությունից):

2. Սղոցարան (ուշադրություն դարձնել գերանների մատակարարման և սղոցող շրջանակի աշխատանքի վրա՝—աշխատանքի մեքենայացումը հասկանալու համար, ինչպես և սղոցարանի շարժիչի, նրա տեղի ընտրության և մնացորդների արտադրողական ոգտագործման վրա): Ցեթե հնարավոր է, եքսկուրսիա կատարել դեպի ատաղձագործական արհեստանոց կամ փայտի մշակման գործարան՝ դիտելու փայտի մշակման աշխատանքի մաքսիմալ մեխանիզացիան:

Իմանալ ծառի կազմվածքը (կեղևը, տարեկան շերտերը, վոստերը և նրանց ազդեցությունը շերտերի դասավորման վրա, վոստերի ախտերը), վոստոտությունը, փըտելը, ճեղքվածքները: Ըստ գույնի և շերտերի դասավորության տարբերել ծառերի 5 հիմնական տեսակները (կաղնի, ցարասի, յեղևնի, շամի, թմբի (липа): Իմանալ մեխերի չափերը և տեսակները: Կարողանալ խարարուզել փայտը խարարուզով: Կարողանալ սղոցել շրջադարձ (поворотная пила) սղոցով, կատարել փայտի կտորների T-անման և Г-անման միացումներ հասարակ սեպերով: Կարողանալ վորոշել գործիքների պետքականությունը տվյալ աշխատանքի համար: Կարողանալ դանակ սրել: Կարողանալ իր տեղը դնել խարրուզի դանակը: Փայտի ստոճանական արտաքսումը շինարարական գործից (գյուղը և քաղաքը): Եքսկուրսիա դեպի նորակառույց քարաշեն շինությունը (ուշադրություն դարձնել այնտեղ կատարվող, ավելի աչքի ընկնող յուրահատուկ աշխատանքների վրա, մասնավորապես աշխատանքների մեխանիզացիայի վրա): Տարբերել յերեք հիմնական հանքային նյութերը (գրանիտ, կրաքար, ավազաքար): Ծանոթություն տալ կրի և նրա ջրի նկատմամբ ունեցած հատկությունների մասին և թե ինչպես կիրը կապակցում է իրար հետ հանքային շինարարական նյութերը: Կարողանալ պատրաստել ցեմենտի լուծույթ: Գաղափար տալ ժամանակակից բոլոր հարմարություններ ունեցող տան և զարգացող նոր կենցաղի մասին (տուն-կոմունա):

3. Ինչ է նշանակում քարե և յերկաթե դար: Ինչու համար մեր որերն յերբեմն անվանում են պողպատի դար: Ինչու համար մեր որերը կոչում ենք ելեկտրականության դար:

4. Կարողանալ զանազանել մետաղները (յերկաթ, պղինձ, կապար, անագ, ցինկ, ալյումին): Կարողանալ ընտրել տրված նպատակի համար համապատասխան մետաղը: Կարողանալ ճշգրտորեն և տնտեսաբար փոխադրել մետաղաթերթի վրա զանազան ձևեր: Կարողանալ ծռել, կտրել և ծակեր ծակել թիթեղի վրա: Կարողանալ ծռել ծայրերը կարերի և բոլորքի համար, ծայրերը դարձնել մուրճի և համապատասխան գործիքների միջոցով: Կարողանալ բանացնել թիթեղ կտրելու մկրատը: Կարողանալ կտրիչով կտրել մետաղալարը, ծռել ծայրը տափակակտուց և կլորակտուց աքցաններով: Կարողանալ զոդումներ կատարել անագով: Հասարակական

տեխնիկական նկարների ընթերցումը և ծանոթություն տեխնիկական պայմանական նշանների մասին (չափ, նյութ և այլն)։ Ուղղանկյուն պրոյեկցիայի աշխատանքի նկար (տեսքը առաջից և հետևից)։

5. Էլեմենտար կոնկրետ պատկերացում այն մասին, թե ինչպես են աշխատում յերկու յերեք վորոշ մեքենա (որինակ՝ կարի, մանելու, հեծանիվ, պարզ և անվտանգ գյուղատնտեսական մեքենաներ։

Աշխատանք մի յերկու մեքենայի վրա։ Աշխատանք № № 2 և 3 «Կոնստրուկտորների» վրա։

6. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ. Կարողանալ բաժանել հողամասը բաժինների և ածուների։ Պատրաստել ածուներ և գործադրել պարարտանյութեր։ Սերմի պարունակների փոխադրումը, խնամումը և սերմի հավաքումն ու ընտրումը։ Կարողանալ փոխադրել հողի մեջ կաղամբի և պամիդորի շիթիլը։ Կարողանալ կազմել աշխատանքի պլանը և կանոնավոր կերպով կազմակերպել խմբի աշխատանքը բանջարանոցում։ Աղբային պարարտանյութի նշանակությունը հողի կազմության և բույսերի սնդի համար։ Պարարտանյութերից վորոնք են անմիջապես ներգործում և վորոնք՝ մի տարուց հետո։

Իմանալ, ինչպես է աշխատում գութանը, կուլտիվատորը, թոխը (ОКУЧНИК), կարտոֆիլահանը և ինչպես են նրանք կազմված, նրանց արտադրողականությունը՝ համեմատած ձեռքի աշխատանքի հետ։

Իմանալ խորհրդային իշխանության հիմնական միջոցառումները բանջարաբուծության զարգացման համար (ցանքատարածների ընդլայնումը, բերքի բարձրացումը, բանջարանոցային տնտեսության մեծացումը, մեքենայացումը, կոլեկտիվիզացիան և մերձքաղաքային բանջարաբուծական տնտեսության զարգացումը)։

Քաղաքի կանաչ հրապարակների ընդլայնման աշխատանքը, մասնակցել փողոցների, քաղաքային պարտեզների, կոլտնտեսությունների, խորհտնտեսությունների ծառատունկին։ Անտառային ծառատեսակների սերմերի հավաքումը և նրանց սերմանումը տնկարաններում։

7. ԿԵՆԴԱՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ. Աշխատանք դպրոցական թռչնանոցում և ճագարանոցում։ Կարողանալ կատարել հետևյալ հիմնական աշխատանքները. չենքի մաքրումը, թռչունների և ճագարների կերակրելը, ջրելը և ընդհանրապես նրանց խնամումը։ Կարողանալ հավաքել և պատրաստել ուտելիք (յեղինճ, մայիսյան բզեզներ, ածուխ, կավիճ) և իմանալ, թե ինչու համար և ինչպես պետք է անել այդ։ Կարողանալ շինել հավերի համար, կերակրաման, ջրաման, թառ և իմանալ մաքուր պահել նրանց։ Իմանալ թե ինչպես են ձագուկները հանում ինկուբատորով և մեծացնում նրանց բրուդերի միջոցով (կատարել եքսկուրսիա)։ Իմանալ, ինչպես պետք է կռվել թռչունների պարազիտների դեմ (մոխրային վաննաներ)։ Կարողանալ պահել հավերի ձվատվության հաշիվը։

8. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ։ Ընդհանուր գաղափար դպրոցին կցված հիմնարկի արտադրական պրոցեսի մասին,—ինչպես է կատարվում այնտեղ աշխատանքի բաժանումը ըստ ցեխերի։ Ինչպես է անցնում բանվորի որը հիմնարկում (աշխատանքի գալը, աշխատանքի որացույցը, նյութի և գործիքների հանձնումը, աշխատանքը դազգյահի մոտ, հանգիստը, աշխատանքի վերահսկողությունը, արտադրանքի ընդունելն և խոտանումը, աշխատանք վերջացնելը)։ Ինչպես և ինչու համար է անցկացվում սոցմրցումն ու հարվածայնությունը, հասարակական բուկսիրը։ Ինչպես է պայքար մղվում խոտանքի և գործալքումների դեմ։

Կարողանալ աշխատել առաջադրություններով։ Կարողանալ ընդունել և խոտանել ընդունող հանձնաժողովի աշխատանքը։ Կարողանալ կատարել բրիգադիրի պարտականություններ։ Կարողանալ պլանավորել յուր աշխատանքը բրիգադում։

ՉՈՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ

1. Էլեմենտար հասկացողություն ելեքտրական հոսանքի մասին։ Ինչպես ստանալ տեղական հոսանք (էլեմենտներից և դինամո-մեքենաներից)։ Հասարակ գալվանական էլեմենտների կազմությունը։ Լեյդեն և չոր էլեմենտներ։ Էլեմենտների մարտկոցներ։ Կարողանալ միացնել էլեմենտները զուգահեռաբար և հաջորդաբար։ Կարողանալ կարդալ վոլտմետրի ցուցումները։ Ծանոթություն ելեկտրական մագնիսի մասին։ Հեռագրի կազմությունը, ձայնական և զանգային հեռախոս, կարողանալ անցկացնել ելեքտրական զանգ։ Գտնել և վերացնել ելեքտրական զանգի բացահայտ փչացումների պատճառները։ Տարրական ծանոթություն ելեկտրական լուսավորության մասին (ելեքտրալար,

շտեպսել, արձակիչ, պաշտպանիչ, լարեր, ապահովիչ խցան)։ Կարողանալ հարմարեցնել և գնել պարզ լարերի ռադիո ընդունարան։ Ինչպես տեղավորել լարերը, ինչպես ոգտվել բեռատառով։ Կարողանալ բռնել հեռավոր բարձրաձայն ռադիոկայանի ձայնը։ Ինչն է կոչվում կոնդենսատոր։ Ինչի յե ծառայում տրանսֆորմատորը։ Ինչպես է ստացվում տրանսֆորմատորը։ Ինչպես է ստացվում ելեկտրականությունը (եքսկուրսիա դեպի ելեքտրոկայանը)։ Ինչի համար ձգտում են դեպի ելեքտրոֆիկացիա։

2. Էներգիայի գլխավոր աղբյուրը (վառելիք, ջուր, քամի)։ Ընկնող ջրի և քամու ույժի ոգտագործումը։ Վառելիքի տեսակները (ածուխ. նավթ, փայտ, տորֆ)։ Քարածխի և նավթի ծագումը։ Գաղափար այն մասին, թե ինչպես են արդյունահանվում նրանք։ Նավթից ստացվող հիմնական պրոդուկտները։ Ցերկաթահանքի արդյունահանությունը։ Մետաղագործական պրոցեսի հիմնական մոմենտները (չուգունի ձուլումը հալոցային վառարաններում, նրա վերամշակումը, յերկաթի և պողպատի գլանումը, դրոշմումը)։ Իմանալ մետաղների հիմնական տեխնիկական հատկությունները (կռելիությունը, կարծրությունը, խտությունը, յերկաթի գույնը տաքացման ժամանակ)։ Զանազանել մետաղները։ Յերկաթի բարակ շերտերի խարտոցումը։ Կարողանալ կլպիչի միջոցով զոդել։ Գաղափար դարբնոցի աշխատանքի մասին (ինչպես են շինված քուրան, սալը և մուրճը)։ Ընդհանուր հասկացողություն այն մասին, թե ինչպես է կատարվում շիկացումը, զոդումը և կռումը։ Համեմատել մետաղի մշակման ձեռքի գործիքները փայտի մշակման համապատասխան գործիքների հետ։

3. Կարողանալ խարաբուզել կիսախարաբուզով։ Կարողանալ ոգտվել կարկինով, ռեյսմուսով և այլն։ Պտուտակահանով մտցնել և հանել պտուտակաձև մեխեր։ Միջանցիկ և ուղիղ սեպերով և պտուտակներով միացնել փայտի կտորներ։ Իմանալ փայտի և մետաղի միացման հասարակ միջոցները։ Կարողանալ խծուծել, յուղաներկով ներկել և վեռնիշել։ Կարողանալ սրել խարաբուզի դանակը։ Կարողանալ կարդալ աշխատանքի գծանկարներ։ Հասարակ յերկրաչափական մարմինների գծագրումը՝ խորանարդ, բուրգ և այլն։ Գծումների հասարակ ստվերագծերից գծագրել՝ ցույց տալով մասշտաբը, չափը և այլն։ Գաղափար կազմել շրջանակային և կլորող սղոցի և խարաբուզող և ճախարակային դազգյահների մասին (ինչ աշխատանք են կատարում նրանք)։ Նրանց հիմնական մասերի անունները և նշանակությունը։

4. Մեքենայի յերեք հիմնական մասերը (շարժիչ, հաղորդիչ մեխանիզմ, աշխատող մեքենա)։ Շարժիչ ուժերի համեմատական գնահատումը (մարդ, ձի, ջուր, շոգեմեքենա, ներքին այրման շարժիչ, ելեքտրոմատոր)։ Տարբեր (ծանոթ) մեքենաների համեմատությունը, նայելով այն բանին, թե ինչպես են նրանք արագացնում և հեշտացնում աշխատանքը։

5. Ծանոթություն կաթսաների արհեստանոցի մասին։ Կաթսայի հիմնական մասերի անունները և նշանակությունը։ Կաթսաների արհեստանոցում գործածվող վառելիքը։ Ինչպես է ջուրը թափվում կաթսայի մեջ (ծանոթություն մղիչ մեքենայի մասին)։ Ինչպես է բարձվում վառելիքը։ Հիմնական չափող գործիքների նշանակությունը և անունները։ Ջրաչափ ապակի, ողաչափ։ Ինչ է անում հնոցպանը։ Ինչի համար է ծառայում հաղորդիչ մեխանիզմը (կանոնավորում է շարժումը, փոխադրում և բաշխում է այն գործակատար մեխանիզմի զանազան մասերի մեջ)։ Կաշվե շղթայի, ատամնավոր և վորդանման հաղորդիչների տարբերությունը։ Շարժիչ գլանակների, տրանսմիսիոն շարժիչների, աշխատող և դատարկ շարժվող փոկանիվների նշանակությունը։

6. Աշխատող մեքենան, վորպես ձեռքի գործիքի այլաձևություն (ծակող, խարաբուզող և ճախարակային դազգյահներ)։ Ցույց տալ թե ինչպես է մի բարդ մեքենան կատարում բազմաթիվ գործողություններ (ցույց տալ կոնկրետ որինակներ)։ Ինչպես է շինվում մեքենան (նկարը, մոդելը, ձուլումը, կռումը և մեքենայի մասերի վերջնական կանոնավորումը)։ Տարրական գաղափար փոխադրող մեքենաների մասին (բարձրացնող, փոխադրող)։ Կարողանալ աշխատել առնվազն յերկու մեքենայի վրա, որինակ, շինվում գործարանը. հումույթի, վառելիքի և այլ պայմանների նկատառում։ Գործարանի տիպը, տեղի ընտրությունը, զանազան բաժինների և ցեխերի տեղավորումն ու ելեկտրոէներգիայի մատակարարումը։ Բարձրացնող և փոխադրող միջոցները։ Ծանոթություն մեր հսկա գործարաններից վորևե մեկի մասին։ Մասսայական արտադրության ռացիոնալ կազմակերպումը (մեքենայացում, ստանդարտիզացիա, կոնվեյեր)։ Սոցիալիստական և կապիտալիստական արտադրական ձեռնարկությունների տարբերությունը։

7. Ընդհանուր կոնկրետ ծանոթություն մանածագործարանի մասին: Որոնք են մանածագործական արտադրության հիմնական մոմենտները: Գործվածքների վերջնական ավարտումը, սպիտակացումը, ներկումը, նախշումը): Կարողանալ ներկել գործվածքը անխաներկով:

8. Քիմիական արտադրության հիմնական տարբերությունը մեխանիկականից (ապարատների դերը, նյութի քիմիական փոփոխությունը—բացատրել թեկուզ օսլայի, մեղրի վերամշակումների օրինակով:

9. Պատմականորեն ցուցադրել, թե ինչպես էր անդրադառնում մարդկանց կյանքի վրա այս կամ այն խոշոր տեխնիկական գյուտը: Ինչպես է կատարվել շոգեմեքենայի, շոգենավի, շոգեշարժի, էլեքտրաքարշի, այերոպլանի և ավտոմոբիլի գյուտը և ինչպես են աշխատում նրանք: Ինչպես վարվել գրամաֆոնի հետ: Ինչպես են տպագրում լրագրերը: Տրակտորի նշանակությունը՝ նրա գլխավոր մասերի անունները և նշանակությունը: Ինչ է կոմբայնը: Պատմել տեխնիկայի հսկայական նվաճումների մասին՝ հողագործության, արդյունաբերության, ռազմական գործում և կենցաղում: Ինչ նշանակություն ունի տեխնիկական վերակառուցումը մեր արդյունաբերության մեջ: Բանվորական մասսաների արտադրական ձեռներեցությունը ԽՍՀՄ-ում և նրանց տեխնիկական և կազմակերպչական գյուտարարությունը:

10. Գյուղատնտեսություն: Կարողանալ որոշել հողի կազմությունը մեխանիկական անալիզի միջոցով: Կարողանալ կազմակերպել բանջարանոցային մշակույթների և պարարտանյութերի փորձադաշտ:

Իմանալ, թե ինչպիսի գործիքներով և ինչպես են մշակել մարդիկ հողն առաջ և ինչպիսի գյուղատնտեսական գործիքներով և մեքենաներով են մշակում այժմ: Կարողանալ վարվել շարքացան մեքենայի հետ՝ կանոնավորել ցանքսի խտությունը և ցանվող սերմերի խորությունը: Բանվորների ղեկավարությամբ կատարել փորձնական ցանքս: Իմանալ՝ ինչու համար ձեռնտու չէ շարքացանով ցանելը: Կարողանալ վարվել ձեռնաքարշ փոցխի հետ: Կարողանալ աճեցնել, մեծացնել, զորացնել և տնկել խնձորը: Կարողանալ զտել սերմը և իմանալ, թե ինչի համար է այդ արվում: Իմանալ, թե ինչ աշխատանքներ է կատարում տրակտորը կոլտնտեսությունում, խորհտնտեսությունում՝ ինչ հիմնական մասերից է բաղկացած նա, նրանց անունները և նշանակությունը:

Իմանալ, թե որտեղից են ստանում կոլտնտեսությունները և խորհտնտեսությունները գյուղատնտեսական մեքենաներ և ուր են ուղարկում իրենց արտադրանքը: Իմանալ և հասկանալ խորհրդային իշխանության հիմնական միջոցառումները դաշտավարության զարգացման համար:

11. Աշխատանքը պտղատու պարտեզում: Աշակերտները պետք է իմանան, թե ինչ խնամք են պահանջում պտղատու ծառերը և ինչ է անում պարտիզպանը պտղատու պարտեզում: Նրանք պետք է կարողանան կտրել պտղատու ծառերի չորացած ճյուղերը, մաքրել կեղևը, հավաքել թիթեռնիկների բները, ծառերի վրա շինել թակարդ—օղակներ վնասատուների համար և իմանալ, թե ինչու համար և ինչպես պետք է կատարել այդ աշխատանքն ավելի ռացիոնալ կերպով:

Կարողանալ փորել պտղատու ծառերի և թփերի արմատների շուրջը: Կարողանալ տնկել նոր պտղատու թփեր:

Կարողանալ հավաքել պտուղները, բաժանել տեսակների, դարսել արկղներում, պահպանել և իմանալ, թե ինչպես կարելի յէ այս բոլորը կատարել ավելի ռացիոնալ կերպով: Ծանոթ լինել Միչուրինի գլխավոր աշխատանքներին այն մասին, թե ինչպես կարելի յէ ստանալ պտղատու ծառերի նոր տեսակներ:

12. Աշխատանքը դպրոցական ջերմանոցում: Իմանալ ինչպես է պատրաստվում ջերմանոցը: Կարողանալ կատարել հիմնական աշխատանքները (ջերմանոցի մեջ աղբ և հող լցնելը, ջերմանոցային մշակույթների ցանքսը և տնկումը) և իմանալ, թե ինչու համար և ինչպես է արվում այս բոլորն ավելի ռացիոնալ կերպով: Ջերմանոցային մշակույթների խնամքը՝ նրանց աճման շրջանում:

13. Դաշտաբուծություն: Իմանալ, թե որ հացահատիկային և տեխնիկական մշակույթները գերազանցապես մշակվում են տվյալ են ռայոնում. կարողանալ նրանց տարբերել (սերմերը, ծիլերը, ծաղկելու ժամանակ):

Իմանալ հիմնական դաշտային մշակույթների տնտեսական օգտագործումը (հացահատիկային—ցորեն, հաճար, գարի, վարսակ, և այլն և տեխնիկական—կտավատ, կանեփ, արևածաղիկ, շաքար, ճակնդեղ, բամբակ):

14. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Իմանալ տասից ոչ պակաս տեխնիկական գրքեր և կարողանալ օգտվել նրանցով աշխատանքի ժամանակ: Կարողանալ կազմել իր բրիգադի աշխատանքների դեկադային պլանն ու կարգադիրը: Կարողանալ մշակել ինստրուկցիա մյուս բրիգադների հետ միասին աշխատող բրիգադի համար: Կարողանալ պարզ աշխատանքների համար հրահանգներ տալ (այնպիսի աշխատանքի, որ ինքն արդեն կատարել է): Կարողանալ կազմել հրահանգչական կարտ: Կարողանալ հաշվետվություն անել բրիգադի աշխատանքների մասին:

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՑՈՒՑԱԿ ԱՅՆ ԻՐԵՐԻ, ՈՐՈՆՔ ԿԱՐԵԼԻ ՅԵ ՊԱՏՐԱՍՏԵԼ 3-ՐԴ ՅԵՎ 4-ՐԴ ԽՄԲԵՐՈՒՄ

1. Գյուղատնտեսական սարքավորում (ճագարների և թռչունների ջրամաններ, մանր կենդանիների և թռչունների վանդակներ, հավի թառ, թռչունների բներ, ցանցեր ճագարների համար, շարժական ջերմանոցներ, կաղամբի տնկանոցներ և այլն. բահեր, փոցխեր, հնձելու մեքենաներ, հողը փխրացնելու և քաղհան անելու բրիչներ և այլն):

2. Տնտեսական իրեր՝ փոքրիկ պահարաններ, դարակներ, զգեստակալներ, նամակների արկղներ, կրակի խառնիչներ, ածխի ունելիքներ, դռների կարթեր, հարթուկի և թեյամանի հենարաններ, թիթեղյա տուփեր, յերկաթյա տապակարաններ, թիթեղյա ձագարներ, սապոնի ամաններ, տրուսիկներ, բլուզներ, շրջազգեստներ և այլն:

3. Լաբորատորական պարագաներ՝ փայտյա պատվանդաններ, կասկարաներ (մետաղյա լարից կամ թիթեղի շերտերից, փորձանոթների պատվանդաններ, հողի անալիզ) գործիքների պատվանդաններ, հականերգործիչ նյութերի կաթիչներ, ձագարներ (շշերից) յերկաթյա տապակարաններ հող տաքացնելու համար, բուսաբանական ճնշիչներ մետաղյա լարերի հյուսվածքով, ջրի գոլորշիացումը որոշող գործիք, թիթեղյա ռեֆլեկտոր, ուղղանկյունագիծ, հասակաչափ, անձրևաչափ, հողմացույց:

4. Շարժվող մոդելներ՝ մղիչ, հողմային, ջրային և պարզ շոգեշարժ շարժիչներ: Տրանսմիսիայի մոդելներ: Պարզ մեքենաների, սավառնակների և հեծանիվների մոդելներ և այլն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հ. Կ. Ցերկ. լուսբաժնի ուս.—մեթոդ. սեկտորի կողմից 2
2. Ներածություն 3
3. Ֆաբրիկա-գործարանային յոթամյակի ստորին խմբերի (1—4 խմբեր) և գյուղական տարրական դպրոցի հիմնական պլանը 9
4. Հասարակագիտության ծրագիր 11
5. Աշխարհագրություն 35
6. Մաթեմատիկայի ծրագիր 41
7. Բնագիտության ծրագիր 47
8. Պոլիտեխնիկական աշխատանքային պատրաստության ծրագիր 65

Ответственный редактор М. О. Пирумян
Технический редактор Г. М. Маркарян

№ 2273

АУ-63

Сд. в набор 15/III—1932 г.
Сд. в печать 23/IV—1932
Об'ем 4 печ. листа
Тираж 1000 экз.

Уполкрайлита № 1282. Газ.-кн. тип. СККПО. Статформат Б5 176X250. Заказ № 1449
Гор. Ростов на Дону.

20047

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0055670